

491.99(09)

U-24

Ա Զ Դ Ե Ր Ե Ւ Թ Ա Տ Վ Ե Ր Ա Ր Ա Ն

Հ Յ Ո Ւ Թ Ա .

ՑՈՒՆԱԲԱՆ ԴՊՐՈՑԸ

Ե Ւ

ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

ՔՆՆԱԿԱՆ Ա Խ Ա Տ Մ Ա Խ Ա Տ Ր Ա Խ Ա Թ Ի Ւ Խ

Դ Ր Ա Յ

Յ Ա Կ Ո Բ Մ Ա Խ Ա Ն Դ Ե Ա Խ

ԿՐՈՒ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



Ա Հ Ե Ն Ա Ա

Ա Խ Ա Տ Թ Ա Բ Ի Ե Ա Ն Ե Տ Գ Բ Ա Ն

1928

491.99(09)
U-24

24 APR 2010
04 MAY 2010

ՅՈՒՆԵՐԵՆ ԳՎՐՈՅԵ

ԵՒ

ՆՐԱ ԶԵՐԴՑՑՄԱՆ ՅՐՁԱԿԱՆԵՐԸ

24.06.2013

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ.

ՅՈՒՆԱԲԱՆ ԴՊՐՈՑԸ

ԵՒ

ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ



Վ Ե Ն Ա Ա

ՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՆ ՏՊՐՈՑԸ

1928

Ա. Ս. Խ. Հ. Ակադեմիայի Գրադարան

28-Ե - 1929թ.
Եղիշե.

Յ. Տառեցյան

431.99(03)

Մ-24 ՅՈՒՆԱԲԱՆ ԴՊՐՈՑԸ
աւ Ե

ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

ԳԵՂԻՆԱԿԱՆ ԱՆԴԱՆԵՐՆԵՐՆ ԹՎԱԿԱՆ

ԴՐԵՅ


ՅԱԿՈՒ ՄԱՆԱԿԵԱՆ

ՊՐԻ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՏԵՎԱՆ ՀԱՐԱՎԱՐԵՐՆ



92/5

Գ Ի Ե Ն Ա Ա



1928

ՅՈՒՆԵՐԵՆ ԴՊԻԱՑ

174

ՆՐԱ ԶԵՐԴԵՑՄԱՆ ԺՐՋԵՆՆԵՐԸ

Ն Ե Բ Ա Ժ Ա Խ Թ Ի Խ Կ Կ

§ 1. Յանաբան դպրոցի այլառի էնթեր
համար այլըն առաջարկութեալ: — Մեր հին մա-
տենագրութեան մուլթ ու խրթին առեղծուածն
է կազմակերպութեան դպրոցի ու լեզուի ծագ-
ման եւ զարգացման խնդիրը:

Մինչեւ այժմ՝ ըստած բանասէրների գործ
դրած բոլոր ջանքերին, անհնար չեղել գելթ
մօտաւորապէս օրոշել, թէ երբ, որտեղ եւ ինչ-
պիսի պարագաներում ծնևնդ է առել ու
հետզհետէ կազմակերպութել յունարան ու զզու-
թիւնը եւ լեզուն, որն իր յատուկ ու բնորոշ
տեղն ունի հայոց հին մատենագրութեան մէջ:

Հայ մատենագրական աւանդութիւնը, որին
երկար ժամանակ անվերապահուէն հետեւում
էր հայ բանասիրութիւնը, արտաքին գրոց յու-
նարան թարգմանութիւններն ու մեկնութիւն-
ները վերագրում էր դաւիթ Անյազթ հայ փի-

լիսովային, մասամբ նրա ընկերակիցներին, ընդունելով նրանց հիմքերորդ դարի հեղինակներ, Ասհակ-Մեսրոպի աշակերտներ :

Այդ աւանդութիւնը, ինչպէս ցոյց ենք տուել “Դաւիթ Անյաղթի խնդիրը նոր լուսարանութեամբ” մեր աշխատութեան մէջ¹, անհիմն ու անվատեր մի առասպել է, յետագայ դարերում՝ յերիւրուած :

“Արտաքին գրոց, այն է՝ իմաստասիրական, քերականական, ճարտասանական եւ այլ նման երկերի բովանդակութիւնը հայագետ հմտաբանակրներն անգամ գժուար կարող են հականալ առանց այդ ուսմունքների մօտ ծանօթութեան, յունարէն լեզուի օգնութեան եւ մասնագիտական յարատեւ. հետախուզման : Այդ երկերի յունարան խրիժին լեզուն այնքան արուեստական ու արտասովոր է, որ անմատչելի ու անհասկանալի է անգամ վարժ ու հմտագրաբարենքի համար : Այդ է գուցէ գլխաւոր պատճառը, որ շատ քիչերն են ձեռնամոխ եղել հետազոտելու այս երկերը եւ սրանց վերաբերեալ բանասիրական ու լեզուական մթնն հարցերը : Հայ բանասիրութիւնը զբաղուել է գրեթէ բացառապէս սկեղարեան անուանուած մատենագրական երկերի քննութեամբ եւ միանգամայն աշքաթող արել յունարան ու զբութեան, լեզուի եւ՝ արտաքին գրոց, ու սումնասիրութիւնը :

Այդ ուսումնասիրութիւնը սակայն նախա-

1 Անգլարշատուած 1904, արտահանք. Անգլարշատ ամսագրից, 1904, Փետր., Յանիս, Յուլիս :

պայմանն է կազմում մեր հին մատենագրութեան
ամենահիմնական խնդիրների պարզաբանման:
Բացի այդ՝ յունաբան ուղղութիւնն ու արտա-
քին գրոց, ռամսունքը կարօտ են ամենալուրջ
ու շագրութեան նաև իրանց ուրոյն բավանդա-
կութեան տեսակէտից, որովհետեւ նրանք, լինե-
լով առանձնայատուկ մի երեւոյթ մեր հնագոյն
մատենագրութեան, այսուհետեւ դարեր շարու-
նակ մեծապէս ազդել են թէ հայ մաքի եւ թէ
ոգեկան մշտկոյթի վրայ:

§ 2. Յունաբան սուսաննեան ընդհանուր բնու-
րութեան: — Արդ՝ տեսանենք, թէ որոնք են յու-
նաբան ուղղութեան առանձնայատկութիւնները,
նրա գերն եւ նշանակութիւնը հայոց մատենա-
գրութեան մէջ:

Յունաբան ուղղութիւնը, նախ եւ առաջ,
այն մէծ յեղաշրջումն է հին հայոց մատենա-
գրութեան մէջ, որը հիմնայատակ է անում ու
յեղափոխում թէ հայ գրական լեզուն, ոճը,
գրելու եղանակն ու սովորութիւնը, եւ թէ հե-
ղինակների գաղափարական ու գիտական պա-
շարն ու աշխարհահայեացքը: Վեցերորդ դարից
սկսած՝ հայ մատենագիրներից շատերը, հմատ
ու քաջ ծանօթ լինելով քերդազական, քերա-
կանական, ճարտառանական եւ իմաստասիրական
արուեստներին, կոչում են հռետոր, փիլի-
տոփայ կամ քերդող, որ յունաբէն ուսուցչից
բառի թարգմանութիւնն է:

* Քերդող, մակղիրը հանդիպում է արգելն
վեցերորդ դարի վերջում: * Փառաւորելոց տե-

բանց Ալբթանիսի տերանց նուիրակի եւ վարդապետի Քչկան որդւոյ, ի Սորմենայ սարատելատէ եւ հայոց զաւրավարէ, թղթում կաթողիկոսական տեղապահ Ալբթանէսն անուանում է “քերգող”, “Զի եթէ չէր իշխան, որպէս գրեցէքն. անդապահութեալ եկեղեցւոյդ առանց աթոռակցաց իւրօց ասել ընդ մեզ եւ կամ լսել, եւ կամ որ ասէքի ընդուղի, նստեալ ի դուռայ, աւերածին հաւատոյդ նոր կարապետդ, եւ յառաջընթաց ներին, պաճուճեալ սնափառութեամբ ի մէջ ախմար եւ մոտամոլար մարդկան, եւ ցուցանեցանն իւր թէ են իսկ իմ վարդապետութիւն, ապա պարա է.... եւն (Գիրք թղթոց, էջ 90):

Դադար Փարպեցին յիշում է Առվակէս “փիլիտուունին: Ստեփանոս Ըսողիկը” “փիլիտուուիայ” է անուանում “Քրիստովոր կաթողիկոսին, իսկ Եղիսաս Անգեղացուն համարում է” աշակերտ ճարտասանին Առվակիսի եպիսկոպոսի Բագրեւանդ գտառին եւ ասում, որ Նա “զդասս ճարտասանիցն բազմացուցանէր, (Պատմ. տիեզեր, Ա. Պետերբուրգ 1885, էջ 81, 82):

Քերդովները եւ իմաստատէրներն են եղել, ինչպէս յայտնի է, այդ ժամանակուայ հեղինակաւոր գիտնականները: Աեցերորդ դարի կրօնական վէճերի ժամանակարանը են, գլխաւորապէս, հիմնաւորելու պատճառաբանել վիճելի հարցերը եւ հանդէս եկել եկեղեցական ժողովներում հակառակորդների դէմ: Ամրատ Ալբկան մարզպանը վրաց Ախւրին կաթողիկոսին ուղղուած իր թղթում գրում է,

* Կամեաք եպիսկոպոսուն հանդերձ քերագողաւք արձակել, զկիրթան գիտել զշարութիւն հերձուածոց, որ զձեզ ի վերայ հասուցանէին։ Բայց ապա առ ժաման բաւական համարեցաք ի ձեռն ազատ արանցգ, նախ թղթով զկամն ձեր գիտել։ (Գիրք Թղթոց, էջ 169):

Եւ յիրաւի, քրիստոնէութեան հելլենացման պատճառով՝ անկարելի էր հասկանալ կրօնաւրաւանական խնդիրների ու վեճերի իմաստն ու նրբութիւնները առանց ժամանակակից հելլեն գիտութեան ու իմաստափրութեան վարժ ծանօթութեան։

Յունարան հայ գպրոցն էր, որ այդ հմտութիւնը պատռաստում ու տարածում էր հայ երկրում։

§ 3. “Աշուածին դժու, նորի անոնիւնները եւ նրանց ազգեցնիւննեց հայոց այն ժողովներներն ըլլուի, ոմի եւ բազուդուի նիւն վրայ։ — Բովանդակութեան կազմից հայ մատենագրութիւնը յունարան շրջանում հարստանում է բազմաթիւ թարգմանութիւններով յունարենից՝ ոչ միայն կրօնական երկերի, այլ եւ ոչ կրօնական, որոնց մեծագոյն մասը յայտնի են “արտաքինքն”, “արտաքին գրեանքն” եւ “գիրք արտաքնոց իմաստափրաց”, անունների տակ։ Յունարան այս շրջանում միայն հայ միտքը ծանօթանում է հելլենական — հեթանոս գիտութիւնների զանազան ճիւղերի հետ եւ Արիստոտելի տրամաբանական երկերի ու նորպղատոնական փիլիսոփայութեան ու սումմատիբութեամբ վարժուում է

վերացողական մասնութեան։ Բացի Արխա-
տուուելի երկերից ու մեկնութիւններից՝ նոյն այս
շրջանում թարգմանուած են «Պիտոյից գիրքը»,
«Դիոնիսիոս Թրակացու քերականութիւնը», «Նոն-
նոսի «Ճողովարանք պատմութեանց առասպե-
լացն»։ Եւ ուրիշ երկեր հելլենական աշխարհիկ
գրականութիւնից։

Թարգմանութիւնների մի մասը կատա-
րուած է տառացի բառ առ բառ փոխադրու-
թեան միջոցով, որը վեցերորդ դարում դործա-
ծական է եղել Բիւզանդիայում։ Խնչպէս յայտնի
է, նոյն այդ եղանակով թարգմանուած է յու-
նարէնի Յուստինիան կայսեր օրէնքների ժողո-
վածուն։ Ըստ երեւոյթին, նիւթական տառացի
փոխադրութեան եղանակը յատուկ պահանջ է
եղել այնպիսի հռչակաւոր երկերի համար, որոնք
բառ առ բառ քննութեան են ենթարկուել եւ
մեկնուել ու առանցուել դպրոցներում։

Հայոց մատենագրութեան մէջ թարգմա-
նութեանց այդ շարքին պատկանում են ամենից
առաջ «Պիտոյից գրքի», տեսութիւնները, Դիո-
նիսիոս Թրակացու քերականութիւնը, Պորտիւրի
Կերածութիւնը եւ Արխատուելի Սառուգու-
թիւնը ու Յաղագս մեկնութեան գրուածքը։

Սոյն երկերի տառացի փոխադրութեամբ
կազմում են մերենայօրէն ու արուեստաբար
բազմաթիւ նոր բառեր ու նորաձեւ բառակազ-
մութիւններ, գլխաւորապէս, վերացական գա-
ղափարների եւ իմաստասիրական ու գիտական
եղբների համար, խնչպէս օրինակ՝ ապացոյց

— ἀπόδειξις, οὐδέποτε = ὑποκείμενον, οὐδέποτε = ἐνάγνωστος, γραπτόν = συνέχης, αποταπειθήν = προσηγορία, ρωτηγιαστόν = συστατικός, μαρτυρεπτήν = ἀπόδοσις, γράφοντα = διεκτικός ή τοι:

Βασίης αյդ τηρησίν μαπακαզմութիւններից, որոնցից շատերը հետզհետէ գործածական են դառնում հայերէնում, յունաբան շրջանի գրական լեզուն ունի նաև որոշ քերականական առանձնայատկութիւններ, միանգամայն խորթու ու ստար ուկեղդարենան մատենադրութեան, որ պէտք է վերագրել մաստմբ, յունարէնի աղդեցութեան, մասամբ լեզուի բնական զարգացման:

Անցերարդ դարից սկսած հայ գրականութեան ռճի վրայ եւս մեծ ազդեցութիւն են ունեցել քերականական ու հռետորական գասագրերը: Որոշ հեղինակների նկատմամբ այդ ազդեցութիւնը պարզ երեւում է նրանց երկասիրութիւնների շարահի: Աման եղանակի ու ձեւի վրայ: Մ. Արեդեանը իւր Հայ ժողովրդական առասպելները (Վաղարշապատ 1901) աշխատութեան մէջ մատնացոց է անում, որ Մովսէս Խորենացին Տիգրան Ա-ի ներբողը գրել է, հետեւելով՝ Հիւսումն Պիտոյից՝ աղքիւրի ճարտառանական պահանջներին: Կոյն Պիտոյից գրքի՝ Հռետորական կանոններին հետեւել է նաև Խոսրովիկ թարգմանիչն իր կրօնագաւառաբանական հակաճառութիւններում¹:

¹: Տես Դ. Ալարդ. Յովակինան, Դաւիթ Հարքացին և. Պիտոյից Գիրքը. Վարդապատ 1908, Փետր., էջ 209—210:

§ 4. Հելլենակար մատենագիր, ուղեւ ինձն
ուշերդնահայություննեւ ընդլայնուն իւ ուշերդնի քրո-
խանուննեւ զարդացւուն: — Հելլենասէր ու յու-
նաբան ուղղութիւններ հայոց մատենագրութեան
մէջ, ինչպէս շատ ուղիղ նկատել է ուսուցչա-
պետ ։ Մառը¹, ընդլայնելով հայերի մատոր
հորիզոնը, առաջ է բերել Հետաքրքրութիւն
ու միայն գեղի հին հեթանոսական աշխարհը,
այլ եւ գեղի իրանց հնութիւնները, ժողովրդա-
կան տռասպելները, եւ մեծ շափով նպաստել է
նրանց ազգային գիտակցութեան ու քաղաքա-
կրթութեան զարգացմանը: Աակայն ստեղծա-
գործական այս բեղմնաւոր աշխատանքի խաղաղ
ու աջադիւնութեանն արգելք են հանգիստել
արաբական արշաւանքներն ու արհաւիրքները:

Թէեւ եօթներօրդ գարի արաբական աւե-
րիւ շրջանումն անգամ՝ հայ մատենագրութիւնը
յունաբան ուղղութեամբ շարունակւում էր, սա-
կայն նա չէր ստանում այն թափն ու ոյժը, որ
կարող էր ստանալ այլ խաղաղ պայմաններում:

Հելլենասէր ուղղութիւնը հայ մատենա-
գրութեան վրայ ունեցել է մեծ ազգեցութիւն
նաեւ այն տեսակետից, որ նա, ընդլայնելով
հայոց հնագոյն մատենագրութեան կրօնակեկե-
ղեցական շրջանակները, մեծ զարկ է տռաել
աշխարհիկ բանաստեղծական գրականութեան
ծագման: Թէեւ արաբական արհաւիրքների ու
արտաքին անպատճ պայմանների պատճառով

¹ Н. Марръ, Іоаннъ Петрацкій, грузинскій неоплатоникъ XI—XII вѣка, С.—Петербургъ 1909, 4, 12—13.

գեղարօնեստական գրականութիւնը մեծ ծառալու զարգացում չէ ստացել, ստեղծվել հեղեղասեր հին հայ մատենագրութեան մեջ գեղարօնեստական թարգմանական ու թպնուրոյն երկերի գոյութիւնն անտարակուսելի ու ակներեւէ: Գրիգոր Մագիստրոսը՝ “Առ վարդապետն Սարդիս, զրած իր նամակում”¹ յիշում է “զկալիմաքոսի եւ զընդունիկեայն, բանաստեղծական երկերի հայերէն թարգմանութիւնը, զատեալ եմ, — զրում է Մագիստրոսը, — եւ զկալիմաքոսի եւ զընդունիկեայն ի հայ լեզու, քերականի Ընանուն մեկնիչը, որը, ինչպէս կը տեսնենք, Մովսէսի ու Դաւթի Հարցմունքներում յիշատակուած նրանց ընկերակից համարուած զօդուն է, ոչ միայն իր մեկնութեան մեջ յիշում է Դաւթի “քերթութիւնը, Ցիգրանի մասին, այլ եւ առաջ է քերում նրանից մի հատուած: Մեկնաբանելով “զտաղն քաջոլորակին, նա Դաւթի քերթութեան մասին հազորդում է հետեւեալը. “Իսկ քաջոլորակի տաղ ասի Դաւթեան քերթութիւն (եւ) որ յազագս Ցիգրանայ, յորժամ երկար բառիւր եւ ոլորակաւք ի սկսմանէ մինչեւ յաւարտումն զմիտու առեալ բերիցէ, որպէս յորժամ ասէ.

“Եւ արդ ներգործող ի միտս երեւիւր առ խորհուրդս փողարին
Մեծոգւոյ Տիգրանայ գեղանին Տիգրանու հի

¹ ՏԵՇ կ. Կոստանեանց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աւելանդգրապուլ 1910, էջ 55:

Խոր ներածեալ կողարադ նաեւ ողջամիտ
աշխարհածուհի¹:

§ 5. “Աբովուն քըսու բուռութեաւ ու-
խերն բարեկանի ժըլ եւ նըս անուններն ունեաւ
իշրեորդներն այս վաստի դաստիուն ուրախու-
նեան համար: — Ըստնաբան դպրոցի արտաքրու-
թիւնների շարքում առանձնայատուկ տեղ են
բռնում Արիստոտելի իմաստասիրական երկերի
եւ Նրանց մեկնութիւնների, նաեւ “Պիտոյից
դրիւ” ու Դիոնիսիոս Թրակացու Քերականու-
թեան հայերէն թարգմանութիւնները: Այս
երկերը դարեր շարունակ եղել են Հայաստա-
նում դպրոցական դաստանդման առարկաներ
եւ սրանց լուսաբանութեանը, Բնչպէս յայտնի
է, նուիրուած են բազմաթիւ մեկնութիւններ ու
լուծմունքներ, որոնք զանազան ժամանակներում
յօրինուած են եղել, իրրեւ դպրոցական ձեռ-
նարկներ: Քերականական, Տարտասանական ու
Արիստոտելի իմաստասիրական երկերի յարա-
տեւ ու խոր աղքեցութիւնը համաշխարհային
մարի, լեզուի ու մատենաբարութեան վրայ հա-
մատարած մի երեւոյթ է եղել թէ Արեւմուտ-
քում եւ թէ Առաջաւոր Ասիայում:

Այն գիտական ու վերացական բառերի
պաշարը, որ գործածական է ու սովորական
այժմեան աշխարհաբար հայերէնում, Բնչպէս եւ

¹ Ցէս Դ. Աշտից, Արտեմոս Դիբոնիսկոյ քերտկունի,
պիետոպ. 1915, էջ 128—129:

եւրոպական լեզուներում, ծագել է մասամբ
վերոյիշեալ երկերի թարգմանութիւններից:

Յունաբան գրաբարը, համարելով ուկե-
դարեանի համեմատութեամբ ^{“ցեխագարեան”},
չպէտք է այնու ամենայնիւ մռանալ, որ այդ լե-
զուի գիտական քննութեամբ միայն կարող են
պարզուել լեզուական մի շարք խնդիրներ, որ
վերաբերում են նրանից ծնունդ առած միջնա-
դարեան եւ աշխարհաբար հայերէնին: Յունա-
բան այդ լեզուի ուսումնասիրութեամբ է, որ
հնարաւոր պիտի լինի լուսաբանել մեր լեզուի
յաջորդական զարգացումը: Գիտական այդպիսի
ուսումնասիրութիւններ, դժբախտաբար, շատ
քիչ կան, մինչդեռ գրանք են հիմք ծառայելու
հայոց լեզուի պատմական քերականութեան՝ հայ
լեզուագիտութեան յատուկ մի ճիւղի, որ գեռ-
եւս գոյութիւն իսկ չունի:

Թէ որքան հետաքրքրիր կարող են լինել
եւ կարեւոր լեզուագիտական այդ աշխատաւ-
թիւնները՝ ցոյց տանք մի օրինակով:

Հայերէնում կան բարդ բառեր, որոնք
տարրեր եղանակով են բարդուած, ինչպէս՝
մայրաքաղաք եւ քաղաքամայր, բանաստեղծու-
թիւն եւ ստեղծաբանութիւն, սիրադ ործ եւ
գործառէր, սիրաբան եւ բանասէր, բանագովու-
թիւն եւ գովարանութիւն, վաճառաշահութիւն
եւ շահավաճառութիւն եւն: Անձագոյն մասն
այս բառերի յունաբան ծագում ունին:

Արդ՝ հարց է առաջ գալիս, թէ այդ բար-
դութիւններից որոնք են աւելի հարազատ հայոց

լեզուի քերականութեանն ու ոգուն։ Ահա մի
հարց, որը հայոց լեզուի պատմական քերակա-
նութեան խնդիրներից մէկն է լինելու, բայց
ուշադրութեան գրեթե չէ առնուած։

Աերոյիշեալ օրինակներից “սիրագործ”
բարդութիւնը, որ դարձ է ածուած չիմեթեա
կուզի Հակաճառութեան մէջ (էջ 325), ամե-
նայն հաւանութեամբ, թարգմանութիւն է յու-
նարէն Փիլεργօս բառի։ Յունարան ուրիշ երկե-
րում նոյն բառը, սովորաբար, թարգմանուած է
“գործասէր”, Շատ պարզ է, որ “գործասէր”-ն
աւելի է համապատասխանում հայերէն լեզուի
ոգուն, քան “սիրագործ”-ը։ Աակայն կան գեղ-
քեր, երբ յունարան բարդ բառերի հարազա-
տութիւնն ու խորթութիւնն աւելի գժուար է
լուծուամ, քան վերեւ մատնանշուած գէպքում։
Օրինակ, “մայրաքաղաք” բառը, որ թարգմա-
նութիւն է յունարէն լոյթօպօլիս բառի, այժմ
միանգամայն հարազատ է հնչում մեր ական-
ջին։ Բայց ուզի՞ղ է արդեօք մեր այդ ներքին
զգացումը եւ վստահութիւնը։ Քերականական ու
լեզուաբանական տեսակէտից, ինձ թւում է, որ
հայոց լեզուի ոգուն աւելի է համապատասխա-
նում ոչ թէ սովորական գարձած “մայրաքա-
ղաք”-ը, որն արդիւնք է յունարան տառացի
թարգմանութեան, այլ “քաղաքամայր” բառը։

Ըստուկ ուստամասիրութեան նիւթ կարող
է ծառայել յունարան բարդ բառերի հենց այս
կարեւոր խնդիրը, մանաւանդ, եթէ ի նկատի
առնուեն Եւագր Պլուտացու երկերի հնագոյն

Հայ թարգմանութիւնները, որ ունեն այդ տեսակէտից հետաքրքիր առանձնայատկութիւններ։

Թէ այս եւ թէ ուրիշ նման լեզուական խնդիրներ կարող են եւ պէտք է պարզուեն յունաբան հայերէնի ուսումնասիրութեամբ։

§ 6. Յանբան լեզուի մասնիքունիւնը, ոչուն ժիշտ ժառանքունիւնը և լուսական ուսումնական պատճեան։ — Յայտնի է արդեն, որ յանաբան եւ սոկեդարեան երկերը լեզուական ու քերականական տեսակէտից այնքան միմէանցից տարրեր են, որ առանց գժուաբութեան զանազանում ու բաժանում են իրարից։

Այս հանգամանքը վաղուց ի վեր օգտագործուել է իրբեւ կարեւոր մի միջոց բանասիրական ու ժամանակագրական որոշ հետախուզումների ու հետեւութիւնների համար։

Սոկեդարեան գրաբարի մանրազնին ուսումնասիրութիւնը ցոյց է տուել, որ այդ լեզուն, լինելով ըստ էութեան նոյնը, ըստ իր սճի ու կերպի բաժանուում է այլ եւ այլ գասերի¹։ Որքան եւ առանձին դեպքերում գժուար ու զիճելի լինի այդ խմբերի ու նրանց առանձնայատկութիւնների որոշումը, սակայն գասերի ու խմբաւորումների ընդհանուր փաստը միանգամայն հիմնաւոր է ու անժիտելի։

Յանական գրաբարը մինչեւ այժմ դեռ

¹ ՏԵՇ. Ա. Ա. Այտշենով, Քնն. քեր., Հ. Բ. Թոռնհեմն, Հատուկնիր ընթերցուածք և. Կ. Բիշովեցացի, Արքիւն վարդապետ։

ուսումնասիրուած չէ եղել համեմատական ու նոյն մանրազնին եղանակով, ինչպէս ուսկեդարեանը: Մինչդեռ, ինչպէս կը տեսնենք, այդ ուսումնասիրութիւնը կարեւոր է ոչ միայն լեզուական, այլ եւ բանասիրական եւ մատենագրական-պատմական տեսակետից:

Քննութեան առնելով յունաբան հնագոյն երկերի լեզուն, քերականութիւնը եւ բռվանդակութիւնը, կարելի է ոչ միայն բաժանել այդ լեզուն տարրեր խմբերի եւ պարզել նրա զարգացման ընթացքը, այլ եւ որոշել "արտաքին գրոց, առանձին խմբերի թարգմանման ժամանակաշրջանները եւ նոյն իսկ առանձին երկերի թարգմանման ժամանակագրական յաջորդականութիւնը:

Յունաբան լեզուն իր բառամբերով ու քերականական առանձնայատկութիւններով, ինչպէս կը տեսնենք, մի եւ նոյնը չէ եղել "արտաքին գրոց, զանազան խմբերում, այլ նա կազմուել է աստիճանաբար ու յաջորդաբար, հետզհետէ կրել է զգալի փոփոխութիւններ եւ ունեցել իր զարգացման յատուկ ընթացքը:

Յունաբան հնագոյն թարգմանութիւններում լեզուական խմբաւորումները շատ աւելի որոշ ու ակներեւ են, քան ոսկեդարեան զբարում, որովհետեւ հիմնուած են ոչ թէ "ոճի ու կերպի", այլ, գլխաւորապէս, քերականութեան ու արուեստական բառակազմութեան բացոյացյալ տարրերութիւնների վրայ:

Համեմատական ուսումնասիրութեան եղա-

Նակով երեւան են դաշին միանգամայն անյայտ նոր վաստեր, որուք հիմնովին յեղաշրջում են աւանդական հին կարծիքները յունաբան թարգմանութիւնների մասին։ Պարզում է, օրինակ, որ Դաւիթ Անյաղըին վերագրուած իմաստասիրական մեկութիւնները ոչ միայն բոլորն էլ թարգմանութիւն են յունաբէնից, այլ եւ տարբեր ուղղութեան եւ տարբեր հեղինակների ութարգմանների գործ են եւ ծագել են դաւանաբանական վէճերի ժամանակ կրօնական տարբեր միջավայրերում։ Մի մասը նրանցից թարգմանուած են միաբնակ հայերի, իսկ միւս մասը երկարնակ հայերի միջավայրում։

Լուսաբանում են ուրեմն թէ յունաբան դպրոցի ծագման ու զարգացման մութ ու խրթին խնդիրը եւ թէ վեցերորդ ու եօթերորդ դարերի գրական երկերի ժամանակագրութիւնը, որ մինչեւ այժմ եղել են անլուծելի մի առեղծուած։ Նթէ նոյն այս ուղղութեամբ, որին հետեւել ենք մենք, լինեն նոր հետազոտութիւններ, թւում է ինձ, որ վերջնականապէս կը պարզուի նաեւ վեցերորդ ու եօթերորդ դարերի կրօնակեղեցական մատենագրութեան զարգացման ընթացքը եւ մեր մատենագրութեան պատմութիւնը կը գրուի վերջապէս հաստատուն հիմքերի վրայ։

§ 7. “Աշուտին Քրոջ Արքաներեւուն -----
Հիմք ----- Բանիքուն բանուուն ունիւն նոյն
ունուն ----- Արտաքին զրոց վերաբերեալ առա-
ջիկայ իմ ուսումնասիրութիւնը, որ լոյս տեսաւ.

Նախ Հանգես Ամսօրեայ, ի էջերում, բաժանուած է լինելու երկու գլխաւոր մասերի:

- Պատիթ Անյաղթին ու Ելիասին վերադրուած մեկութիւնների հեղինակները եւ.

- Ե. Յունարան հնագոյն թարգմանութիւնների երեք տարրեր շրջանները:

Աշխատութեանս կցուած է լինելու իրբեւյաւելուած:

Է. Էջմիածնի մատենագարանի իմաստասիրական հնագոյն ձեռագիրների ցուցակը:

Յացակի հրատարակութիւնը կարեւոր համարեցի, որովհետեւ ուսումնասիրութեանս հիմք են ծառայել յաճախ ոչ թէ Պատիթի Երկերի Վենետիկում լոյս տեսած բնագիրը. այլ Էջմիածնի մատենագարանի հնագոյն ձեռագիրները: Վենետիկի հրատարակութիւնը հնագոյն այդ ձեռագիրների համեմատութեամբ ունի պակաս մասեր եւ որոշ տարբերութիւններ:

Ուսումնասիրութեանս առաջին մասը, որ վերաբերում է իմաստասիրական մեկնութիւնների հեղինակների որոշմանը, կարեւոր է, գլխաւորապես, բիւզանգական մատենագրութեան պատմութեան համար: Հեղինակների որոշման խնդրում հայերէն մեկնութիւնների ուսումնասիրութեամբ ստացուում են եղբակացութիւններ, որոնք հիմնական մի քանի կէտերում տարբերում են տիրող կարծիքներից, որ ընդունելութիւնն ու գտած փիլիսոփայութեան պատմութեան մէջ:

Ուսումնասիրութեանս երկրորդ՝ աւելի ընդարձակ ու հիմնական մասը՝ վերաբերում է

զմէ այդ մեկնութիւնների եւ լմէ յունաբան հնագոյն այլ թարգմանութիւնների ժամանեակագրութեանը եւ կարեւոր է առանձնապես հայոց մատենագրութեան պատմութեան համար։ Այս մասը, յոյս ունեմ, որ իւր ուրոյն բավանդակութեամբ եւ իւր բազմաթիւ ուշագրաւ ու անակնկալ եղբակացութիւններով նոր ընթացք ու նոր ռւզդութիւն պիտի տայ յունաբան մատենագրութեանը վերաբերեալ լեզուագիտական ու բանասիրական յետագայ ուսումնասիրութիւններին։

Ուսումնասիրութեանս այս երկրորդ մասի մեջ բացի Արխատուածելի երկերի ու նրանց վերաբերեալ հնագոյն մեկնութիւնների թարգմանութիւններից, քննութեան են առնուած նաև արտադին գրոց, միւս թարգմանութիւնների ու երկերի մեծագոյն մասը՝ Դիմոկրիտոս Փրակացու քերականութեան թարգմանութիւնը, նոյն քերականութեան հնագոյն մեկնութիւնները, Փիլոնը, Պիտոյից Գիրը եւ Կանոնը, իսկ կրօնական բավանդակութեամբ երկերից՝ Կրենէոսը, Տիմոֆէոս կուզի հակաճառութիւնը եւ Գիրք թղթոցի յունաբան հնագոյն թղթերը։

Նմէ աշխատաւթեան հիմնական ակզրութեանը եւ եղբակացութիւնները հաւանաւթիւն գտնեն, թւում է թու, որ գժուար պիտի լինի որոշել այնուհետեւ նաեւ կրօնական եւ այլ բավանդակութեամբ յունաբան միւս հնագոյն թարգմանութիւնների խմբակցութիւնը եւ ժամանակը։ Արանք եւս, իմ կարծիքով, ինչպէս



իրենէսի ու Տիմ.թէս կուղի թարգմանութիւնները եւ Մովսէս քերթողահօր ու Յովհաննու և պիտիոպոսապետին վերագրուած թղթերը, լեզուական իրանց առանձնայատկութիւններով միանալու են, հաւանաբար, մեր մատնացորդ արած յունաբան երեք խմբերից որևէ մէկի հետ, որոնց ժամանակը որոշուած է այն ուսումնասիրութեան մէջ :

Ուսումնասիրութեանս մէջ կան կէտեր, որոնց լուսաբանութեան համար հարկաւոր էր ձեռոքի տակ ունենալ գրքեր եւ հրատարակութիւններ, որ, գժրախտաբար, ինձ մատչելի չեն եղել: Այդ կէտերը, յոյս ունեմ, կ'աշխատեն պարզել Երապայում գտնւող բանասէրները, որոնք հնարաւորութիւն ունեն օգտուելու եւ բոպական հարուստ գրադարաններից:

Դաւիթ Անյաղթին ու Լիփասին վերագրուած մեկնութիւնների հեղինակները:

§ 8. Առաջապահութիւն իշխանութիւն է բարեկարգ շնորհած առաջապահութիւն է առաջապահութիւն հայութիւն և առաջապահութիւն: — Արիստոտելի կամ Նրան ընծայուած երկերից թարգմանուած են հայերէն եւ հրատարակուած են Անենեալում¹:

1 Ասրիւն վարդապետի, Մամրէի վերծանողի եւ Դաւիթի Անյաղթի մասնակտութիւնը, թիւնը, Վանասիկ 1833:

— Առարողութիւնը (κατηγορία), էջ 359

— 408:

բ. Յաղաքս մեկնութեան (περὶ ἐρμηνείας),

էջ 461—486:

չ. Պատմութիւն յաղաքս աշխարհի (περὶ

չօսմոս), էջ 603—628:

Դ. Յաղաքս առարինութեանց (περὶ ձրբեաւ
և հախան), էջ 629—635:

Պարփիւրի երկերից թարգմանուած է՝

Ե. Կերածութիւն (εἰσαγωγή), էջ 227—

250, որը նորագուատուական դպրոցներուամբ կազմուամբ էր Սորյանոսի անհրաժեշտ ու անանջատմասը, իրբեւ Կերածութիւնի Առարողութիւննեն Արիստոտելիք:¹

Բացի այս բնագրերից թարգմանուած են
նաև վերոյիշեալ երկերին վերաբերուող հետեւեալ մեկնութիւնները:

—. Աերլուծութիւն Կերածութեան Պարփիւրի՝ դաւթի գրիլիտափայի Կերպինացւոյ (Աեռեմիկ 1833, էջ 251—356).

Այս թարգմանութեան յունարէն բնագրերը պահպանեալ է եւ Հրատարակուած է՝
անձն Davidis Prolegomena et in Porphyrii Isagogen commentarium, edidit Adolfus Busse, Berlin 1904, էջ 80—219. յունարէն

¹ Ա. Երգիբշեալ Հինգ երկերի հայերէն թարգմանութիւնները պր. Կանիրիբը համապատել է յունարէն բնագրերի հետ։ Բացի այդ նու Առարողութեանց է։ Յաղաքս մեջնութեան հայերէն բնագրերը նորից Հրատարակել է Տեսագրերի Համամատաթեատր, անձն Anecdota Oxoniensia, Oxford 1892։

ψερνωφήρην ἐν ρω· Προλεγόμενα σύν θεῶ τῇς
Πορφυρίου εἰσαγωγῆς ἀπὸ φωνῆς Δαβὶδ τοῦ
θεοφιλεστάτου καὶ θεόφρονος φιλοσόφου¹.

Ἐ· Οικοροφοιδήιον ψερφιαποτέλης θωρη-
μαντεωλ ἐν μετάβιοις ἡ ημετέλη, οὐκέντετηλ 1833,
ἔχ 409—458, γριζωρέν ρηνωφήρρ φαντοιαδεὶς·

Ἐ· Αἰερήιωρ μέτενθιασ ψερφιαποτέλης θωρη-
μαντεωλ ἐν μετάβιοις ἡ ημετέλη, οὐκέντετηλ 1833,
ἔχ 487—553, γριζωρέν ρηνωφήρρ φαντοιαδεὶς·

Ἐ· ημετέλης ψεργαρηθ φιλησιοφιαγής μετέντε-
ληιαν σπρέιρωτασιαδεὶς η λίθιος ψερφιαποτέλης ἡ Αἰερη-
μαντεωλ, ανητ ἔχ 557—598, γριζωρέν ρηνω-
φήρρ φαντοιαδεὶς·

Ἐ· Υπέκειοιθήιον Οικοροφοιδήιον ψερφι-
αποτέλης ρηνδωγέωις Ιελίασης ιδιωτασιαθηρή, Ε· Αἰε-
μερρροιρητ 1911, ἔχ 1—137·

Οὕτοις θωρημαντεωλέν γριζωρέν ρηνω-
φήρρ αφαξανταιηλ ἐν ζρωτωριακοιαδεὶς ἐν
τοῖς Eliae in Porphyrii Isagogen et Aristote-
telis categorias commentaria, edidit A. Bus-
se, Berolini 1900, ἔχ 107—255. γριζωρέν
ψερνωφήρην ἐν Ἐξήγησις σύν θεῷ τῶν δέκα
κατηγοριῶν τῇς φιλοσοφίας ἀπὸ φωνῆς Δαβὶδ
τοῦ θεοφιλεστάτου φιλοσόφου· Καινωρέν ρολορ
ἀκτωφρηροιδεὶς Οικοροφοιδήιον αγής μετέντε-
ληρψερνωφροιαδεὶς ἡ ημετέλης φιλησιοφιαγής·

¹ ἔχ 80—94. ἕτη 95—218 αὐλητὴ ψερνωφήρ·
Σχάλια σύν θεῷ εἰς τὴν εἰσαγωγῆν Πορφυρίου ἀπὸ φωνῆς
Δαβὶδ τοῦ θεοφιλεστάτου καὶ θεόφρονος φιλοσόφου.

Առկայն յունարէն բնագրի հրատարակիչն Ադոլֆ Բուսսէն, հիմնուելով որոշ փաստական տուելուների ու դիտողակիցների վրայ, հաւանական է համարել, որ այս մեկնութեան հեղինակը ուժեւ դաւիթն է, ոյլ նրա ուսուցիչ էլիասը:

Հ. Հատուած թէ մեկնութեան Ատորոգութեանցն Արքատուէլի, անս Էլիասի Ատորոգութեանց մեկնութեանիմ հրատարակութեան վերաշում, Ա. Պետերբուրգ 1911, էջ 140—149. յունարէն բնագիրը դաւուած չէ:

Իսցի վերոյիշեալ վեց մեկնութիւններից թարգմանուած է նաև:

Ե. Դաւիթ Փիլիպովիայի Որուեցնութեան գուհոսօփաւ երկը, որի հայերէն վերնագիրն է ըստ Վենետիկի հրատարակութեան (1833, էջ 120—216): «Դաւիթի եռամեծի եւ անյազմ փիլիպովիայի ընդդէմ» առարկութեանցն չորից ովհի հունի իմաստակի եւ առհմանի եւ արամատութիւնք իմաստափառութեան: Հնագոյն հայ ձեռագիրների վերնագիրը մատուցրապէս համապատասխան է յունարէնին»: «Դաւիթի Փիլիպովիայի Կերպինացւոյ» յառաջարանք առհմանց իմաստափառութեան¹:

Այն թարգմանութեան յունարէն բնագիրը հրատարակուած է՝ անս Davidis Prolegomena et in Porphyrii Isagogen commentarium, edidit Adolfus Busse, Berlin 1904, էջ 1—79. յունարէն վերնագիրն է՝ *Tὰ προ-*

¹ Տե՛ս Խշդիմանի մասենացարանի թ. 1889 և 1890 մեռադրերը (— Էլաբէն Յուլիոն, թ. 1847 և 1848):

λεγόμενα τῆς φιλοσοφίας απὸ φωνῆς Δαρᾶδ τοῦ θεοφίλεστάτου καὶ θεόφρονος φιλοσόφου:

Τιμήθει πλευράθειν φέρωφρονταδὸν οὐκ εἰσει-
ηθεῖ φανήσθαι μετατασθητακῶν - μετέπειτακῶν οὐκεῖται ζω-
τοποιοδὲνερού, βέλεψησεν.

- Τιμήθει τιμήθει φιλοθεοφίαντες αποτελε-
σθεῖται, οὐκέτενεσθεὶ 1833, έξ 217—222.

Ἐ. Τιμήθει φανὴροτάτοις, αὐτη, έξ 223
— 224:

τ. Εἴη τις αγαπηθεὶς οὐτε αποφθηκαί τις τοιούτοις,
οὐδὲντος γάρ τοις αποτελεῖται "τιμήθει πλευράθεινερού,
οὐδὲντος γάρ τοις αποτελεῖται" οὐτε απο-
τελεῖται μὲν, θεωρητικῶν θεοφίλενερού, έξ 215—216.

Εἴηται πλευράθεινερού τοις αποφθηκαί τις τοιούτοις,
οὐδὲντος γάρ τοις αποτελεῖται "τιμήθει πλευράθεινερού,
οὐδὲντος γάρ τοις αποτελεῖται" οὐτε απο-
τελεῖται μὲντοις αγαπηθεὶσιν αποτελεῖται τιμήθει
πλευράθεινερού τοις αποφθηκαί τις τοιούτοις,
οὐδὲντος γάρ τοις αποτελεῖται "τιμήθει πλευράθεινερού,
οὐδὲντος γάρ τοις αποτελεῖται" οὐτε απο-
τελεῖται μὲντοις αγαπηθεὶσιν αποτελεῖται τιμήθει
πλευράθεινερού τοις αποφθηκαί τις τοιούτοις,
οὐδὲντος γάρ τοις αποτελεῖται "τιμήθει πλευράθεινερού,
οὐδὲντος γάρ τοις αποτελεῖται" οὐτε απο-

§ 9. Τιμήθει πλευράθεινερού τοις αποφθηκαί τις τοιούτοις
ξενιάτησιν τοιούτησιν τοιούτησινερού: — "τιμήθει πλευ-
ράθεινερού τοις αποφθηκαί τοιούτησιν τοιούτησινερού, απο-
φθηκαί τοιούτησιν τοιούτησινερού μὲν, πλευράθεινερού τοις αποφθηκαί τοιούτησινερού,
οὐτε αποφθηκαί τοιούτησιν τοιούτησινερού τοις αποφθηκαί τοιούτησινερού, οὐτε αποφθηκαί τοιούτησιν τοιούτησινερού τοις αποφθηκαί τοιούτησινερού,

ι. Πλατωνικομαρτινού 1904, αριθμοῖς, "Πλατωνικομαρτινού"
αποφθηκαί τοιούτησιν τοιούτησινερού, Φιλοποιομαρτινού, Βαζανίδη, Βαζανίδη:

առարբեր էին տիրող և նման ազրութիւններից դաս-
տիմ Անյաղթի մասին .

- Սահմանը խմաստափրութեան երկը,
ուորպիհարի Ներածութեան մեկնութիւնը եւ
Արխատառելի Աներլուծականքի մեկնութեան հա-
տուածը¹ միեւնոյն հեղինակի՝ դասիմ փիլիսո-
փայի գործ են, իսկ Արխատառելի Յաղագս մեկ-
նութեան եւ Ատորոգութեանց հայերէն մեկ-
նութիւնները դասւթիւնը չեն .

Ե. Կորպղատոնական դասիմ մեկնիչը հայոց
մատենագրութեան մեջ շփոթուած է դասիմ
Հարբացու հետ, նեչպէս եւ բիւզանդականում՝ Niketas David Paphlagonի հետ .

Հ. Սահմանը խմաստափրութեան երկը եւ
Ներածութեան ու Աներլուծականքի մեկնութիւնն-
ուերը թարգմանուած են յունարէնից .

Դ. Կորպղատոնական դասիմ մեկնիչը Աղե-
քսանդրիայում ուսած Զ. դարի մատենագիր է .

Ե. Կորպղատոնական դասիմ մեկնիչը քրիս-
տոնեայ է .

Զ. Կանոնին վերագրուած առասպելարա-
նական մեկնութիւնների հեղինակը դասիմ մեկ-
նիչը չէ :

Այս եղթակացութիւնները, նեչպէս ինձ
համոզել են յետագայի իմ հետազոտութիւնները,
ընդհանուր առմամբ, ուղիղ պիտի լինեն, բացի
մի քանի կետերից, որոնց մասին առանձին խօսք
կը լինի ներբեւում :

1. Աներլուծականքի մեկնութեան համար ածը կարող
է դասւթիւնը չլինել. աճս այդ աշխատաւթեան Ծ 22—24:

Դաւիթ Անյազվիտի մասին այնուհետեւ լոյսէր տեսել լի. Խոստիկեանի գերմաներէն աշխատութիւնը¹: Բոլոր գրեթե վերօյիշեալ կէտերում լի. Խոստիկեանի եղբակացութիւնները նոյն են, ինչ որ իմ աշխատութեան մէջ : Կա եւս Դաւիթին համարում է կրտսեր Ոլիմպիոդորոսի աշխակերտ, վեցերորդ դարի հեղինակ, կարծում է միայն, որ Դաւիթը, հաւանաբար, ոչ թէ քրիստոնեայ մեկնիչ է, այլ հեթանոս: Ինչպէս յայտնի է, Ադ. Բռուսէն Դաւիթի քրիստոնեայ լինելը նոյնպէս հաւանական էր համարել, հիմնոելով յունարէն բնադրի որոշ հատուածների վրայ²: Ա. Խոստիկեանը ենթադրում է, որ Դաւիթի թէ յունարէն եւ թէ Հայերէն բնադրում այդ հատուածները կարող են լինել յետագայ ժամանակների յաւելումներ: Դաւիթի հեթանոս լինելու հաւանական մի նշաննու համարում է նրա հերածութեան մեկնութեան մէջ՝ ծնն ընթացեալ շրջետուոց, դարձուածքը (Busse, էջ 121, 21), որ Հայերէնում թարգմանուած է “օգնականութեամբ” լաւագունին. (Վենեաիկ 1833, էջ 281): Ընդունելով հանգերձ, որ “լաւագունին” գործ է ածուած այստեղ Ստուծոյ փոխարէն պատռնի բարձրագոյն “իդէային իմաստով”, թւում է ինձ այնու ամենայնին, որ գրանով ապացուցում է միայն Դաւիթի քրիստոնէու-

¹ Dr. Missak Khostikian, David der Philosoph, Berner Studien zur Philosophie und ihrer Geschichte, Band LVIII, Bern 1907:

² Տե՛ս A. Busse, Davidis Prolegomena հ. 2, էջ VI.

թեան նորապղատուական ու գնոստիկեան բնոյթը։ Դաւթի քրիստոնեայ լինելու նշանները, որ մատնացոյց են արուած Ադ, Բուռեի եւ իմ աշխատութիւններում։ Դժուար է առանց լուրջ հիմքերի մերժել, համարելով բոլորը միասին օտար գրչի յաւելուածներ։ Ա. Խոստիկեանի առարկութիւններն այս կետում, իմ կարծիքով, համազիւ չեն։

§ 10. Էջմիածնի Հայութեածնի թիւ 1939
յեւ-էւշում է բառում Սուրբ-էւ-մատուցուած հայ մինչ-
միւնաեւը։ — Աերոյիշեալ աշխատութիւնն հրա-
տարակելուց յետոյ, Էջմիածնի մատունագարանի
հնագոյն ձեռագիրներն ուսումնասիրելիս՝ ան-
սպասելի կերպով գտնուեց Արիստոտելի Ատորա-
գութեանց մի նոր մեկնութիւնն, որն անծանօթ ու
կարեւոր մի երկ էր յունարան հնագոյն դպրոցի։

Այդ մեկնութիւնը պահպանուել է Էջ-
միածնի թիւ 1939 ձեռագրում (— Կարմ.
Ցուցակ, թ. 1897)։ Կոյն ձեռագիրը պարունա-
կում է նաև։ Հետաքրքիր մի հատուած Արիս-
տոտելի Ատորագութեանց մի այլ մեկնութեանն,
որը համառու մի մեացորդ է ինչ որ անյայտ
հին թարգմանութեան։

Կորագիւա այդ մեկնութիւնների քննու-
թիւննից երեւաց, որ ընդարձակ մեկնութիւնը
թարգմանութիւնն է Ատորոգութեանց մեկնու-
թեան յունարէն այն բնագրին, որը հրատարակել
էր գերմանացի գիտնական Ագոլֆ Բուռեն, իբրեւ
էլիաս իմաստասիրի աշխատութիւնն¹։ Համառու

¹ Տե՛ս A. Busse, Elias in Porphyrii Isagogen et Aristoteles Categorias commentaria, Berolini 1900, էջ. 108—200։

Հատուածի յունարէն բնագիրը, որը ան ինձ
յայտնի է, չկայ Արխառաստեղի Ստորոգութեանց
տպագիր մեկնութիւնների մէջ, որ հրատարակել
է բերլինի կայսերական ակադեմիան:

Հայերէն բնագիրը թէ այդ հատուածի եւ
թէ Էլիասին վերագրուած Ստորոգութեանց մեկ-
նութեան լոյս է անսել, ինչպէս վերեւ յիշուեց,
1911 թւ սեւ Պետրոգրագում գիտութեանց
կայսերական ակադեմիայի հրատարակութեամբ¹:

Էլիասին վերագրուած այդ մեկնութեան
հայերէն թարգմանութեան բնագիրը սկզբից եւ
վերջից թերի է, ուստի եւ նրա հայերէն վերնա-
գիրը մնում է անորոշ: Հայերէն հրատարակու-
թեան մէջ վերնագիրը դրուած է յունարէն
տպագրի վերնագրի համաձայն, որը սակայն, ինչ-
պէս կը տեսնենք, ոչ թէ յունարէն ձեռագիր-
ներից է բղխում, այլ ենթագրական մի վերնա-
գիր է, հիմնուած հրատարակչի, Ադոլֆ Բուսէի,
բանասիրական հետախուզութեան վրայ:

Հայերէն հրատարակութեան առաջարևա-
նում եւ արդիքն մատնանիշ էի արել, որ Ա. Բու-
սէի ենթագրութիւնը Ստորոգութեանց մեկնու-
թեան հեղինակի մասին չէ համաձայնում հայ-
մատնագրութեան մէջ պահպանուած պկայու-
թիւնների հետ, որ, իմ կարծիքով, վերաբեր-
ում են հենց նոյն այս մեկնութեան²: Մատենա-

¹ Անկանութիւն Ստորոգութեանցն Արխառաստեղի ըն-
ձայնական Էլիասի իմաստատիքի, էջ 1—140 էւ Հառուած ինչ-
ու մեջութեան Ստորոգութեանցն Արխառաստեղի, էջ 141—145:

² Տե՛ս Անկանութիւն Ստորոգութեանցն, էջ 11 էւ 111:

գրական այդ վկայութիւններից եւ Ատորոգութեանց մեկնութեան հայերէն բնագրի քննութիւնից երեւում է, որ Ա. Խուսէի եղբակացութիւնները դժուար է ընդունել, իրրեւ վերջնական ու անլիմելին: Այդ եղբակացութիւնները, որ հաւանական են համարուած Բիւզանդական մատենագրութեան, ինչպէս եւ փիլիսոփայութեան պատմութեան մէջ, կարօտ են, իմ կարծիքով: Վերաբննութեան հայկական առ եալների սգնութեամբ: Կոկ այս տուեալները, ինչպէս կը տեսնենք, հիմք կարող են ծառայել նոյն խնդրի մի նոր լուսարանութեան եւ ուշագրաւ նոր դիտողութիւնների, որ ստորեւ առաջ ենք բերում:

§ 11. Բառակի հաշվով՝ Առաջ-ին-նեանց Գիշանուն և դիմունից Դաստիարակութեան մէջ: — Բոլոր յունարէն ձեռագիրներ կլիասին ընծայուած Արիստոտելի Ատորոգութեանց մեկնութեան հեղինակ համարում են դաւիթիթ փելիսոփային, ինչպէս այդ երեւում է ձեռագիրների վերնագրերից՝ “ԵՀՂՂՂՏՇ ԺՆ ԾԵՓ ՇԵԿ ՃԵԿ ԿԱԴԵՐ ՇԵՍ ՄԵՍՎԻԼԵՏԱՇ ՎԻԼՈՍԵՇՓՈՒ”:

Ադողֆ Բուսէն կլիասի յունարէն բնագրի առաջարանում փորձում՝ տպացուցանել, որ այդ մեկնութիւնը ոչ թէ դաւիթինն է, այլ կլիասին: Յունարէն ձեռագիրների վերնագրերը սիսալ ենթադրելով, քուսէն ժիտում է դաւիթի հեղինակ լինելը հետեւեալ պատճառներով:

— Դաւիթիթ Փիլիսոփան Պարփիւրի “Ներածութեան դ., պրակը վերջացնում է այս խռոքե-

բով՝ Եւ զ իստելի է՝ թէ ի բանական մասն իմաստասիրութեան վերաբերի ոռաջինքայ շարագրութիւնս իսկ բանականն եթէ մասն է իմաստասիրութեան եւ եթէ ործի ի Ստորագութիւնն ըրիստուելի ուսցուք» (Անհետիկ 1833, էջ 263):

Հակառակ դիմաւութիւն Փիլիսոփայի այս խոստման էլեմանին ընծայուած՝ Անկնութիւն Ստորագութեանցն, երկու մ չենք զանում այդ խնդրի քննութիւնը, ինչպէս ովէտք եր սպասել ըստ վերոյիշեալ խոստման:

Ա. Բուռեի հրատարակած ու էլեմանին վերագրուած Պորտիւրի «Ներածութեան մեկնութեան հեղինակը նոյնպէս խոստանում է ցոյց տալ, որ բանականու ործի է իմաստասիրութեան, բայց ոչ Ստորագութեանց մեկնութեան մէջ, այլ Արիստոտելի Վերլուծականքամայն» ածչչթիսեւուց յարօն Մեֆիստու էւ տառցանել, այլ ճեմքը ասեն ոչ, այլ հակառակէր Պորտիւրի մասն զանդանի գոլով՝ ոչ իշխեր նստել եւ տառցանել, այլ ճեմքը, այլքն ասեն ոչ, այլ հակառակէր Պորտիւրի զի նա նստեալ գոլով՝ ինքն յոտն կացցէ: Այ զայդասեն, սուս ասեն, այլ եւ պատռէր զնա եւ պաշտէր, որպէս եւ ուրեմն բազին կանգնեաց, եւ մակագրեաց այսպէս: «Քաղին այս Պորտիւրի զոր կտնգնեաց Արիստոտել առն՝ զոր չարք եւ

բ. Դաւիթ Փիլիսոփան Պորտիւրի «Ներածութեան մեկնութեան մէջ ճեմականների մասին ասում է՝ «իսկ ճեմական կոչեցաւ Արիստոտել, զան զի Պորտիւրի տակաւին եւս կենդանի գոլով՝ ոչ իշխեր նստել եւ տառցանել, այլ ճեմքը, այլքն ասեն ոչ, այլ հակառակէր Պորտիւրի, զի նա նստեալ գոլով՝ ինքն յոտն կացցէ: Այ զայդասեն, սուս ասեն, այլ եւ պատռէր զնա եւ պաշտէր, որպէս եւ ուրեմն բազին կանգնեաց, եւ մակագրեաց այսպէս: «Քաղին այս Պորտիւրի, զոր կտնգնեաց Արիստոտել առն՝ զոր չարք եւ

ու գովելոյ զնա արժանի են, (Անեստիկ 1833,
էջ 281):

Խոկ էլիասին ընծայուած Ստորոգութեանց
մեկնութիւնը զեմականների անուան ծագման
մասին տալիս է բոլորովին տարբեր ու հակառակ
բացատրութիւն. “Ճեմականք կոչեցան, ոչ եթէ
ի ճեմել ինչ ուսուցանելին եւ ուսանելին, այլ վասն
զի յաջօրդեցին զպարապարանն ուղատոնի միջնոր-
դութեամբ Սպեւտիպոսի” (Անկն. Ստորոգ., էջ 10):

Դ. Որ էլիասին ընծայուած Ստորոգութեանց
մեկնութեան հեղինակը դաւիթ Փիլիսոփան չէ,
այդ ակնյայնի երեւում է դաւիթի ու նորագիւ-
մեկնութեան նաեւ այն հատուածներից, որոնք
Նուիրուած են խորթ շարագրածութեանց խնդրի
լուսաբանութեանը (տե՛ս “Դաւիթի Անյաղթի,
Վերլուծութիւն Կերածութեան Թորփիւրի”,
էջ 252—253 եւ “Անկնութիւն Ստորոգու-
թեանցն”, էջ 37—38): Այս ընդարձակ հա-
տուածների հանեմատութիւնը, Բուռեկի կազծիքով,
պարզ ցյց է տալիս, որ դպրանք չեն կարող համա-
րուել միեւնորին հեղինակի բացատրութիւններ:

Ա. Բուռեկի այս դիտողութիւնները, ինչպէս
տեսնում ենք, միանգամայն հիմնաւոր են եւ
ապացուցանում են, անտարակոյս, որ էլիասին
ընծայուած Ստորոգութեանց մեկնութիւնը դաւ-
իթի աշխատութիւնը չէ: Բայեւ յունարէն ձեռա-
գիրների վերնագրերը վերագրում են այդ մեկ-
նութիւնը դաւիթ Փիլիսոփային, սակայն այդ
հանդամանքն այնքան էլ կարեւոր չէ, որովհետեւ
այդպիսի շփոթումներ յունարէն ձեռագիրներում

առվարական են եւ ուրիշ շատ գեղքերում, ինչ-
պէս ցոյց է տուել Ա. Բուսէն:

§ 12. Ա. Բուսէնի իշխանութեան առաջարանում
իր հրատարակած թէ պարփիւրի Կերածութեան
եւ թէ Ստորոգութեանց մեկնութիւնները վերա-
գրում է Էլիասին, որին համարում է Արքազիո-
դորոսի աշակերտ եւ վեցերորդ դարի մեկնիշ:

Պարփիւրի Կերածութեան մեկնութիւնն
էլիասին վերագրելու նրա գլխաւոր հիմքը կազ-
մում է Փիլոպոնոսի վկայութիւնը: Փիլոպոնոսը,
Աշտակելով Էլիաս մեկնիշին, որպէս հեղինակ
պարփիւրի Կերածութեան մեկնութեան, քաղում
է այդ մեկնութիւնից հետեւեալ հատուածը,
որը գտնում է Ա. Բուսէնի Էլիասին վերագրուած
Կերածութեան մեկնութեան բնագրում:

Brand, p. 11^o 37.

Elias, p. 52.

'Էլիաս ծէ օ լէղուդիւց տօր
է գարնօն էր և տօ անդ
ձգելու լարածնուաս, լե-
ցան տօր 'Աշուլլա Պողունդու
մէր ծիա տօր պրօւչի լաւըն
տօր Պողեա, Ալակունդու ծէ ծիա
տօր լորջա Ալակուն, և ա
Փիլուան մէր ծիա տիւ պրօւչի
լաւըն տիւ Փիլաւ, և ա
Թետուան ծէ ծիա լորջա
լաւըն տիւ Թետուաւ.

ημεῖς ծէ ևν ու տօ անդ
ձրկութմաւ լարածնուաս
իծու յաջ ճ Աշուլլա և Պողունդու
մէր ծիա տօր պրօւչի լաւըն
տօր Պողեա, Ալակունդու ծէ ծիա
լորջա տօր Ալակուն, և ա
Փիլուան ծիա տիւ պրօւչի
լաւըն տիւ Փիլաւ, և ա
Թետուան ծէ ծիա լորջա
լաւըն տիւ Թետուաւ.

Ն՞յյն Ներածութեան մեկնութիւնից քազուած եւ Էլիասին վերագրուած նման հատուածներ գտնուում են նաև յունարէն ձեռագիրներում (տե՛ս A. Busse, Eliae in Porphyrii Isagogen եւն, էջ V եւ VI): Ա. Բուսէն, Հիմնուելով իր այդ ուշագրաւ ու ուղիղ դիտողութիւնների վրայ, հաստատուն ու անտարակուաելի է համարում, որ Պորփիրի Ներածութեան վերոյիշեալ մեկնութեան հեղինակն Էլիասն է:

Ինչ վերաբերում է իր հրատարակած Ստորագութեանց մեկնութեանը, Բուսէն այդ մեկնութիւնը եւս վերագրում է Էլիաս մեկնիչն, համարելով նրա բռվանդակութիւնը, մեկնական եղանակն ու մաքերը նման ու համապատասխան Ներածութեան մեկնութեանը: Իր այդ ենթադրութիւնը նա փորձում է Հիմնաւորել, մատնացոյց անելով Ստորոգութեանց մեկնութեան մեջ Ներածութեան մեկնութիւնից առաջ բերուած բառացի մի քաջուածք:

“Eundem autem auctorem. — auctor է Բուսէն իր հրատարակութեան առաջաբանում, — et Eliae in Isagogen commentarium et hunc in Categorias librum conscripsisse cum universo librorum consensu ex sententiarum ordine ac ratione dicendi conspicuo docemur tum illo illustri loco (p. 116, 27), qui ad verbum cum eo qui laudatur (p. 33, 2) concinit, (A. Busse, Eliae in Porphyrii Isagogen ect, p. VIII):

Π. Ρωτακής μαστικής αριθμ. φαρμακοδρυ
ζειστελεβαῖς έ¹.

Elias in Porph. 33, ε.

“διὰ δὲ τὸ οἰκονομικὸν γέγραπται αὐτῷ ὁ Οἰκονομικός τὸ σύγχρονα, ἐπεὶ φημοι ἐκ τεούρων οχέων ουγκεκροτῆσθαι τὸν οἶκον, πατρὸς πρὸς τέκνα, ἀνδρὸς πρὸς γυναῖκα, δεοπτότουν πρὸς δούλους, εἰσιόντων πρὸς ἔξιόντα, ένα μήτε πλείστα τὰ εἰσιόντα τῶν ἔξιόντων (φειδωλία γάρ τοῦτο καὶ ἀνελεύθερία) μήτε πλείστα τὰ ἔξιόντα τῶν εἰσιόντων (ἀσωτία γάρ τοῦτο), ἀλλ’ ἐπίσης..”

Elias in Categ. 116, 23

“ἄλλα μήν καὶ οἰκονομικά εἰσιν αὐτῷ γεγραμμένα βιβλία, ὡς τὸ Οἰκονομικὸν σύγχρονα καὶ Περὶ συμβιώσεως ἀνδρὸς καὶ γυναικός, ἐπεὶ ὃ λέγεται ἐκ τεούρων οχέων ουγκεκροτῆσθαι τὸν τὸ ἔχοντα οἶκον, πατρὸς πρὸς τέκνα, ἀνδρὸς πρὸς γυναῖκα, δεοπτότουν πρὸς δούλους, εἰσιόντων πρὸς ἔξιόντα καὶ ὡς εἴρηται ἦμεν ἐπειδὴ τῆς Παροφύλιον Εἰσαγωγῆς Προλεγομέτοις..”

Π. Ρωτακής μαστικής αριθμ. Πιστορικο-
θεωνց մեկնութեան ոյս հատուածը Հայերէն
թարգմանութեան մէջ չկայ: Հայերէնը շռնի ոչ
վերացիշեալ քաղուածքը, ոչ էլ “ա՞ս բօդյա:

¹ Հմման: Նաև: Պահմ., էջ. 209. “Այսոն զի Արիստոտել գրեաց զրարդականն, յարում վասն բարուց համաւ. Եւ վասն առն յարում վասն անտեսականնին համաւ. յարում առն. թէ շորք են ընթացակիցք ուն ի առն կարպատութիւն: Արիստոտելին առն եւ կնոշ ուն պիտինն. եւ աէր յարդեաց վերայ. Եւ երկիր զ ի վերայ ծառայից. Եւ շափառութիւն էլեւ մասից: Այսոն զի երկարածիւրացն անշափութիւն յառեցան է: զի էլեւ բարում են մասուր եւ զուզարեաց ելք, ոյնպիսին ընդ ադանու հաջուք. իսկ էլեւ զուզարեաց մասուր եւ առաւել էլք. ոյնպիսին ընդ անուածին է: Հմման: Նաև: յանաբեկն բնադիրը: Davidis Prolegomena Philesophiae, ed. A. Busse, էջ. 74:

γῆμεν ἐν τοῖς τῷ: Πορφυρίου προλεγομένοις π
φύκαιοισθιεῖντο, οἷοι τοῦτοι οὐδεὶς ζωτικῶν δή
απαρχῆς σπονδέροι. “ἴσακι τὸντοις ρίζην αἰγαλεῖν” οριστεῖ
Στοντερήνεα καλέσεις φρεστόν τοῖς τοῦτοις τοῖς τοντερή-
ναις καὶ σωρατέοις σπονδέαν, οὐρανὸν τοῦτον κεῖναν καὶ
σπονδέαν απόν τοις τοῦτοις τοῖς τοντερήναις οὐρανόν τοῦτον τοῖς τοντερή-
ναις (Πατρ. Περὶ β., έξ 16, 18—19).

Πελεψέων ἀρτετοῖς εἰς τοῖς εἰρηταῖς γῆμεν
βιοσφέρησ, οἷοι ζωτικῶν δή, ζωτικῶν αρτετοῖς, οὐλα-
νητοὶ βιοσφέρησι βιοσφέρην τοῦ: Σωγέρειν σθαρά-
μενοι σθέαντες μέχρι οὐρανού ζωτικῶν δή μαργαρη-
τοῖς τοῖς τοντερήναις σπονδέαν τοῖς τοντερήναις τοῖς τοντερή-
ναις τοῖς τοντερήναις τοῖς τοντερήναις τοῖς τοντερήναις τοῖς τοντερή-
ναις τοῖς τοντερήναις τοῖς τοντερήναις τοῖς τοντερή-
ναις τοῖς τοντερήναις τοῖς τοντερήναις τοῖς τοντερή-

Σωγέρειντοις μέχρι τοῖς τοντερήναις τοῖς τοντερή-
ναις τοῖς τοντερήναις τοῖς τοντερήναις τοῖς τοντερή-
ναις τοῖς τοντερήναις τοῖς τοντερήναις τοῖς τοντερή-

Οιστρόπ. Περὶ γνοιόθεων.

Elias in Categor.

- | | |
|--|--|
| 1. 2, 16. “Ἐπει τοιούτοις οὐδεὶς τοῖς τοντερή- | 108, 23. “καὶ καλῶς εἶπεν
ναισπεροῖς αρτετοῖς τοῖς τοντερήναις.” |
| 2. 2, 22. “ἴσακι τοῖς τοντερή- | 108, 27. “τὸ δὲ ‘ἀστριον’
ναισπεροῖς τοῖς τοντερήναις τοῖς τοντερή- |
| 3. 14, 2—3. “Ἐπει, οὐ | καὶ αὐτὸς καλῶς πρόσκειται.” |
| Περὶ γνοιόθεων τοῖς τοντερή- | |
| 4. 38, 25. “οριστεῖν τοῖς τοντερή- | 115, 6. “ἄλλος, ὁ ‘Ἄλι- |
| ναισπεροῖς τοῖς τοντερήναις τοῖς τοντερή- | ζαρός, ἵστις εἶπεν πρὸς
τοῖς τοντερήναις τοῖς τοντερή- |
| ναισπεροῖς τοῖς τοντερήναις τοῖς τοντερή- | αὐτοῖς.” |
| 5. 39, 25. “οριστεῖν τοῖς τοντερή- | 128, 25. “ὅτε εἶρηται..” |

5. 40, 15—16. “Կակ ես ա—
ռեմ”, ձեր վարդապետու, մա—
կազրեմ Ատորոգութիւնու:

133, 24. “Հյա ձե, գոյօն

ծ յիմէտերօս ծմծառալօս, Էլի-

կազրեմ Ատորոգութիւնու:

Ատորոգութեանց մեկնութեան վերոյիշեալ
յունարէն հատուածը, որ, ըստ երեւոյթին՝, երա-
ծութեան մեկնութիւնից է քաղուած, ում էլ որ
նա վերագրուելու լինի, բուն մեկնիչին թէ խմբա-
գրող ունկնդրին, յամենայն գեպս, կարսղ էր,
յիբաւի, հիմք ծառայել Ա. Բուսէին ենթա-
դրելու, որ “Երածութեան ու Ատորոգութեանց
յիշեալ մեկնութիւնները, հաւանաբար, միեւնոյն
մեկնիչի գործ են”:

Միանգամայն ուղիղ է նաև Ա. Բուսէի
դիտագրութիւնը, որ այդ մեկնութիւնների մէջ
կրկնուած են յաճախ միեւնոյն մաքերը զրեթէ
միեւնոյն բառերով։ Այդ եւս կարեւոր մի կռուած
է յօգուտ Ա. Բուսէի վերոյիշեալ ենթագրու-
թեան։

Արդ՝ տեսնենք, կարելի չէ արգեղօք Բուսէի
այդ ենթագրութիւնը, որ հաւանական է թւում,
հաշտեցնել հայ մատենագրութեան տարածայն
վիճայութիւնների հետ։

§ 13. Հայ Հայելու հայութեան առաջնական
կայութեան մասնաւոր Առաջնական արդիութեան
կայութեան մասնաւոր է Ալյուդեանուր Դիմիշն։ —
Լինասին վերագրուած Ատորոգութեանց մեկնու-
թեան հայերէն թարգմանութիւնը, ինչպէս
վերեւ յիշուեց, սկզբից ու վերջից թերի է։
Լշմիածնի միակ ձեռագրի հայերէն բնագիրը։
որ համապատասխան է Ա. Բուսէի հրատարակած

յունարկն ընտգրի էջ 108, զ. մինչեւ էջ 200, և
շահեի վերնագիր, ուստի եւ անյայտ է մնաւմ, թէ
ում էր վերագրւում այդ երկն ըստ հայերէն
վերնագրի:

Կան առկայն կողմնակի ցուցումներ, որոնցից
կարելի է հետեւ ցնել, որ տասնեւ մէկերորդ դա-
րից սկսած նոյն այդ գրուածքը համարուել է
Ալիմպիոգրուս մեկնիչի աշխատութիւն:

Ինպէս յայտնի է, Յովհաննէս Որոտնեցին
եւ նրա աշակերտը Գրիգոր Տաթէեւացին ունեն
գրած Արիստոտէլի մի քանի երկերի մեկնու-
թիւններ, ի թիւս որոց եւ Արիստոտէլի Ստորո-
գութեանց մեկնութիւնը:

Եջմիածնի մատնագրարանի թիւ 1834 ձե-
ռագրում (== Արին. Ցուցակ, թ. 1791) Յով-
հաննէս Որոտնեցու այդ մեկնութիւնն ունի հե-
տեւ եալ վերնագիրը. “Յոամեծի Յովհաննու
Հայոց փիլիսոփայի եւ վարդապետի ի հաւաքումն
հաւաքուատ վերծանութեան Ստորոգութեանցն
Արիստոտէլի ի Գրիգորէ աշակերտէ”:

Յովհաննէս Որոտնեցին իր այդ աշխատու-
թիւնը կողմել է, ոգտուելով, գլուխորապէս,
Ասորոգութեանց վերաբերեալ Շնագոյն մեկնու-
թիւններից, որո՞ք յայտնի են եղել իրան։ Որոտ-
նեցու Ստորոգութեանց լուծմունքի քննութիւնից
երեւում է, որ նրան, իրբեւ գլխաւոր ազրիւր,
ծառայել է Էլիասին ընծայուած Ստորոգու-
թեանց մեկնութեան հայերէն թարգմանու-
թիւնը, որից նու քաղել է բաղմանթիւ հատուած-
ներ ու վեայութիւններ։ Այդ քաղուածքները

սակայն մէջ են բերուած : Հետեւ իրրեւ Կլիասի,
այլ իրրեւ Ոլիմպիոդորոս մեկնիչի կարծիքներ:

Պարզ է ուրեմն, որ Ստորոգովթեանց Նոյն
մէկնութիւնը, որը քո սէն վերացրել է Կլիաս մեկ-
նիչին, Յովհաննէս Արտօնեցուն յոյտնի է եղել,
իրրեւ Ոլիմպիոդորոս փիլիսոփայի աշխատութիւն:

§ 14. Ուշադիտուրուն վրա-բառուն հա-
մարձնելը Ուշադիտուրուն Ստորոգովթեանց լուծունու-
թիւն: — Յովհաննէս Արտօնեցուն Ստորոգովթեանց
լուծմունքը, ինչպէս ասացի, կիսով չափ կազ-
մուած է Ոլիմպիոդորոսից անուած քաղուածք-
ներից: Ոլիմպիոդորոս մեկնիչը յիշւում է իրրեւ
այդ քաղուածքների հեղինակ մօտ առանեւ հինգ
անգամ:

Ապացուցանելու համար, որ Արտօնեցու-
լուծմունքի մէջ Ոլիմպիոդորոսին վերագրուած
բոլոր հատուածները համապատասխան են եւ
գրեթէ Նոյնը Կլիասին վերագրուած Ստորոգո-
վթեանց մեկնութեան հետ եւ որ Արտօնեցին այս
վերջին մեկնութեան հայերէն թարգմանութիւնը
համարել է Ոլիմպիոդորոսի աշխատութիւն, բե-
րենք մի քանի օրինակներ.

Յովհաննէս Արտօնեցիւ:

Ելիաս, էջ 15, 11-24.

“Առ այս այլոսէն պա-
պատճանէ Օլաւ մինաց որոս”
եթէ առնեացին գոյքո զինչ
եւ իցէ անուած եւ սակ-
մանի է հաղորդեալ եւ
“Զոր եւ ցուցանեմք ի
բաժանմանէ այլովէն. յո-
մենացն ժամ երկու ց իրաց
առնիցելոց, աւնու զաց ա-
մանն էւ սահման՝ հանդիպի

¹ Տես Հեռացիք Կլիասինի մասնակտութանի թր. 1834,
թր. 468—79 ուն.

ոչինչ է որ ոչ անի զառաւ։ Արդ՝ ի սպանե ամանը աւ-
նուամբ հազարդին եւ յինին
համանուն։ Եւ ամանց իրաւու-
թ յինին բազմանուն։ Եւ
ամանը անուամբ եւ իրաւու-
թ յինին փազանուն։ Բակ
մանը ոչ անուամբ եւ ոչ
իրաւութին եւ յինին
այլանուն . . . “առելովն
համանուն անուամբ մի եւ
իրաւութի” նշանակեաց
զրագմանուննն։ որք են
իրաւութ մի եւ անուամբ ոյլ,
որպէս սուսեր, նրան, դա-
տապր, վազակու որ։

Նային կամ ըստ երկուց
իրաց հազարդին։ Եւ ըստ
անուանում եւ ըստ ասհ-
մանում՝ եւ յինին փազա-
նուամբ, եւ կամ ոչ ըստ
ասհմանում հազարդին։ Եւ
զոյանան այլանունքն, եւ
կամ ըստ ումեմն հազարդին
եւ ըստ ումեմն զանազանին։
Եւ ոյս դարձեալ կամ ըստ
անուան հազարդին եւ ըստ
իրաց զանազանին։ Եւ զոյ-
անան համանունքն, եւ կամ
ըստ իրաց հազարդին եւ ըստ
անուան զանազանին։ Եւ
յինին բազմանունքն՝ որպէս
խաղ, դարձուր, մարտուց, դա-
տապր, վազակու որ։

Յովիաննէս Արքանեցի։

“Յօվ Առաջաւ մարիամ պրո-
է ոյսովէ։ յետիցն է ինչ
որ ըստ դաշտութեան է եւ
է ոչ է ըստ հնդեան։ Բակ
ըստ ինդեանն է։ որ ըստ
ըաժանաման է եւ է որ ոչ
է ըստ ըաժանաման։ Արդ՝ որ
ըստ ինդեան է ըստ ըաժան-
աման առնէ զարակն, բակ որ
ոչ է ըստ ինդեանն կամ կրա-
յումն միայն է կամ ըստ
կարման այլացն իմանի։ Արդ՝
որ կրայուն միայն է առնէ

Հյիսս, էջ 81, 11-27.

“Կակն կամ նենիմա-
կայում է կամ ոչ նենիմա-
կայում։ Եւ եթէ ոչ նեն-
իմակայում առնէ զպոյ-
ցութիւն, բակ եթէ նեն-
իմակայում։ կամ ըստ ին-
դեանն է կամ ոչ ըստ ին-
դեանն է, եթէ ըստ ինդեանն
է կամ ըստ անելին է կամ
անդաժանելին։ Եւ եթէ ըստ
անելին է առնէ զբանակն,
բակ եթէ անդաժանելին է
առնէ զբանակն։ քանզի թէ-

¹ Արքանեցու բնադիրը ունի անդ ազնաւուած և ու-
սութանառ որ։

զառինչն, եւ որ ըստ կադ-
ման այլոցն են՝ առնեն զգեց
ստորագութիւննն. որ է
այլնպէս. ի գոյացութենէն
եւ ի քանակէն լինի ուրեն
եւ երբն, ի գոյացութենէն
եւ յառնչն լինի կազն եւ
առնեն, ի գոյացութենէն
եւ ի յորակէն լինին առ-
նեն եւ կրելն:

ովհան եւ կարծի բաժանելի
գոլ որակն, ոյլ առկայն
վասն նիւթ ոյն է բաժանելի.
ի ակ եթէ ոչ ըստ ընթեան
կամ կարութ միայն է եւ
առնեն զառինչն, եւ կամ
ըստ կարման այլոց իմանի
եւ լինին վեց ստորագու-
թիւնը. քանզի շորից եւց
պարզ ստորագութեանց
գոյացութեան, քանակի,
որակի, առընչի ի շարամա-
նութ թենէ սոցա այլ ստորա-
գութիւնըն ձնանին. յէս-
թենէ եւ ի քանակը՝ ուր
եւ երբն, յէս թենէ եւ
յորակը թենէն՝ առնեն եւ
կրելն, յէս թենէն եւ յո-
րակըն՝ առնեն եւ կազն:

Յովիաննէս Որոտնեցի:

“Առէ Աւայա մարիադ որոս
թէ ստորագութեան յեղաւ-
նակը երեք են. է որ ըստ
ընաւթեան եւ է որ ոչ է
ըստ ընութեան եւ է որ
ըստ պատահման եւն:

Ելիսա, էջ 88, 23 եւն:

“Քանզի Ասորագութիւն
եռակի է կամ ըստ ընու-
թեան կամ ոչ ըստ ընու-
թեան կամ ըստ պատահ-
ման եւն մինչեւ 89, 8:

Յովիաննէս Որոտնեցի:

“Իսկ քանակն զի նախո-
ցաս եղեւ. որակին, զնէ
դպտաճառ. Աւայա մարիադ ու
ըստը եւն:

Ելիսա, էջ 114, 23 եւն:

“Ենդէր յէս գոյացու-
թեան զքանակէ ըստոն
ենար: Եւ առելու, եթէ
ըստ վեց պատահաց եւն
մինչեւ 115, 8:

կարելի է առաջ բերել ուրիշ բազմաթիւ քաղաքածքներ եւս, սակայն առելորդ է այդ որովհետեւ վերոյիշեալ հատուածների համամատութիւնից իսկ պարզ երեւում է, որ Յովհաննէս Արտօնեցին օգտուել է Ելիասին ընծայուած Ստորոգութեանց մեկնութեան հայերէն թարգմանութիւնից, վերագրելով այն ոչ թէ Ելիասին, այլ Ալիմպիոդորոս մեկնիչին:

Այդ՝ հարց է ծագում, թէ ինչ ազրիւրից է բղխում Արտօնեցու այդ վկայութիւնը: Անշուշտ՝ սիստ կը լինէր կարծել, որ Արտօնեցու տեղեկութիւնը սոսկ մի հնԹադրութիւն է, հիմնուած քանակուական համարձակ ու անհիմն հետախուզման վրայ: Ամենից հաւանականն է՝ ընդունել, որ հայերէն ձեռադիրը, որից օգտուել է Արտօնեցին, ունեցել է վերնադիր եւ այդ վերնագրում յիշուած է եղել Ալիմպիոդորոս մեկնիչը՝ իրեւ մեկնութեան հեղինակ:

§ 15. Գուշաց Ա-ն-դ-ո-ր-ո-ն ի-ն-յ-ս-ն-ի-ւ-ն
Ալիմպիոդորոնին ինչ ո՞ւ ոչուունիւն հայերէն ն-ը-դ-
ժ-ն-ո-ւ-ն-ի-ւ-ն-ո-ւ-ն: — Յովհաննէս Արտօնեցուց
անկախ՝ Ալիմպիոդորոսի ինչ որ երկի հնագոյն
հայերէն թարգմանութեան մասին հաղորդում
է Գորիգոր Արդիատրոսը՝ “առ վարդապետն Աար-
գիս, ուզուած իր նամակում:” Բայց եւ գտեալ
մեր իսկ ի հայ լեզու, — գրում է նա, — գրեալ
թարգմանչացն՝ զզիրս Ալոմպիոդորոսի, զոր Դա-
սիթ յիշատակէ, կարի յոյժ պրանչելի եւ հրա-

շալի բանաստեղծութիւնն մակաւասար բոլոր
իմաստասիրական բանից¹:

² Զգիրս Աղօմագիտորասի, զոր Դաւիթ յի-
շատակէ, կարծում ենք, որ Էլիասին ընծ այս ած
Ատորովութիւնն ոյն մեկնութեան հենց այն հայե-
րէն թարգմանութիւնն է. որից քաղաւած օրէն-
ոգառուել է Յովհաննէս Արաւանեցին:

Մազ իստրոսի հաղորդած աեղեկութեան
մէջ ուշագրաւ մի կէա կայ: Աղօմագիտորասի
գրուածքի հայերէն թարգմանութիւնը նա հա-
մարում է՝ “թարգմանչաց” գործ: Ինչպէս կը
տեսնենք, թարգմանութեան մասին այդ աեղե-
կութիւնը միանգ ամայն սխալ է, եթէ՝ “թարգ-
մանչաց”, ուսկ հասկանանք Առհակ-Արքուոյ
աշակերտներին:

Մազ իստրոսի վկայութեան մէջ ուշագրու-
թեան արժանի է սակայն նրա նկատողութիւնը,
որ իր գտած թարգմանութիւնն այն Աղօմագիտ-
որասի աշխատութիւնն է, որին յիշատակում է
Դաւիթ փիլիսոփան: Եւ իրոք Նորոգղատուական
Դաւիթը մեկնիւը՝ “Առհանք իմաստասիրութիւնն է,
իր երկում երկու անդամ յիշում է՝ “Աղօմագիտ-
որաս փիլիսոփանին”² եւ իմաստասիրական մի
քանի հարցերի մասին առաջ բերում նրա
վկայութիւնները:

Այդ Աղօմագիտորասի այդ վկայութիւնները,
մնչպէս կը տեսնենք, գտնում են հենց Էլիասին:

¹ Տ. Ա. Կոստանդնուպոլիս: Պարիսոյ Մազիստրոսի
թղթերը. ՎաՀՀ պահպանական 1910, էլ. 66:

² Տ. Ա. Հնակոնի 1833, էլ. 143 և 164:

ընծայուած Ատարոց ութեանց մեկնութեան մէջ, այն էլ՝ ոչ իրրեւ այլուստ առաջ բերուած քաղուածքներ, այլ որպէս սեպհական հայեացքներ մեկնութեան հեղինակի:

Հաստ պարզ է, ուրեմն, որ Առագիւտարոսի զգիրս Ալիմազիոդորոսի զոր Դաւիթը յիշատակէ ովկայութիւնը վերաբերում է Էլիասին ընծայուած Ատարոց ութեանց մեկնութեանը: Եթանգամոյն պարզ է նաև, այն, որ Գրիգոր Առագիսարոս եւս, ինչպէս եւ Յովհաննէս Որոտնեցին, նոյն այդ երկը համարել է ոչ թէ Էլիասի, այլ Ալիմազիոդորոսի աշխատութիւն:

Ինձ թւռում է, որ Առվակէս Խորենացու յիշած¹ Ալիմազիոդորոս փիլիսոփան եւս նոյն այս Ալիմազիոդորոսն է: Խորենացու ասելով՝ Ալիմազիոդորոսն այն կատարելադոյնն էր յմաստաւերներու մէջ, որոնց մօտ սովորում էին հայերը փիլիսոփայութիւն: Այս զկայութիւնը վերաբերում է, իմ կարծիքով, ոչ թէ հինգերորդ գարի պատմագիր Ալիմազիոդորոսին, այլ Աղեքսանդրիացի երկու Ալիմազիոդորոս փիլիսոփաներից մէկին:

Աւելի քան հաւանական է, որ Խորենացու զկայութիւնը վերաբերում է նորապղատանեական Դաւիթի մեկնիչի ուսուցիչ՝ կրտսեր Ալիմազիոդորոսին: Աս է այն՝ կատարելագոյն, Փիլիսոփան, որ մեծ հռչակ է ունեցել Հայաստանում: Արա փիլիսոփայական դպրոցից են ծագում հայերէն

¹ Տ. ՏԵՇ Պատաճառթիւն Հայոց, Տիգիս 1913, էջ 2-22, 25 էջ. 212:

թարգ մանուած յմաստասիրտական երկերի մեծա-
գոյն մասը։ Այդ երկերի թարգ մանները կարող
էին, իրաք, աշակերտած լինել կրտսեր Ոլիմպիո-
դորոսի կամ նրա յաջորդների մաս։ "Օրշանուի
երկերը եւ նրանց վերաբերեալ մեկնութիւնները
թարգ մաննելու համար բաւական չեն, անշուշտ,
յունարէն լեզուն միայն իմանալ, այլ հարկաւոր
էր ունենալ փիլիսոփայական լուրջ նախա-
պատրաստութիւն։ Յունարան դպրոցի առաջին
թարգ մաննիշները կարեւոր այդ նախապատրաս-
տութիւնը կարող էին ձեռք բերել իրանց ժա-
մանակակից յունարէն դաստանդող իմաստա-
սէրների մաս։

Փիլիսոփայութեան պատմութիւնից յայ-
անի է, որ զանազան աղջերի զրոյցները հաւա-
քել ու այլարանօրէն մեկնել են, գլխաւորապէս,
նորպէտառնական իմաստասէրները։ Խորենացու
խօսքերը՝ «ոմանք այլազգ արար եւ ոմանք այլա-
քանարար զրոյցս մատնից տային»՝ կարող են
վերաբերուել աւելի շուտ նորպէտառնական մեկ-
նիւ իմաստասէրների միջավայրին, քան Ոլիմ-
պիոդորոս պատմագրին։

Խորենացու վկայութեան բոյոր ակնարկ-
ները, ինչպէս տեսնում ենք, համապատասխան
են ու յարմար դաւիթ մեկնիցի ուսուցիչ կրտսեր
Ոլիմպիոդորոսի համար։ Նոյն Ոլիմպիոդորոսի, որին
յիշում են նաև գրիգոր Մագիստրոսը եւ Յով-
հաննէս Արքանցին։

§ 16. Դաստի Դինիչն Լուսուն ընծոյաց-
ակաց-ակացնեան Հենունին-ը յոյանի է Եղիշե-
կաց-ակացնեան Հենունին-ը յոյանի է Եղիշե-

² Οσηρη γατερα. Θέλω να
βάλω λεπτούς λεπτούς πάντας
την αυτήν την πατέρα μου.

“**Հ**այոց ձեզ այս ապար
ինչ ունեմ շարուցք թէ անհե,
այսում առելով է եթէ
Արք ես դքեզ մինչընթան կո-
չչա ելուն առ ի բացմաց թէ ա-
խանման թէ ինչ է մինչ առա-

¹ Μυθώδης βέαρχος μάλιστα πάλι την απόφευκτη παναγίαν την οποία προστάτης της ήταν, διατήρησε μέχρι την απομάκρυνση της Βασιλικής στην Κωνσταντινούπολη (αναφέρεται στην Ιστορία της Βασιλικής στην Κωνσταντινούπολη, τόμος Α', σελ. 122 - 123).

թեամբ, տակաւին եւս նոր կարին եւս նորագոյնց ես, զոյով համբառի, առա եթէ ազա թէ ոչ՝ փախիցէ ի ոչ՝ փախիցէ ի քէն ճշմարիսն, թախանձութիւն ճուն կոչեաց զհեռակացութիւն դութիւն իրացն՝ ալոինըն զրանու կանն։¹

կարին եւս նորագոյնց ես, ազա թէ ոչ՝ փախիցէ ի քէն։ Ճշմարտաթ ախանձութիւն կաջեցեալ զրացագունութիւն իրացն, իսկ իրթութիւն զգիստութիւն գոյիցն։²

4. Դաւիթի - Ալիմազիոգորոսի թմասասիրական զպրոցի երկերի խմբին պատկանում է, անտարտակոյս, նաև Հատուած ինչ մեկնութեան Ատորոգութեանցն Արիստոտելին, որ տպագրուած է Լիհասի Ատորոգութեանց մեկնութեան վերջում (Էջ 140—149)։ Խնչպէս վերոյիշեալ թարգմանութիւնները, նոյնպէս եւ այս հատուածի թարգմանութիւնը, ընդհանուր առմամբ, ունին յունաբան բառապաշարի ու լեզուական առանձնայատկութիւնների նմանութիւններ, որովհետեւ յունաբան զպրոցի զարգացման միեւնոյն երրորդ շերտի արտադրութիւններ են։ Սակայն ուշադիր քննութիւնը ցոյց է տալիս, որ Անանունի մեկնիցի հատուածի թարգմանութիւնը հազիւ թէ կարելի լինի վերագրել Դաւիթի Ասմանքի կամ Լիհասի Ատորոգութեանց մեկնութեան թարգմանիչներին։ Այս ենթադրութեանը հիմք են ծառայում, ամենից առաջ, յունաբէն նման հատուածների տարրեր թարգմանութիւնները յիշեալ երկերում։ Այսպէս.

Անան. մեկն., Էջ 142—143.

Ասման. Էջ 164.

¹ Արդ են իդանիկեցիք՝ ² Եւ պարտ է զիտել, Արիստոփոսս եւ Աղէսմ եթէ ամս Աղէսմզառասս բախտու, որոյ ընթերցեալ ամբուակիացի կարծելով,

զՊՂատունական դիրքուն, որ
վասն խոփման մահուն, եւ.
ոչ իմացեալ զառացեալսն՝
ընկեց զինքն ի պարագէն:
Աւան ուշ առացեալ է ի
Պատիբը. Բնըթերն սշիր,
Կազմովառառա Ամբովեցի
վաղեալ ի բարձր պարբռ-
ութն ի զնտին, արժանի
ունեց զործեաց մահու, ոյլ
զՊղատովին, որ վասն հո-
գոյ զբեր՝ ընտրեալ ու:

Եթէ վասն թշնա-
ման թեաման Պղատունի շինեաց
Արիստունէլու զլի իիւնն.
Յանդի Աթենացիր գար-
ձեալ կուէին զնա՞ առաց,
Եթէ բառ լիցի ինձ գալ
յայն քաղաք, ուր նախանձ
ի նախանձու վերայ ծնրա-
նոյ եւ զրպարտութիւնն ի
զրպարտութիւնն վերայ¹:
Այսուիկ յայտնեաց զրպա-
ման թիւն զրպարտութացն.
զրպարտութո զնուս կոչեաց
վասն Ասկրառոյ, զի ետուն
նման ի բանդին զիսնիսնն:

Եթէ Պղատուն զրեաւ որա-
կան մահուանէն հրամայէ
խոկալ իմաստասիրին, ըն-
կեցեալ զինքն ի պարագէն
վախճանեցաւ. վասն որոյ
առև Կայիմացաս, Ութախա-
ցիր ովք արեգակն, Կղէ ու-
սու ուսու Ամբովեցի վա-
ղեալ ի բարձրացնոր պա-
րբռութ ի զժոխս, արժանի
ինչ ու ուսնալ մահու, ոյլ
շոր զՊղատունի զրպագո-
հոգւոյ զիբն ընտրեալ ու:

Անան. մեկն., 147, 9—17.

“Եթէ ոչ վասն թշնա-
ման թեաման Պղատունի շինեաց
Արիստունէլու զլի իիւնն.
Յանդի Աթենացիր գար-
ձեալ կուէին զնա՞ առաց,
Եթէ բառ լիցի ինձ գալ
յայն քաղաք, ուր նախանձ
ի նախանձու վերայ ծնրա-
նոյ եւ զրպարտութիւնն ի
զրպարտութիւնն վերայ¹:
Այսուիկ յայտնեաց զրպա-
ման թիւն զրպարտութացն.
զրպարտութո զնուս կոչեաց
վասն Ասկրառոյ, զի ետուն
նման ի բանդին զիսնիսնն:

Հմմտէ նաեւ. Հետեւեալ նման հատուած-
ները՝ Անան. մեկն. 144 30—145 2, Էլ. 5 3-6

Ելիաս, 30, 11—17.

“Բանզի յետ մահուն Առ-
կրասայ, ելէալ յլունէնից՝
տածիւր ի Քազարիցում,
եւ վերստին կոշելով որ
յլունէնս եւ ոչ հաւանեալ
զրեաց այսպէս. Այ հա-
ւանեցուցից յլունէնոցին
երկիցու մեզանչել զիմաստա-
սիրութիւն, ուռ որս խո-
զատանձ ի վերայ խոզա-
տանձի ծնրանայ եւ թուզ
ի վերայ թզոյ¹: Թուզ ի
վերայ թզոյ, զրելով՝ զզու-
պարտութն նշանակեացոյ:

¹ Աղիստի յունարեն ընացիրն ունի աշխարհական հայութ էւ ծշրջ ցղօճառու, օնչօր ծ' ու օնչօր:

եւ Աահմ. 132 10-17, Անան. մէկն. 148 6-7,
Էլ. 53 13-14 եւ Աահմ. 133 34:

Աշաղըութեան արժանի են նաեւ Անանուն մէկնիչի ու Կիբասի Ատորոգութեանց մէկնութիւնների մէջ լեզուական հետեւեալ առրերութիւնները.

1. Յունական իմաստասիրական դպրացների անուններն Կիբասի թարգմանը միշտ հայացնում է, իսկ Անանուն մէկնիչի թարգմանը գործ է ածում՝ նրանց յունական անունները։ Այսպէս՝

— 'Էքչէտէխօս' Արգնլական Էլ. 5 ա, 6 ա,
11 ա, Եփեկաբիկեան Անան. 140, 142, 144,
145, 147, բ. 'Իծուտէխօս' Հեշտական Էլ. 8, 11,
Խղոնիկեան Անան. 141, 142, 143, բ. 'Կուտէխօս'
Շնական Էլ. 4, 6, 11, 'Աիւնիկեցի' Անան. 141,
"Աիւնիկեցիք, այսինքն՝ Շնականք", Անան. 147,
բ. 'Ուրտաւշտէխօս' Ճեմական Էլ. 1, 9, 10 եւն, պե-
սիպատիկեանը Անան. 145, 146, 147, "Արիս-
տուէլականք, այսինքն՝ Ճեմականք", Անան. 142¹:

2. Թէեւ Անանուն մէկնիչի Ատորոգու-
թեանց մէկնութեան հատուածի յունարէն բնա-
գիրը գանուած չէ, բայց թւում է ինձ, որ ներ-
քեւ առաջ բերուած որինակները եւս պէտք է
լինեն յունարէն միեւնոյն բառերի ու նախագա-
տութիւնների տարրեր թարգմանութիւնները։
Այսպէս՝

¹ Դաս. ինք - Անձնագիրություննի խմբի միաւ երկիրու մ' Նոյն բառերը թարգմանուած են՝ Շնականք Աահմ. 166, Դաս.
272, Անձնականք Աահմ. 167, Դասարք. 280, 307, 325, 326.
"Եփեկաբիսաւացն վելլուսայից, Ա. Էլ. մէկն. 579:

— αἰρεσιάρχης ζερδοւածապես Ել. 3, սկզբնաւոր ζերձուածին Ընան. 141, նաեւ ζերձուածապետ Ընան. 147, բ. ձո՞ւ ՛զ պարիծօչ (El. 108 թ, 113 թ) ի հայրենեաց Ել. 3, 10, ի գաւառէն Ընան. 141, 147, բ. ձո՞ւ ՛տ տրածոս ՛զ Հայէ (El. 111 թ) ի յեղանակէ վարուցն Ել. 6, ի յեղանակէ կենացն Ընան, 141, 147, բ. ձո՞ւ ՛տ տիւօս սումթէթշուշօչօչ (El. 112 թ) յումնմնէ պատահմանէն Ել. 9, յիմքէ պատահմանէն Ընան. 142, ե. ծիւրի շնոր դ ձնակնաւա. դ մէն շնորան ՛տ ակնօս դ ձեւ չքսիւտան (El. 111 թ) “քանզի երկակի է անպատճառութիւն՝ մին յոռեգոյն քան զամաւթ եւ մին է լաւագոյն” Ել. 7 11-13, իսկ Ընան. 141 11-13՝ “անաւմաւթութիւնն կրկին է կամ ի վեհագոյնն կամ ի վատթարագոյնն”, և. ծիւ շնորապօտնու մաթիւնա (El. 128 թ) յաղագս բարեմառութեան աշակերտաց Ել. 37 12-13, վասն բարերարութեան աշակերտացն Ընան. 148 22-23, ե. ուրիշէ շնոր, որ թրակացու քերականութիւնից սկսած յունարան բոլոր շերտերի երկերում թարգմանուած է “քերգող”, Ընանունի Ասուրոգութեանց մեկնութեան հատուածի մէջ թարգմանուած է “արարիչ”, էջ 144 թ՝ “իրրութէ յարարչէն իսկ ասացեալ” միշտ յարախրախանալ յաղագս հիւրուց եւ բարեկամաց ելամոից:

5. Սոյն աշխատութեան առաջին մասում ցոյց տրուեց արդէն, որ Արխատութէլի իմաստասիրութեան վերաբերեալ հնագոյն հայերէն եր-

կերը, որոնք վերագրուած են եղել, մեծ մասամբ, դաւիթ Անյաղի փիլիսոփային, թարգմանուած են յունարէնից եւ զանազան հեղինակների աշխատութիւն են: Խակ այժմ դաւիթ-Ալիմաղիոզորուի խմբին պատկանող հայերէն թարգմանութիւնների մանրազնին քննութեամբ լուսաբանւում է եւ մի այլ կարեւոր խնդիր, — որ յունարան երրորդ շերտի այս թարգմանութիւնները ոչ միայն տարրեր են յունարան առաջին եւ երկրորդ շերտերի թարգմանութիւններից, այլ եւ իրանք խակ, լինելով լեզուական տեսակէտից խմբակից, չեն կարող համարուել միեւնոյն թարգմանչի աշխատութիւն: Ուրեմն, ինչպէս տեսմում ենք, կատարելապէս սխալ է զրւում խմաստասիրական երկերի թարգմանութեան վերաբերեալ խնդիրը, երբ բանասիրական այս կամ այն աշխատութեան մէջ խօսք է լինուած շարունակ արիստոտէլեան երկերի ու մեկնութիւնների հայ թարգմանչի մասին:

§ 46. Յունակն առանուած հարաբերէ բարձրէ բարձրէ բարձրէ յունակն առանուած հարաբերէ բարձրէ բարձրէ բարձրէ յունակն առանուած: — Յունարան հնագոյն թարգմանութիւնները ծագել են, ինչպէս տեսանք, ոչ թէ միասնարար ու միաժամանակ վեցերորդ, եօթներորդ կամ ութերորդ գալում, այլ զանազան ժամանակաշրջաններում, եւ բաժանուած են երեք տարրեր շերտերի: Արդ՝ այս հիմնական եղբակացութեանը յանգելուց յետոյ, կարծում եմ, որ դժուար չէ բացատրել նրանց մէջ հանդիպող համանման հատուածների թարգմանու-

թեան այն կապն ու առընչութիւնը, որ նկատուած են մասամբ բանասիրական նորագոյն աշխատութիւններում։ Համանման այդ հատուածներն են.

1. Սահմ., 165, 16—19.

Պիտ., 360, 20—21.

“Ուրակէն եւ թեւզնիս
յայտ առնէ ցովն Ակիւռնոս
առելով” թէ պարտէ յաղ-
քառութենէ փախչել եւ ի թէնէ փախչել, եւ ի մեծն
միջամիտեցն անկանել ծովն,
անկանել ծով եւ կամ” ի
եւ ի վիճաց, Ակիւռնէ, հո-
վիճաց հասիլ ի բարձանց,
ոիլ յարեցակնակոխու”¹.

Եթէ չեմ սխալում յունարէն համանման
այս հատուածների տարրեր թարգմանութիւնը
մատնանշուած է Ագ. Բառումդարուների Über das
Buch “Die Chrie” ուսումնասիրութեան մէջ²,
դժբախտաբար, այդ աշխատութիւնը չունեմ
այժմ ձեռքիս տակ։ Ամենառաջքաւան է այս
հատուածներում յունարէն դիմիտուս բառի տար-
րեր թարգմանութիւնը՝ արեգակնակոխն եւ բարձր։
‘Ալιթատօς այս բառը, ինչպէս յայտնի է, հաս-
կացուել է յունարէնում երկու տարրեր իմաս-

¹ Այս հատուածի յունարէն բնողիրը ունի ԴԱ. Prolegom., էջ. 32. 19—23.

“Ως καὶ ὁ Θεογνίς τοῦτο δηλοῖ πρὸς Κύρον τινά
οὗτοι λέγων·

Χοὴ περίην φεύγοντα καὶ ἐς μεγακίσεα πόντον
Πίπτειν καὶ πειρῶντα, Κύρον, κατ’ ἡλιβάτων,,

² 8th Zeitschrift der Deutschen Morgenländischen
Gesellschaft, 1886, էջ. 457—515.

տալ՝ կամ իրբեւ դիմո-թառոս = անմատելի,
խիստ բարձր, եւ կամ իրբեւ դիմո-թառոս =
արեգակնա-ճեմ, արեգակնա-կոխ¹: Արդ՝
Յաղագս պիտոյից ո երկի թարգմանն այդ բառը
հասկացել է առաջին իմաստով, իսկ Աահմանքի
թարգմանը՝ երկրորդ իմաստով: Աւելի քան
պարզ է, որ այդ թարգմանները պէտք է լինեն
տարբեր անձնաւորութիւններ: Արդ՝ քանի որ
սոյն իմ աշխատութեան մէջ ցոյց է արուած ար-
դէն, որ “Յաղագս պիտոյից ո գրուածքը յունա-
ցան առաջին շերտի թարգմանութիւնն է, իսկ
Աահմանքը՝ երրորդ շերտի, եւ որ այդ թարգ-
մանութիւնները ծագել են տարբեր ժամա-
նակաշրջաններում”, շատ պարզ ու հասկա-
նալի է այժմ՝ թէ այդ թարգմանութիւնների
եւ թէ դրանց թարգմանիչների իրարից տար-
բեր լինելը, եւ այդ խնդիրը պէտք է համա-
րել ըստ իսլերչնականապէս լուսարանուած ու
յաւծուած:

2. Մի ուրիշ նոյնքան հետաքրքրաշարժ հասուած մատնացոյց է արել Կիկ. Աղօնցն իր “Արտեսա Դիմոնիսեայ քերականի” աշխատութեան մէջ.

Umwelt., Bd. 182, 9-11.

W. W. Purdy, Jr., 1942, 15-18.

“ԵՐԵՎԱՆ Է՝ բազկացու-
թիւն ի հասողաթեալէն
արքայանութեամբ նախա-

“Արական է” բազմացու-
թեան ի թողմանէ նախա-
թեառ առ. ի սիստմա-

¹ Sie Dr. W. Pape's Griechisch-Deutsches Handwörterbuch, Bd. I, 1888, 47, 1161.

կրթեալ ու ի պիտանաւ ցու ինչ իրա, որ ի կենցացու ինչ կոստառաւնեւ, որ ի զումը՝
կենցաղումն.¹

Խակապէմ՝ այս հատուածը ոչ թէ թրակացու քերականութեան հայերեն բնագրի մէջ է գտնում, այլ դաւթի փիլիսոփայի քերականի մեկնութեան մէջ², սակայն Նիկ. Ագոնցը կարծում է, որ նոյն հատուածը եղած պիտի լինի թրակացու քերականութեան յաւելուածում, որտեղից եւ, հաւանաբար, քաղել է դաւթի փիլիսոփան։ Արդ՝ այս հատուածում ուշադրութեան արժանի է, ամէնից առաջ, ինչպէս շատ ուղիղ դիտել է Նիկ. Ագոնցը, չառնդիլ յունարէն բառի տարրեր թարգմանութիւնը՝ հասողութիւն եւ թաղումն։ Աահմանքի թարգմանը չառնդիլ հատ հակացել է չառնդիլ պատճանութեան համար, հասու լինել բայից, իսկ միւս թարգմանը՝ չառնդիլ պատճեութեան պարզ է, ինչպէս եւ ձիշտ եզրակացնում է Նիկ. Ագոնցը, որ այս հատուածների թարգմանները պէտք է լինեն տարրեր անձնաւորութիւններ։ Սակայն Նիկ. Ագոնցը ենթադրում է միեւնոյն ժամանակ, որ այդ թարգմանութիւնները մնած միւս մասներում այնքան են իրար համապատասխան, որ կարող են լինել միեւնոյն գրական

¹ Յունարէն բնագիրը ան DAV. Proleg., էջ 144 5—6-ունից հօտի սնօտիմա էն հաւանդիպան իմպերոյ օսցցեցու բարմեղ ործ ու ունու տէջոտու տան էր ով թիւն.

² Նիկ. Ագոնց. Արաւաս դիմանիսէնց քերականի էջ 80.

գպրոցի արտադրութիւն։ Այս ենթադրութիւնն ըստ իս պէտք է համարել այժմ՝ անընդունելի, քանի որ գիտենք արգեն, որ Ասհմանը եւ Թրտակացու քերականութիւնը տարբեր ժամանակի ու յունարան տարբեր գպրոցների թարգմանութիւններ են։

Յ. ՀՀիասը եւս իր Ստորագութեանց մեկնութեան մէջ ունի երկու հատուած, որ գտնում են նաև Թրտակացու քերականութեան մէջ։

ՀՀիաս, 55, 2-6.

Թրակ. 15, 22-16, 6.

"Եւ ոչ զքերդողս պարտ
է ընդունել, ուզ հակառ-
շեն զարանունան անուա-
նականաց եւ բայականաց։
Քանզի է Փափկանէս ի
փափկաւթենէ եւ Աս-
տուածանէ։ յաստուծոյ։
Իսկ բայականը՝ ի սիրելց
սիրեմ եւ յիմանալոյ իմաս-
տուն զար պարտ է զամե-
նայն յարանուն կոչել։
Իսկ նոյս զամանան անուա-
նական կոչեն եւ զամանան
բայական։"

ՀՀիաս, 51, 21-24.

Թրակ., 19, 9-12.

"Եւ կամ քառ իրաց հա-
զարդին եւ ըստ անուան
զամանակին, եւ լինին բազ-
մանունըն՝ որպէս խոր, դա-
րապր, մարտացու, զարա-
կաւոր, սուսեր, նրան¹ ու

"Փափանուն է որ ի զա-
մանան անուան զնոյն ցու-
ցանեւ. որդոն՝ խոր, դա-
րապր, մարտացու, զար-
ակաւոր, սուսեր, նրան,
կաւոր, սուսեր, նրան¹ ու

¹ Տե՛ս նաև Կընու 55, 11

Ամկ. Աղոնցը, որ վերոյիշեալ իր աշխատութեան մէջ քննութեան է առել այս համուածները (Էջ CLXX—CLXXXII), մատնանիշ է անում, որ յաւարկէն թէան եւ Թօնքան անուններն Կլիասի մէկնութեան մէջ թարգմանուած են՝ Աստուածանէս եւ Փափկանէս, իսկ Թրակացու քերականութեան մէջ՝ Տիրիճան եւ Խրախճան: Քայլ յաւարկէն Հիպօ՛, սաշարա, սոպանդ, ձօր եւ գածցանօն բառերը թարգմանուած են թէ Կլիասի եւ թէ Թրակացու նոյն երկերում միատեսակ՝ դալապը, մարտացու, սուսեր, խաղ եւ նրան: Ամկ. Աղոնցի կարծիքով, Երկրորդ հատուածում բառացի այդ նմանութիւնը կարելի է բացատրել երկու կերպ՝ կամ թարգմանութիւնները միեւնոյն անձի աշխատութիւն են եւ կամ Կլիասի թարգմանը օգտուած պիտի լինի Թրակացու քերականութեան Հայերէն թարգմանութիւնից Խնչ վերաբերում է թէան եւ Թօնքան անունների տարրեր թարգմանութեան, Ամկ. Աղոնցը Հնարաւոր է համարում, որ միեւնոյն թարգմանը նոյն անունները կարող եր թարգմանել մի դեպքում՝ Տիրիճանու Խրախճան, կամ նենալով Հայոցնել յունական այդ անունները, իսկ մի այլ դեպքում՝ Աստուածանէս եւ Փափկանէս, աշխատելով պահել նոյն անուններն անփոփոխ՝ համապատասխան յունարէն բնագրին: Կարեւոր այս խնդրի վերջնական լուծումը նա թողնում է անորոշ, մինչեւ որ երեւան կը գան նոր փաստեր ու տուեալներ, որոնք ցոյց կը տան Կլիասի թարգմանչի կախումը Թրակացու քերականութեան թարգմանութիւնից:

Քանի որ սոյն իմ աշխատութեան մէջ ցոյց արտեց արդէն, որ թրակացու քերականութիւնը յունարան առաջին շերտի թարգմանութիւններից ամենահինն է, մինչդեռ Էլիասի Ատորոգութեանց մեկնութիւնը որոշուեց, որպէս յունարան դպրոցի երրորդ շերտի աշխատութիւն, թարգմանուած շատ աւելի ուշ՝ մի այլ ժամանակաշրջանում, ուստի խօսք անգամ չի կարող լինել, որ թրակացու քերականութեան ու Էլիասի Ատորոգութեանց մեկնութեան թարգմանները լինեն միևնույն անձը:

Ըստ երեւոյթին, բազմանուն կամ վազանուն գաղափարի ուսհմանման համար ընդհանուր ընդունուած բացատրութիւն է համարուել, թրակացու քերականութեան աղղեցութեամբ, “խաղ, գալարր, մարտացու, վաղակաւոր, սուսեր, նրան” վերոյիշեալ օրինակը: Կոյն սցո օրինակը ծանօթ է եղել նաև: Այս չըսկցուած գրոց մեկնութեան թարգմաննին, որը խօսելով բազմանութեան մասին, ասում է: “Խսկ ի բազմանութեան մասին, որպէս եւ սուսերն եւ նրան միեւնոյն երավ՝ զանազան զամանէ ստորոգին անուանը” (էջ 498, 9–11): Այս ընդհանուր օրինակը ցոյց է տալիս միայն, որ յունարան երկրորդ եւ երրորդ շրջանների թարգմանիչները ծանօթ են եղել թրակացու քերականութեան հնագոյն թարգմանութեան, եւ նրանք, ինչպէս անուանը, գործ են ածել յաճախ նրա քերականական յատուկ եղբները:

Ապրեւորը սակայն Էլիասի մեկնութեան

մէջ ոչ թէ այդ նմանութիւններն են, այլ նրա
յունաբան լեզուի ու քերականութեան վերեւ
մատնանշուած այն էական առանձնայատիպ։
Թիւնները, որոնք տարբերում են նրան թրակա-
ցու քերականութեան եւ միւս հնագոյն թարգ-
մանութիւններից։ Այդ ակներեւ տարբերու-
թիւնները նկատելի են նոյն իսկ վերոյիշեալ
հատուածներում։ Այսպէս՝ թղթաւուչօչ եղբը
թարգմանուած է Ելիասի մեկնութեան մէջ՝
բայական, իսկ թրակացու քերականութեան
մէջ՝ բայածական։ Նմանապէս՝ հակ նախազրու-
թիւնը հակործել բայի մէջ (Էլ. 55, 2) յա-
տուկ է, ինչպէս գիտենք, յունաբան երկրորդ
եւ երրորդ շրջանների թարգմանութիւններին,
իսկ թրակացու քերականութեան մէջ, ինչպէս
եւ յունաբան առաջին շրջանի թարգմանու-
թիւններում, այդ նախազրութիւնը դեռ եւս
գործածական չէր ինձ թւում է, որ թրակացու
եւ Ելիասի թարգմանութեան ինդիրը եւս վեր-
շնականապէս լուծուած պիտի համարենք այն
իմաստով, որ այդ թարգմանութիւնները տար-
բեր ժամանակաշրջանների ու տարբեր թարգ-
մանիշների աշխատութիւն են։

4. Ելիասի Ասորուգութեանց մեկնութեան
մէջ, ինչպէս տեսանք (§ 44, 3), Արիստոտէլի
Ատորոգութեանց հայերէն թարգմանութեան
բնագիրն ամբողջովին քաղաւած էր Յամբողիքեան
խմբի հնագոյն թարգմանութիւնից։ Կոյն մեկ-
նութեան հայերէն բնագրի քննութիւնը ցոյց է
տալիս, որ Ելիասի թարգմանը ծանօթ է եղել

Նաեւ. յամբողիքեան խմբի Արիստոտէլի “Յաղագս
մեկնութեան” գրոց հայերէն թարգմանութեան,
որից նա քաղել է հետեւեալ հատուածը.

Լիլիան, 126, 8—11. Յաղ. մեկն., 464, 16—17.

“Իսկ Ներում” Յաղագս
մեկնութեան բան առնու.
զշարադրիցեալն եւ զնշա-
նակուն. քանզի ուսչմանեւ-
լով առէ. եթէ բան է ճայն
Նշանական, որոյ մասանցն
իմ Նշանակ է զատ.” *Բան է ճայն Նշանական,
որոյ մասանցն իմ Նշա-
նական է զատ.”

Արիստոտէլի Անդրլուծականիցի մեկնութեան
թարգմանը եւս ունի Արիստոտէլի “Յաղագս
մեկնութեան” գրուածքից հատուածներ, սակայն
այդ հատուածները համապատասխան չեն
յամբողիքեան խմբի թարգմանութեան:

Վերլ. մեկն., 574, 21—24. Յաղ. մեկն., 476, 29—31.

“Քանզի Յաղագս մեկ-
նութեան առէ. ի՞նչ Այսու-
քիկ” որպէս ի զերլուծա-
կանն զան առացեալ, նոյն-
ոքու զատեցին.” *Արդ ոյսորիկ” որպէս ի
Անդրլուծական առէ, ոյս-
ոքու զատեալ է:

Վերլ. մեկն., 574, 21—24. Յաղ. մեկն., 476, 29—31.

“Իսկ Յաղագս մեկնու-
թեան ոյսորիկ ուսչմանէ
զնա առելով, Տրամարտա-
կան է՝ հարցու մե պատու-
խանոց միոց նախազառու-
թեան, կամ միոց մասնա-
թեան հակառակթեան”:

“Արդ եթէ հարցու մե
որամարտական ըն ոյս-
ուխանութեան ութեան է
ինդիք. կամ ուս որդեւուն,
եւ կամ միոց մասին հա-
կառակթեան”:

Աւշադրութեան արժանի են այս համառածներում, գլխաւորապէս, “Նախադասութեան” եւ “առարկելոյն բառերը, որոնք յօւնարէն միեւնոյն բառէսէւ բառի թարգմանութիւնն են: Առարկութիւն բառը նախադասութեան իմաստով գործ է ածուել նաև: Այս չորսութիւնները մարգմանութեան մեջ, տես 486, 19-20՝ “առանց նախադասութեանց կամ” առարկութեանց:

§ 47. Գլուխիւթիւն կարգավորութեան բնակչութեան հայեցիւն նույն բնակչութեան ընթացքունք է ներառութեան հայեցիւն կամ առաջիւնութեան իւրիւնք իւրիւնք իւրիւնք իւրիւնք: — Յունարան թարգմանութիւնների ու նրանց թարգմանիների խնդիրը, ինչպէս անանում ենք, շատ աւելի բարդ ու խորմին է, քան ենթազրել է մեր մատենագրական աւանդութիւնը: Այդ առեսակետից, առանձին ուշադրութեան արժանի է պարսիւրի շաբաթութեան թարգմանութիւնը, որն այդ բարդ հարցերից թւում է ինձ ամենագժամարը:

Առաջին հայեցքից կարող է թուալ, որ այդ թարգմանութիւնը վերագրուելու է նոյն անձին, որը թարգմանել է դաւաիթ մեկնիչի նոյն այդ շաբաթութեան վերլուծաթիւնը: Վերլուծաթիւն թարգմանը շաբաթութեան բնագրի բոլոր մեկնելի հատուածները բառացի ու գրեթե անփոփոխ քաղել է հենց այդ թարգմանութիւնից, եւ այն վերջինների յունարան բառապաշարը, բնականարար, աղդել է եւ վերլուծաթիւն լեզուի վրայ: Հնագոյն ձեռագրերում

այս երկու թարգմանութիւնները գտնվում են իրար կից՝ նախ՝ չերածութեան բնագիրը եւ ապա՝ դաւիթ մեկնեսի վերլուծութիւնը։ Այս բոլոր նշանները, միասին առնուած, տպաւորութիւն են ստեղծում, իբր նրանք միևնույն թարգմանչի գործ են։ Աակայն այս շատապ ու դիւրին ենթադրութեան դէմ ծագում են մի շարք ծանրակշիռ կանկածներ, երբ դիմում ենք նրանց յունարան լեզուի ու քերականութեան մանրախոյզ ու մանրամասն քննութեան։ Աւումնասիրութեան ընթացքում երեւան են գալիք սրանց յունարան բառամբների ու քերականական առանձնայատկութիւնների մէջ լեզուա-քերականական բնորոշ խոտարումներ ու տարածայնութիւններ, որոնք հազիւ թէ որեւէ ոյլ կերպ բացատրուեն, քան նրանց թարգմանման ժամանակի ու թարգմանութեամբ։ Կերպեւածաջ եմ բերում լեզուա-քերականական այդ շեղումներից մի շարք օրինակներ, որոնք յատկ են Պարփիւրի Կերածութեան թարգմանութեանը։

1. Աւշագրութեան արժանի են, ամենից առաջ, Պարփիւրի Կերածութեան թարգմանութեան մէջ յունարան այն առանձնայատկ բառերը, որոնք, տարբերուելով դաւիթ-Ալիմպիազորսի խմբի միեւնույն նշանակութիւնն ունեցող բառերից, համապատասխանում են, մէծ մասամբ, նախկին հնագոյն թարգմանութիւնների ուրոյն բառապաշտին։ Այդ կարգի բառերիցն են. — նուրբագույն շնորհակալ սեռ

Ներ. 231, և 232, ա, իսկ գերազանցեալ սեռ
դպրոփ. 284, 26 եւն, 289, (=DPorph. 131, 15
եւն, 137, 9), վերանցեալ ունի 8իմ. Հակ, 86 տ.
բ. նոյնաթշդիկօչ չնծօչ վայրանցեալ տեսակ Կեր.
231, ս, իսկ ի ներքոյ տեսակ դպրոփ. 295, 19,
296, 7 (=DPorph. 147, 10, 148, 5), 8իմ.
Հակ. ունի “զե վայրանցեալն ի ստորագոյն մա-
սունս երկրի ինքն է եւ վերանցեալն գեր զամե-
նայն երկինս” 176, 28-30, վայրանցութիւն
177, 34¹. Ք. սշէստէ կալումն Կեր. 228, 7, բա-
զազանութիւն դպրոփ. 273, 35, 295, 16 եւն
(=DPorph. 111, 31, 32, 147, 15 եւն), Աահմ.
196, 11, 197, 12, (=DProl. 60, 27, 61, 20),
սակայն կալումն դպրոփ. 331, 18, կալը
թը. 32, 7, σχέτικός ըստ կալման Էլ. 84, 17, 18,
101, 25, 28 (=El. 167, 3, 5, 177, 16, 18).
Դ. περὶ ἡπτετον բագձաձական Կեր. 233, 17,
բակձաձական թը. 18, 4, բակձաձելով Կրեն.
Ընդ. Հերձ. 168, 5. Ե. τὸ անա, τὸ չաշա վերին,
վայրին Կեր. 233, 22, 35, ըստց վերին, ներքին
Էլ. 135, 8 եւն (=Էլ. 197, 15), πρὸς τὰ անա,
πρὸς τὰ չաշա առ վերագոյնն, առ ստորնագոյնն

¹ Ալ. ոյց նախադրութեալ եան զ ործածաւթիւնն է քիմիք եասի Հականութեալ արգանձնաւթեալ մէջ, սրինակի վայրարաւեալ 143, 11, վայրանիկալ 176, ս. վայ-
րեկինութեալ 213, ս. վայրեկիթեալ 311, 11, վայրառութեալ 304, ս.
վայրարեկիմ 198, 22, վայրինս թիւն 9, 20, 132, ս. եւն-
մի. ս. թիւն արգանձնաւթիւններութ վայր նախադրութեալ թեան զոր-
ծածաւթիւնն է Հակոս արկես է, ա Էս. վայրարեկրաւթիւն թիւն Թիւս. 424, ս. վայրարեկեալ Պիտոս. 517, ս. վայրի լուս թիւն Ամեկ. ի Ալ. երլ. 588, ս. “վերանիկել կոմ” վայրանիկել. ՕՊԵՐ. 513, ս.

Դպրոփ. 295, թ. 30, 296, 1 (= DPorph. 147, 16-17-18). Հ. ձնացքական հարկաւոր ներ. 227, 2, իսկ կարեւոր դպրոփ. 267, ծնտօն ձնացքական ելոյք հարկաւորի ներ. 227, 2, գոլով կարեւոր դպրոփ. 267, 7¹. Է. պարագաներ. յանդիմանակացութիւններ. 250, թ, իսկ պարօտդու յարկացոյցեմ դպրոփ. 309, 16, էլ. 39, 2, նաև թր. 22, 14. ը. պարածօտէս ընձեռութիւններ. 227, 9, գործ է ածուած, զլիսաւորապէս, առաջին եւ երկրորդ շրջանի յունարան թարգմանութիւններում՝ Փիլ. 1ին. Էջ 412, Փիլ. էլ. 444, Իրեն. Ընդդէմ հերձ. 37, ընձեռնեմ Պիտ. 341, Ար. Ստ. 364, ՅԱՄ. 411, ՅՊԵՐ. 522, 8իմ. Հայկ. 236, 237, իսկ պարագաներ. յարաւարեմ ԱԿՀմ. 135, թ (= DProl. 11, 5), էլ. 71, թ (= El. 153, 10), աւանդեմ, աւանդութիւն էլ. 103, 120 (= El. 178, 188). Բ. հմտօնօչ իշակես ներ. 246, թ. թ, իսկ Կիսէշ ԱԿՀմ. 140, թ (= Prol. 14, 36). Դ. ՇԷԱՆԹ, ծաւրքա, տուղ, տողիս, ծաւրքօտէս ներ. կոտորեմ 231, թ, 236, թ, 241, թ, կոտորում 233, թ, ծաւրքի դիրք: կոտորիլ թր. 21, 14, իսկ հատանեմ, հատած, հատում, բաժանում եւն դաւիթ-

1 Կարուծութեան մէջ՝ աելոյք հարկաւորին թարգմանութեանը, ըստ երես պահին, խորին և թարգմանութեանը պահին, աելոյք հանդիսանալով, «հարկաւորի բառի փոխարժեն առաջ գերազանցութեանը և դարձածեալ «կարեւորի» բառը, իսկ «էլ» բայց փոխարժեն «կուլ» դպրոցի 267։ Այսորութեան արժանայի է նաև, հետեւ հայ դարձած անձը՝ «կարեւորակ» որ ընդ մինչ կարիք վախճանի, այսպիզի հարկաւորապէս դպրոցի 267։

Ալիմագիսդորսոսի խմբի երկերում. իւ. չիշ, միա, չն մու. Կեր. 233, 15, գործ է ածուած յունա-
բան առաջին եւ երկրորդ շերտերի թարգմանու-
թիւններում՝ թր. 8, 15, 21, 29, Փիլ. 1/ն.
332, պիտ. 398, 501, 503, 527, Տիմ.
Հական. 65, 68, 176, 201 եւն յաճախ, Ար.
Պէր. 464, 468, մում 468, 17, մզյր 476, ու
եւն, ՑՊէր. 533, 547 եւն, խէջ Դաւիթիթ-Ալիմ-
պիտդորսոսի խմբի երկերում այլեւս չի հան-
դիպում:

2. Անդուական այս նկատառութերից ան-
կախ աւելի եւս մեծ կարեւորութիւն ունեն
Կերածութեան թարգմանութեան քերականա-
կան առանձնայատկութիւնները, որոնք ունեն
հնութեան պարզ նշաններ, բնորոշ են, մասամբ,
միայն այս թարգմանութեան համար եւ գոր-
ծածական չեն այլեւս դաւթի Վերլուծութեան
մէջ, ինչպէս եւ դաւիթիթ-Ալիմագիսդորսոսի խմբի
միւս թարգմանութիւններում:

3. Այդ տեսակէտից ուշադրութեան ար-
ժանի է, ամենից առաջ, սեռական հօլովի վեր-
ջաւորութեան ը տառը, որ գործ է ածուած
միայն Կերածութեան բնագրում. օրինակ՝ Ելոյր
Էջ 227, կոչեցելոյր, սեռոյր, ասացելոյր 228,
Առկրատոյր, Պղատոնոյր, մարդոյր, միայնոյր, մար-
դոցըն 229, եւ նոյն վերջաւորութիւնները
կրկնում են շարունակ ամբողջ երկում: Դաւթի
Վերլուծութեան թարգմանութեան մէջ այդ
վերջաւորութիւնները հանդիպում են միայն տեղ-
աեղ՝ Կերածութեան բնագրից քաղուած հա-

տուածներում, բայց ոչ բուն մեկնութեան մէջ - չկան նրանք եւ դաւիթ - Ոլիմպիագորոսի խմբի միւս թարգմանութիւններում։ Թէեւ յունաբան երկերի հրատարակութիւնները դեռևս գիտական բնոյթ չունեն եւ համեմատութեան չեն առնուած ձեռագրական բալր տարբեր ընթերցուածները, բայց որքան ես ծանօթ եմ Հնագոյն ձեռագրերին՝ նրանց մէջ եւս սեռականի արտասովոր այդ վերջաւորութիւնները գտնուում են միմիայն Ներածութեան բնագրում։ Դժուար է ենթագրել, որ զրանք խմբագրուած ու փոփոխուած լինեն յետագայ ժամանակներում յատկապէս դաւիթ - Ոլիմպիոդորոսի խմբի երկերում, ուստի հաւանական է թւում ինձ, որ վերջիշեալ թարգմանութիւնները համարուելու են տարբեր թարգմանիչների աշխատութիւն։

Բ. Ներածութեան թարգմանութեանը յառակ է նաեւ հետեւեալ տառացի դարձուածքը՝ չն շը ու չու չու թարգմանուած է “ի Ներում զինչենց” եւ չն շը օպօւնու ու չու չու “ի Ներում որպիսիինչենց” Ներ. 229, 230, 244 եւն., դաւ.թիւ Աերլուծութեան թարգմանը, քաղելով ուսարոսի այդ յունաբանութիւնները Ներածութեան բնագրից, ինը երբեմն փոփոխում է այդ խրժնաբանութիւնները եւ նոյն եղբները թարգմանում։ “ի Ներ զինչեռումն” եւ “ի Ներ որպիսիինչեռումն” դոդորի. 256, 288 եւն., իսկ Սահմանաց թարգմանն աւելի եւս հայցուած ձեւով ունի “ի զինչեռումն” Սահմ. 122, նաև

դադում. 356. “Աներում” եւ այս ներում յունարանութիւնները միւս թարգմանութիւններից եւ ոչ մեկում գործածական չեն. մի անգամ միայն Արխանուտէլի “Յաղագս մեկութեան” բնագրում պատահում է “Ներում բարոյն” ասացուածքը, որ թւում է աղձառած կամ կասկածելի (անմ Fr. C. Conybeare, Anecdota Oxoniensia, էջ 50:

Դ. Խնապէս վերեւ յիշեցի (§ 44, 3), Կերածութեան թարգմանը յունարէն էν նախարի զիմաց երկու անգամ միայն գործ է ածել նաեւ. “Ն” նախարիրը, որ սովորական էր յունարան առաջին եւ երկրորդ շերտերի թարգմանութիւններում: Թւում է, որ Կերածութեան բնագիրը, ունենալով քերականական իւրայատուկ կերտումներ, զերծ չէ եղել հնագոյն թարգմանութիւնների անմիջական ազգեցութիւնից՝ ոչ միայն իր բառապաշարի (§ 47, 1), ոյլ եւ քերականութեան մէջ: “Արանց փոխագարձ առընչութեան յատկանիշներ կարող են համարուել նաեւ. արուելուտական յանարանութիւնների ու քերականական անհարազատ ձևերի հետեւեալ օրինակները. 1. οἱ κατὰ μέρος ῥυτάμασινεայ, βն. ‘Աեր. 233, 12, 233, 14, 245, 20, զըստմասնէցն’ ‘Աեր. 240, 12, 14, ի մասնէրն երեն. Ընդ. Հերձ. 31, միբառմիոցէց Կեր. 244, 20, Փիլ. 1ին. 74, ըստ միոցէրն 8իմ. Հակ. 182, 5, ըստ միոցէցն 8իմ. 6, 3, ըստ բոլորէցն Ար. ուեր. 466, 21, զայլմէց Ար. ուեր. 463, 18, 22 եւն. 2. οἱ καθ' ἔχαστον ῥυτ

բարանչիւրին Կեր. 233, 13, Ար. Ասոր. 394, իսկ իւրաքանչիւրն Գորոբի. 290, 11, 12 (=DPorph. 138, 16, 27). 3. τὰ ὑπάλληλα σὴ τῆς θεοῦ αἱ μέρες Կեր. 232, 18, 22, 234, 2, 4, Գորոբի. 294, 27, 297, 27, Էլ. 77, 26, 79, Ար. Աս. 361, 7, 4. καθ' αὐτό τοισι τοισι պատմվեան Կեր. 235, 25, 26, զբանվեանն Տիմ. Հակ. 114, 1, զբանվեանն Տիմ. Հակ. 164, 11, Էլ. 81-5. մասնեցն, առաջնեցն Կեր. 234, 19, 232, 27, Կրկնայինց և աստուածայից՝ Փիլ. 1ին, Էջ 416, անձնեցն Ար. Պէր. 461 եւն:

3. Կերածոթեան հայերէն բնագրի լեզուա-քերականական հետազոտոթիւնն անհրաժեշտ է աւելի եւս խորացնել, համեմատելով հայերէնը յունարէն բնագրի հետ¹: Քայց, կարծում եմ, որ վերոյիշեալ դիտողոթիւններն անգամ հիմք են տալիս ենթադրելու, որ այս գրուածքը թարգմանուած պիտի լինի Դաւիթթ-Ալիմպիադորոսի խմբի երկերից առաջ, հաւանաբար, յունարան երկրորդ շերտի թարգմանութիւնների ժամանակաշրջանում։ Դաւիթի Վերլուծութեան թարգմանը ոչ թէ ինքն է թարգմանել այդ բնագիրը, այլ, ըստ երեւոյթին, օգտուել է արդէն գոյութիւն ունեցող նախնագոյն թարգմանութիւնից։ Կոյնը տեղի է ունեցել եւ թրակացու քերականութեան հետ, որի

¹ Առանցքին հրատարակութիւնն իրերին հետ թալլաւուեց Բարդուի աւերածութիւնների ժամանակ, եւ այժմ գմբախտաբար, յունէի ներքիս խնդրի վերջնական լուսաբանութեան համար։

թարգմանութիւնը յունարան առաջին շրջանի
աշխատութիւն է, մինչդեռ դաւիթ քերակա-
նի մեկնաւթիւնը, ինչպէս կը տեսնենք, աւելի ուշ
ժամանակի եւ յունարան այլ շերտի արտա-
դրութիւն է:

§ 48. Արքայութեալ աղաւարքան յաշակու աշ-
խատութիւն հայերէնում նունեն մի փոքր տար-
բեր վերնագրեր՝ “Արիստոտէլին վերագրուած Ազրէ-
խօսու եւ Ազրէ մթետան գրուածքների թարգմա-
նութիւնները հայերէնում ունեն մի փոքր տար-
բեր վերնագրեր՝ “Արիստոտէլին իմաստասիրին
թուղթ առ Ազեքսանդրոս թագաւոր՝ պատմու-
թիւն յաղագու աշխարհի” եւ “Արիստոտէլին
յաղագու առաքինութեանց առ Ազեքսանդրոս
թագաւոր”:

Այս թարգմանութիւնները տպագրուած
են Աննեակում դաւիթ Անյալթի մատենագրու-
թեանց շարքում (Աննեակ 1833, էջ 603—
628 եւ 629—685), սակայն առանց որ եւ է
բաւաթար բացատրութեան, ըստ երեւոյթին,
թիւրիմացարար: Արդան ինձ յայտնի է, դրանց
թարգմանչի մասին չկայ եւ ոչ մի վկայութիւն
հայոց մատենագրական առանցքութեան մէջ, ոչ
էլ որ եւ է ակնարկ հնագոյն ձեռագիրների վեր-
նագրերի մէջ: Հրատարակիչների այս սխալն
ունեցել է անսպասելի հետեւանքներ: Համա-
կերպուելով հրատարակիչներին, դաւիթ Ան-
յալթի խնդրով զբաղուող բանասէրները եւս
համարել են այդ թարգմանութիւնները, Արիս-
տոտէլի երկերի միւս թարգմանութիւնների ու

մեկնութիւնների հետ միասին, միեւնոյն հեղինակի ու միեւնոյն մեկնիւթ աշխատութիւն¹: Առաջն հարեւանցի իսկ ծանօթութիւնն այս թարգմանութիւնների հետ պէտք է համոզէր բանասէրներին, որ սրանք, թէեւ յունաբան, բայց ընթերցանութեանմատչելի թարգմանութիւններ են, ազատ լեզուական ու քերականական այն բոլոր խժգժութիւններից, որ յատուկ են, դիսարագէս, Երիսառատէլի միւս բնագրերի թարգմանութիւններին: Կեզուական այդ տարրերութիւնը նկատած են եղել Հայկազեան բառ գրքի աշխատակիցները, որոնք նոյն թարգմանութիւնների լեզուն համարել են՝ “բառ բաւականին հայկաբան եւ ընտիր. իսկ Ասորոգութիւնըն, պերիարմնիասն, եւ որ ի սոցին սակի, են անպէտ եւ անշուք հերենարանութիւն նիւթական” (Հատոր առաջն, Էջ 10): Պրոֆ. Ֆ. Կոնիքիրը, որ համեմատել է Հայերէն թարգմանութիւններն Երիսառատէլի յունաբէն բնագրերի հետ, ուշադրուեան առնելով սրանց ուրոյն ոճը, բաժանում է այս գրուածքները դաւիթ Անյաղթին վերագրուած երկերի խթից ու նրանց թարգմանման ժամանակը յետ տանում մինչեւ ութերորդ կամ իններորդ դար (Anecd. Oxon., Էջ XXXII): Վերեւ մենք տեսանք, որ մատենագրական հայ աւանդութիւնը մեծ շփոթումների անդիք է առևել, վերագրելով յունաբան հնա-

¹ Տես Գալուստ Տէր-Միքայէլյան, Եկանիս Ծիրակացի, Առաջարշագրաց 1896, Էջ 35:

գոյն երկերի մեծագոյն մասը դաւիթի Անյաղից
 հայ փիլիխոսփային, մինչդեռ այդ գրուածքները
 տարրեր թարգմանիչների աշխատութիւն են եւ
 թարգմանուած են զանազան ժամանակաշրջան-
 ներում, սկսած, հաւանաբար, հինգերորդ դարի
 վերջերից եւ կամ վեցերորդ դարի սկզբներից:
 Այս եղբակացութեան յանդելուց յետոյ պէտք
 է այսուհետեւ անտես առնել առասպելեալ
 աւանդութիւնը դաւիթի Անյաղիցի մասին, եւ
 յունաբան ամէն մի գրուածքի թարգմանչի ու
 թարգմանման ժամանակաշրջանի ինդիրը որոշել
 համաձայն այդ նոր եղբակացութեան, հիմնուե-
 լով լեզուական ու մատենագրական տարրեր
 կարգի փաստերի վըսյու Այդ տեսակետից, Յա-
 զագս աշխարհի թարգմանութիւնը, աղաս լի-
 նելով յունաբան միւս թարգմանութիւնների
 լեզուա-քերականական խրթին անհարթութիւն-
 ներից, թէեւ համեմատաբար քիչ նիւթ է տալիս
 բազգատութիւնների համար, սակայն, այնուա-
 մենայնիւ, թւում է ինձ, որ նրա թարգմանման
 ժամանակը մօտաւորապէս որոշում է: Ինչպէս
 արդէն գիտենք, Գալուստ Տէր-Մկրտչեանը վե-
 րայիշեալ Հանանիա Շիրակացի, ուսումնասիրու-
 թեանը մէջ ցոյց է տուել, որ այս թարգմանու-
 թիւնը ծառայել է Շիրակացուն, որպէս դիմա-
 ւոր աղբիւր՝ Յաղագս շրջագայութեան երկնից ո
 աշխատութեան համար (տես Աերեւ. § 36):
 Պարզ է ուրեմն, որ այս գրուածքը թարգմանու-
 ած պիտի լինի եօթերորդ կամ վեցերորդ դա-
 րում, բայց ոչ աւելի ուշ: Թարգմանութիւնը

չի կարող լինել Շիրակացունը, անհաւանական է նաև, որ լինի նրան ժամանակակից, որովհետեւ, ինչպէս ճիշտ դիտել է Գալուստ Տէր-Մկրտչեանը, Անանիա Շիրակացին անհրաժեշտ է համարել դրսութել կամ բաց թռչնել նրա յունաբան գժուարիմաց բառերը եւ աշխատել է պատմել բաղուածքները հայերէն աւելի եւս մատչելի լեզուով։ Աւրեմն՝ շատ հաւանական է, որ այդ թարգմանութիւնը պէտք է լինէր նախնագոյն ժամանակաշրջանի աշխատութիւն։ Ճիշտ այդ եղբակացութիւնը ստացվում է նաև նրա լեզուական առանձնայատկութիւնների քննութեամբ։ Առաջ եմ բերում լեզուական իմ դիտողութիւններից ամենակարեւորները։

1. Յաղագս աշխարհի թարգմանութիւնն ունի գործածած թրկացու քերականութեան յատուկ բառերը, ինչպէս՝ ։ ՀԱՅՈՒՅ Ներկայ Ար. Աշխ. 628, 11, Թր. 22, 23, բ. Պարտիկանացած անցեալ Ար. Աշխ. 628, 13, Թր. 23, 26, բ. Աշխ. 628, 14, Թր. 23, 26, 24, 5 եւն, բ. Ծննդեամուս շաղկապ Թր. 12, 16, 35, Ար. Աշխ. 622, 6, շաղկապումն Ար. Աշխ. 624, 27, շաղկապեմ Ար. Աշխ. 624, 31, բ. Պուդուշ քերգող Թր. 1, 5, 2, 29, Ար. Աշխ. քերթող 619, 25, 627, 2, 17, բ. Կրամառայի քերականութիւն Ար. Աշխ. 617, 1, Թր. 1, ե. Էպուլանացնակապէս Ար. Աշխ. 622, 30, 626, 34, Թր. 2, 25։ Աւրեմն նրա թարգմանութեան ժամանակը պէտք է գնել թրակացու քերականութիւնից յետոյ։
2. Կոյն թարգմանութիւնն ունի այն բա-

ունըն ու նախաղբութիւնները, որմնք, ինչպէս
տեսանք, գործ են ածուել առաջին անգամ
երկրորդ շերտի յունարան թարգմանութիւն-
ներում (ան վերեւ, § 40բ, § 42դ), Այդ
կարգի բառերիցն են. — առրերութիւն օւաչօօմ
Ար. Աշխ. 613, թ, ԱԱա. 361, ս, ՅՊէա. 496,
16, Տիմ. Հակ. 262, ս. բ. մակացու չուստչիուան
Ար. Աշխ. 604, 13, ՅՍա. 422, 12, մակացութիւն
Ար. ԱԱա. 379, 4, ՅՍա. 418, 7, Տիմ. Հակ. 105,
27, Հերհակ չնանուօչ Ար. Աշխ. 611, թ, 616,
13, 19, 25, 617, 9, 17, Ար. ԱԱա. 369, ս, ՅՍա. 413,
18, Ար. պէր. 475, ս, ՅՊէր. 528, Տիմ. Հակ.
160, ս. Դ. Հակակայիլ անուսէօթաւ Ար. Աշխ.
619, ս, Ար. ԱԱա. 396, 4, ՅՍա. 425, թ, Ար. պէր.
474, ս են, Հակակայութիւն Ար. Աշխ. 617, թ.
Ե. արտօնութիւն չչօչի Ար. Աշխ. 621, թ, ար-
տունող Ար. ԱԱա. 373, թ եւեւ:

Այս բառերի գործածութիւնը Յաղացո
աշխարհի թարգմանութեան մէջ պարզ մի նշան
է ըստ իս, որ սրա թարգմանման ժամանակը շի-
կարելի իշեցնել ցած յունարան թարգմանու-
թիւնների առաջին շրջանը:

3. Ուշագրութեան արժանի են նաև Հե-
տեւեալ սակաւագիւա բառերը. — գերհիւսիա-
կան ձնտաօքչուօչ Ար. Աշխ. 605, 17, ձնտ: նա-
խագրութեան այս թարգմանութիւնն առանձ-
նայատուկ է հնագոյն թարգմանութիւններին Հե-
տեւեալ բառերում՝ ձնտանութիւն թր. 12, 15, 30, ս, դերանունութիւն թր. 27, 28, ս,
Փիլ. լին. 70 (Թրակացու քերականութեան աղ-

դեցութեամբ նաև. Ար. պէր. 489, 11), ձւա-
ռօծուչօն թր. 18, 1, 20, 18, առէշրւտօս դերա-
քրիստոս Տիմ. Հակ. 37, 40, 41 եւն. ք. Հածեոն
կենդանատեսակ Ար. Աշխ. 605, 27, նաև. Շիր.,
Մամբ., Աահ. կթ. արմաւ., կենդանակերպ Շիր.,
Տիմ., իւլի կենդանակ Փիլ. ել. 521, կենդակ
Փիլ. ել. 520, պիտ. 489, 16, Փիլ. քհ., է. ու-
ժշտօն, ուժշտւոն Ար. Աշխ. կրական 606, 31,
Ար. Աա. 388, 6, ՅԱա. 410, 11, կրաւորական
թր. 47 եւն.

Վերայիշեալ բոլոր գիտողութիւններն ի մի
ամփոփելով, կարծում եմ, որ Յազագս աշխար-
հի թարգմանութեան ժամանակը պէտք է դնել
վեցերորդ դարի երկրորդ կիսում կամ եօթերորդ
դարի սկիզբներում՝ Տիմոթէոսի Հակածառու-
թեան եւ յամբուրեան խմբի թարգմանութիւն-
ների ժամանակաշրջանից սկսած մինչեւ Ընանիա
Շիրակացու ժամանակը։ Եյս եզրակացութեամբ
յիշեալ թարգմանութեան ժամանակի վերա-
բերմամբ ստացւում են որոշ ու հաստատուն
սահմաններ, մինչդեռ առաջ այդ սահմանները
մնում էին այնքան անորոշ, որ պրտֆ. Ֆ. Կոնֆ-
րիրը հետարաւոր էր համարել յետ առնել այդ
թարգմանութիւնը մինչեւ ութերորդ կամ ան-
գամ իններորդ դար։

§ 49. Պ. Ա. Ի. - Ո. Ա. Դ. Պ. Դ. Դ. Ն. Ի. Վ. Ի. Վ. Վ. Վ.
— Պատիմ - Ոլիմպիոդորոսի խմբի թարգմանու-
թիւնները, թէեւ որոշ չափով նման են իրար
յաւնաբան իրանց բառապաշարով, սակայն, ինչ-

պէս գիտենք, չեն կարող բոլորն էլ միասին լինել միեւնոյն թարգմանչի աշխատութիւնն լւրեմ՝ նրանց թարգմանման ժամանակը որոշելիս՝ պէտք է աչքի առաջ ունենալ, որ կարող են նրանք եւս թարգմանուած լինել տարբեր ժամանակներում։ Մինչ այժմ արուած գետողութիւններից սրանց թարգմանման ժամանակի նկատմամբ պարզուեց միայն հետեւեալը՝ որ մեկնութիւնների այս ամբողջ խումբը, առանց բացառութեան, թարգմանուած պիտի լինի յունաբան երկրորդ շերտի թարգմանութիւններից յետոյ. ուրեմն՝ ոչ աւելի վաղ, քան վեցերորդ դարի վերջերը։ Բայց մինչեւ որ ժամանակը կամ դարաշրջանը պէտք է տանել առանձին թարգմանութիւնները, այդ ինդիքը մնում է մուտք ու անորոշ։ Հայ բանասէրներից ոմանք աշխատել են պարզաբանել այս հարցը, որոնելով սոյն թարգմանութիւններից առնուած քաղուածքներ կամ որոշ հետքեր եօմններորդ կամ ութերորդ դարերի մատենագրական երկերում։ Սակայն ստացուած արդիւնքները գեռ եւս գոհացուցիւ չեն։

Գալուստ Տէր-Մկրտչեանը, իր “Պետրոս Արքայի եպիսկոպոս” աշխատութեան մէջ (Վաղարշապատ 1902) մատնացոյց էր արել, որ “Հարցմունք յազագումարմատութեանն Ցեառն զանազանք” Վաչագանի Աղուանից իշխանի ըստ Պետրոսի Արքայի եպիսկոպոսի եւ իմաստասիրի ոգրուածքը ծայրէ ծայր ներշնչուած է արիստոտելեան փիլիսոփայութեամբ։ Բաղդատութիւններից պարզ երեւում է, որ աս գրուածքի հեղինակին

ծանօթ են եղել յատկապէս դաւթիթի Առհմանաց գիրքը և Պորփիրի Վերլուծութիւնը։ Առկայն վաշագանի Հարցումները, ինչպէս երեւում է Գալուստ Տէր-Մկրտչեանի ուսումնասիրութիւնից ոչ մի գեղքում չեն կարող վերադրուել Պետրոս Ախնեաց եպիսկոպոսին, այլ, հաւանաբար, ծագած պիտի լինեն հայ և աղուան կրօնական վէճերի ժամանակ՝ 8—10րդ դարում։ Առհմանաց և Պորփիրի Վերլուծութեան ակներեւ հետքերը Հարցումներում՝ նրանց թարգմանման ժամանակաշրջանի վերաբերմամբ՝ շատ քիչ բան են աւելացնում մեր գիտցածին։ Արդեն իսկ յայսնի էր, որ Գրիգոր Մագիստրոսի առ վարդապետն Արքիու գրուած թղթում յիշուած կան եւ դաւթիթ միիլիստիան եւ Ալիմպիոդորոսի գրուածքը, որի թարգմանութիւնը նա վերագրել է՝ «թարգմանացն»¹։

Ենթածնույ մատենադարանի թ. 596 ձեռագրում (— Մայր Յուցակ թ. 582) Անանիա Շիրակացու ։ Յազագու հարցման և լուծման գրուածքը, ինչպէս նկատել է դարձեալ Գալուստ Տէր-Մկրտչեանը², ունի հետեւեալ յառաջարանը, որ գրեթե բառացի քաղուած է Պորփիրի Ներծութեան բնագրից։

Ներած Պորփ., 227.

Ձեռ. թ. 596, էջ 185ա.

¹ Զատենույն[ն] առաջ իւ Ելոյդ հարկուարի, Բրիտանական[ն], թէ որէւ եւ առ ուրիշէ, եւ „յառ“ Արքու-

² ՏԷս դ. կոստանդնուպոլիս, Գրիգոր Առաջինարքութիթ թղթերը, Աղքառանշարույթ, 1910, էջ 66։

³ Անանիա Շիրակացի, Առաջարջութան 1890, էջ 11—12։

կաւ. ի բազմաց. եթէ զինչը ընդունելու թիւնն, զինչը բազմապատճիկ եւ բոլորովին յազագու բաժանմանց եւ ապացուցից՝ պիտանացու եւ ոյցը ուղարցն անսու թիւնանց Համառաւու քեզ ընձեռութիւն առնելով՝ փորձեցոց ի ձեռն առկաւուց՝ իր Ներածութեան յեզանակի՞ զառ. ծերանեացն անցանելով բանիւ, ի խորագունիցն ի բաց կալ ի խնդրոց եւ պարզագունիցն շափառութեն հանդիպելով: Արդ տատեն իսկ վազագայի յազագու հարցման եւ յու ժման... .

առաջի ստորագութեանցն վարդապետութիւն, զիտել զինչ սեռ եւ զինչ տարբերութիւննեւ զինչ անուակ: զինչ յատուկ եւ զինչ պատահութեն ի սահմանացն բառարութիւն, եւ բոլորովին յազագու բաժանման եւ ապացուցի պիտանացուի ելոյ ուղարցն անսու թիւնն համառաւու քեզ ընձեռութիւն առնելով՝ փորձեցոց ի ձեռն առկաւուց իր Ներածութեան յեզանակի զառ. ծերանեացն անցանել բանիւ, ի խորագունիցն ի բաց կալ ի խնդրոց եւ պարզագունիցն շափառութեն հանդիպելով: Արդ տատեն իսկ վազագայի յազագուսեսի եւ անսակի ...

Այս ամբողջ հատուածը շունի սակայն Եղմածնայ մատենագարանի Գեորգեան ցուցակի թ. 267 ձեռագիրը, որը սկսւում է ուղղակի հարցումներից: Գալուստ Ցեր-Մկրտչեանը վաւերական է համարում այս վերջին ձեռագրի սկզբնաւորութիւնը եւ ենթադրում, որ ոչ ինքը Անանիա Շիրակացին, այլ մի ուրիշը՝ Պորֆիրի Ներածութեան վերցիշեալ հատուածը կամեցել է յարմարացնել հարցումներին, իրեւ յառաջարան: Անելով յետագայ ժամանակների յաւելուած, այս քաղուածքը չի կարող, ուրիշներ Ներածութեան թարգմանեան ժամանակի համար ունենալ որեւ է նշանակութիւն:

պորտիվերի "Ներածութեան նոյն հաստատեց, թւում է ինձ, որ օգառւած պիտի լինի դաւիթ Հարքացին դաւանաբանական փոքրիկ իր զրութիւններից մէկում, որը հրատարակել էր "Արարատ" ամսագրում Գարեգին վրդՅավոէփեանը (1906, մարտ, էջ 261—272):

Այս զրութիւնը, ինչպէս երեւում է նրա վերնազրից, զրուած է Անաստաս Կաթողիկոսի (661—666 թ.) հրամանավ և ունի սկզբում հետեւեալ հատուածը՝ "Բայց նախ արդէն իսկ համառօտ ընձեռութիւն առնելով, զի ոշինչ իմ նախ քան զմիշտ էակն իմացեալ ո եւն (էջ 269): Ներածական բնորոշ այս դարձուածքը յիշեցնում է պորտիվերի Ներածութեան յատուկ յառաջաբանը և կարծում եմ, որ նմանութիւնը կարող է պատահական չլինել, այլ վերազրուելու է Ներածութեան բնագրի ազդեցութեանը: Եթէ այս ենթադրութիւնն ընդունելի համարուի, այդ գէպքում՝ պորտիվերի Ներածութեան բնագրի ծագման ամենավերջին սահմանը զրուելու է եօթերորդ գարի վաթսնական թուականներին:

Պորտիվերի "Ներածութիւնը կարող է լինել ինչպէս տեսանկը, յունաբան հնագոյն շրջանի թարգմանութիւն: Հետեւաբար՝ նրա թարգմանման ժամանակի որոշումը չի պարզում՝ նոյն ինդիրը նաև դաւիթ - Ալիւալիոդորոսի խմբի մէկնութիւնների նկատմամբ: Եւ այս վերջին ինդիրը մնում է Նորից ուսումնասիրութեան ու յուսաբանութեան կարօւ:

Խոսրավիկ թարգմանչի երկասիրութիւնները եւս, ինչպէս զիտենք (անս վերեւ § 35), ունեն արիստոտելեան երկերի ազգեցութեան բաղմաթիւ հետքեր։ Այդ ազգեցութիւնը յուսաբանող վերոյիշեալ օրինակներին կարելի է աւելացնել նաև հետեւեալ ընդարձակ հատուածը, որ, ըստ երեւոյթին, խոսրավիկը քաղել է պարտիւրի Ներածութեան հայերէն բնագրից.

Խոսրավիկ, Էջ 19.

Մերած. Պոբդ., 242¹.

“Զի բնութիւն պարունակուց է պարունակերցն ի նական է ոչ ուղարկեալ զի բնութիւն պարունակեալ զի իւ ի բաց բաշեցն զի առաջնորդ բնութիւն է բաշեցն զի բաց բարձեալ իւ իւնի բաց բարձեալ, իսկ հանուրն շարարտանալով, բառնանի ընդ նմին է ու ամեն էւն։

“Իսկ անական պարունակուցն ի նական է ոչ ոչ պարունակեալ զին զետեն. քանզի յարգ սեռն քան զանակն է... բաշեցն զի առաջնորդ բնութիւն թեամբ սեռ էւ յառաջազնից բնութիւնն ունեցն. եւ շարարտան, այլ ոչ շարարտանալով, բառնանի ընդ բառնին էւն։

Խոսրավիկի թէ այս եւ թէ միւս հատուածներում պարզ նկատելի են, գլխաւորապէս, Պորփիրի Ներածութեան ու յամբողիկեան խմբի թարգմանութիւնների ազգեցութեան հետքերը, իսկ ինչ վերաբերում է Պատիմ - Ալիսիոդորոսի խմբի մեկնութիւններին, նրանց հետքերը խոսրավիկի երկասիրութիւններում շատ անորոշ են ու պիճելի։

Ինչպէս տեսնում ենք, Պատիմ - Ալիսիոդորոսի որոսի խմբի թարգմանութիւնների համար դեռ -

¹ Հ. մ. ն. Նահանգ. Ներած. 243, 24-25, 241, 25-26, 246, 11-12. Պատիմ. 290, 3-19.

եւս շի յաջողութել կտնել հաստատուն մի կռուան,
որով կարելի լիներ որոշել նրանց ծագման
ճշգրիտ ժամանակաշրջանը։ Առ այժմ պարզ է
միայն այսքանը, որ նրանք թարգմանուած են ոչ
աւելի վաղ, քան վեցերորդ դարի վերջերում,
բայց, անկասկած, վաշագանի հարցումներից
առաջ, որոնք, դաշտուած Տէր-Մկրտչեանի կար-
ծիքով, յօրինուած պիտի լինեն 8—10րդ դա-
րում։ Այս սահմանները շատ են ընդարձակ ու
անօրոշ։ Ասկայն մի խիստ կարեւոր հանգամանք,
որ սերտ տարնութիւն ունի մեկնութիւնների այս
խմբի ծագման հետ, թւում է ինձ, որ մօտաւոր
կերպով որոշում է նրանց թարգմանման ժա-
մանակաշրջանը։

§ 50. Դաստիարակութեան կայսեր արքա-
նիւնները նորիք են՝ ըստ երեսոյնին, երե-
քանի հայերէ Շինուազրութեան, անենայն հաստակե-
նակեանք, անենազ դաշտ առաջ։ — Աներեւ
թռուցիկ կերպով շօշափուած էր խիստ կարեւոր
մի խնդիր (անս § 42 ե), որ յամրդիքեան խմբի
իմաստասիրական երկերը թարգմանուած պիտի
լինեն Տիմոֆէոս Կուզի Հակամառութեան
թարգմանման ժամանակաշրջանում, հաւանա-
բար, միաբնակ կուսակցութեան միջավայրում։
Խոկ Պատիմա-Ալլմապիոդորոսի խմբի մեկնութիւն-
ները, լինելով իմաստասիրական մի այլ դպրոցի
եւ ուրիշ հեղինակների գրուածքներ, կարող են
թարգմանուած լինել երկարնակ կուսակցու-
թեան միջավայրում։ Այս խնդրի վրայ արժէ մի
փոքր երկար կանգ առնել, որպէս հետեւ, եթէ այս

ևնթաղբութիւնը հաստատուի, մատենագրական մի շարք հարցերի համար կը բացուն բոլորովն նոր հեռանկարներ: Ա՛պաշտուի մօտաւոր կերպով դաւիթ-Ալիմազիադորոսի խմբի թարգմանութիւնների դարաշրջանը, դաւիթ Անյաղթի մօսսին յօրինուած առասպելական պատմութիւնը կը տառնայ բոլորովն նոր լուսաբանութիւն, վերջապէս՝ այս նոր ենթադրութիւնը կարող է որեւէ կերպ առընդութիւն ունենալ եւ խարենացու խընդրի հետ:

Երդ՝ կայ արդեօք դաւիթ-Ալիմազիադորոսի խմբի երկերում որեւէ մի նշան, որով հաստատուէր նրանց ծագումը երկարնակ հայերի միջավայրում: Խճճ թւում է, որ այդպիսի մի նշան կարող է համարուել դաւիթին վերագրաւած Առածք Հինգ գրութիւնը (անս դաւիթի Անյաղթի մատենագրութիւնը, Անենախիկ 1833, էջ 217—222): Այս գրութիւնը, թէ իմաստասիրական գաղափարների իր սահմանումներով եւ թէ յունաբան ամբողջ իր բառապաշարով, այնքան մօտ է ու համապատասխան դաւիթի Ասհմանը իմաստասիրութեան եւ Աներլուծութիւնը Պարսիկի թարգմանութիւններին, որ ոչ մի կասկած չի կարող լինել, որ նա խմբակից է այս վերջին թարգմանութիւններին: Կարող է միայն հարց լինել, թէ արգելոց սրա հեղինակը նորագրաւառնական դաւիթ մեկնիչն է, թէ մի այլ հեղինակէ: Բայց այդ հարցը օրեւէ նշանակութիւն չունի այն խնդրի նկատմամբ, որ այժմ քննուելու է:

Ա. ԵՐՈՅԻՇԵԱԼ զբութիւնը նպատակ ունի ըստ
իս բացատրելու արխատաելեան իմաստասիրու-
թեան տեսակէտից և բնութեանց ոյն շարա-
բատիկ ինդիրը, որ մոլեսանգ թշնամութեան
եւ քրիստոնէական եկեղեցու պառակաման
գլխաւոր պատճառը դառաւ։ Առաջին երեք
առածները, ըստ երեւոյթին, նախապատրաստա-
կան տեսութիւններ են, որպէս զի հասկանալի
լինեն վերջին գլուխները, որոնց վերնագրերից
իսկ պարզ երեւում է զբութեան բուն նպատակը։
Այս վերջին, չորրորդ ու հինգերորդ գլուխների
վերնագրերն են. «Զի՞նչ մի իցէ գոյացութեան
եւ բնութեանն, եւ ոյք այնօքիկ, որք միոյ ասին
գոյացութեան եւ բնութեան» (էջ 220—221)
եւ «Թէ կարող դոյ իւրաքանչիւր ոք յանհա-
տիցն մի բնութիւն գոլ եւ ասիլ» (էջ 222)։

Չորրորդ գլխում՝ մի բնութիւն է վերա-
գրում ընդհանուր բնաւորական սահմանին, թէ
այն գէպքում՝ երբ այս վերջինը պարզ իրի սահ-
ման է, եւ թէ այն՝ երբ նա զօրութեամբ շա-
բադրական է։ Այս բացատրութիւնը, որ յատուկ
է արխատաելեան իմաստասիրութեան, «բնու-
թեանց ոյաւաբանական վէճերի տեսակէտից
այնքան էլ կարեւոր չէ։ Առկայն նոյն գրութեան
վերջին գլուխը վերաբերում է ամբողջովին և բնու-
թեանց կրօնագաւանական բուն հարցին։ Այդ
շափազանց նշանաւոր հատուածը, որ ուշագրու-
թեան չէ առնուել հայ բանասէրների կողմից,
անհրաժեշտ եմ համարում առաջ բերել առանց
կրծատութենքի։

“թէ կարող գոյ խրաքանչիւր որ յանհատիցն մի ընութիւն գոլ եւ ասիլ.

Արդ անհատիցն ըստ նմանութեան միաբանութեան, ոմանք պարզականք ընաւորեցան գոլ, եւ ոմանք շարադրականք: Արդ պարզականացն անհատից յապաղումն կալցի բանս, զի ոչ է առաջիկայիս դիտաւորութեան, իսկ վասն շարադրականացն ասացուք, եթէ ոչ արարողք գոն մի ընութիւն ասիլ եւ գոլ: Կախ զի մի ընութիւն ասացաք զընդհանուր ընաւորական սահման. իսկ անհատն՝ ոչ ընդհանուր, այլ մասնական:

Երկրորդ՝ ոչ ապաքէն ցուցաք յառաջագոյն զանհատն միոյ ասիլ ընութեան հանդերձ այլովք անհատիւք, նոյն եւ մի գոլ ասի ընութիւն: Իսկ երրորդ զայն ասացուք զամենայն շարադրական մի ընութիւն, նոյն արարող գոլ ընաւորիլ. իսկ զանհատն ոչ նոյն արարող, այլ նոյն եղեալ հանդերձ այլովք անհատիւք. արդ զիարդ ասի գոլ մի ընութիւն: Չորրորդ՝ առ այսորինք ամենայն շարադրական մի ընութիւն զօրութեամբ ունել ընաւորեցաւ զանազանութիւնն աեսակաց, իսկ անհատն արդեամբք, որպէս ոլաւզոս անհատ գոլով զհոգին եւ զմարմին: Հինգերորդ՝ ամենայն մի ընութիւն տեսակ ընաւորեցաւ գոլ, եւ ըստ յոլովից բերիլ թուով զանազանեցելոց. իսկ անհատն զիարդ արդեօք լինիցի տեսակ, եւ ըստ յոլովից բերիցի: Արդ ոչ զոյ կարող մի ընութիւն ասիլ եւ գոլ. զի ասացաւ իսկ վազ ուրեմն, թէ որք միանգամ ոչ ունին զմի սահման, այնպիսիքն եւ ոչ նոյնք ասին գոլ երրէք ուրեք, (էջ 222):

բավանդակութիւնն այս հատուածի, կարծում եմ, որ շատ պարզ է։ Մի բնութիւն կարելի է ասել ընդհանուր գաղափարների վերաբերմամբ՝ սեռի, տեսակի, նաև բնաւորական տահմանի, երբ նա շարադրական է զօրութեամբ, ինչպէս մարդ ընդհանուր գաղափարը, բայց անհատների նկատմամբ՝ Պաւորս, Պետրոս եւն, մի բնութիւն չի կարելի ասել։

Նոյն այս խնդիրը քննութեան է առնուած ութերորդ գարում հակաբազկեդոնական հայի իմաստակրների գրուածքներում, սակայն եղակացութիւնն այնտեղ ուրիշ է։ Օրինակ՝ Ասեմբանս Ախոնեցին ¹ Առ 8. Գերմանոս զրած իր թղթում նոյն հարցի առթիւ ասում է¹. «Զի թէ զթիւ բնութեանցդ առցես ի վերայ Քրիստոսի, հարկաւորապէս մղիք յայսոսիկ, կամ երկուս ասել բնութիւնս, կամ ի ներքոյ անկանել յառաջասացելոցդ աստուածամբարտից, եւ կամ գոփիսինելի ասել։ ապա թէ ոչ հաւանել պարսիք ձերոց ճարտարաց, զի ի կենդանոյն զայրութեամբ զանազանեալսն տարբերապէս՝ սեռս եւ տեսակս անուանեցին, եւ զսեռն հասարակ մի բնութիւնն անհապն թուով ի բազումա կոտորեալ։ Խոկում յերկուց անձնաւորեալ, մի սասացաւ ընութիւնն, որպէս մեկնէ Յիորիսիդէս Ըթենացի, զպարզսն անուանոն զսերմանեալսն յԱրիստոտէլէ,

¹ Տես Դաւել. Խոսրովիկ թարգմանիշ. եւ Երկաստիռութիւնը. Դորիք. Էջ 38—40 եւ Գիլը. թէ դիմ ոց. Առաջակայ Հայոց կամ ողիկոսի ընդդիմ է մ Երկարթակաց ներառականացն, Էջ 434։

ասացեալ եղջերուաբազսի Ատորոգութիւնն, ոչ
միայն ի վերայ պարզիցն առէ, այլ եւ դշաղաշա-
րաբար կապահցեալին մի աւելի բնութիւն, եւն
(Գիրք Բժղթոց, Թիֆլիս 1901, Էջ 383—384):

Այս հատուածում, “Առածք Հնդից հա-
կառակ, “յան յերկուց անձնաւուեալ ու այս-
ինքն՝ ոմն մարդիկ կամ անհատները, Պաւուս,
ունտրաս են, որ ազգմամբ շարադրական են, հա-
մարում են մի բնութիւն ունեցող: “Առածք
Հնդից հեղինակը եւ Ատելիուս Ախունցին, ինչ-
պէս տեսնում ենք, “բնութեանց միեւնոյն
խնդիրը մեկնում են բարորովին այլ կերպ. առա-
ջինը՝ համապատասխան քաղկեդոնական երկա-
րնակ դաւանութեան, իսկ երկրորդը՝ հակաբաղ-
քեգոնական միաբնակ ուսման համաձայն:

“Առածք Հնդից գրութեան այդ բնոյին
այնքան պարզ է, որ կարօտ չէ երկար լուսաբա-
նութեան. որէոք է միայն զարմանալ, որ նա յե-
տագայ դարերում վրիսել է հակաբաղկեդոնա-
կան հայ եկեղեցականների ուշադրութիւնից եւ
պահպանուել, գրեթէ անաղարտ, դաւիթ Անյաղ-
թի բազմաթիւ ձեռագիրներում: Ըստ երեւոյ-
թին, հայ եկեղեցականները չեն հասկացել նրա
բուն իմաստը, որովհեանեւ գրուածքն արտաքուստ
փիլիսոփայական է եւ, ոչ դաւանաբանական:

Անըսյիշեալ նոր լուսաբանութիւնն ար-
ժանի է ամենալուրջ ուշադրութեան, որովհեանեւ,
ինչպէս տեսանք, նոր այս լուսատի հետ սերտ կա-
պուած են մատենագրական մի շարք ուրիշ
հարցեր:

Ի նկատի առնելով այս նոր բացատրութիւնը, թւում է ինձ, կարելի է ենթագրել, որ Հինգ առածքը, ինչպէս եւ նրան խմբակից դաւիթ-Ալիմազիողորոսի մէկնութիւնները, թարգմանուած կարող են լինել 6—7 շն դարում, կրօնա-դաւանական մեծ կոիւների ու պառակտումների ժամանակ, վեցերորդ դարի վերջերից ոչ առաջ եւ, ամենայն հաւանականութեամբ, մինչեւ եօթերորդ դարի վերջերը:

Ընդգծուած այդ ժամանակաշրջանում՝ նրանք թարգմանուած պիտի լինեն, ինչպէս աւանդ, աարբեր ժամանակ եւ վերագրուելու են տարբեր թարգմանիչների: Յունաբան թարգմանութիւնների այս երրորդ շերտի մէջ հնագոյն են, ըստ երեւոյթին, դաւիթի Ասհմանքը եւ Ներածութեան Աերլուծութիւնը, իսկ նորագոյն Ելիասի Սաորուգութեանց մէկնութիւնը: Ուրեմն մօտաւոր կերպով որոշում է եւ այս խմբի թարգմանման ժամանակաշրջանը, թէ եւ ոչ այնքան հաստատ, որքան միւս խմբերինը, բայց անհամեմատ աւելի հիմնաւորուած, քան մինչեւ այժմ: Բացի թարգմանման դարաշրջանի մօտաւոր այս որոշման, կարծում եմ, որ պարզում է այժմ, թէ ինչու սրանց ծագման ու հեղինակի մասին ստեղծուել են հետզհետէ մտացածին զանազան աւանդութիւններ, որոնք հաւաքուած ու ամփոփուած են “Արբոց վարդապետացն հայոց Առաքէսի եւ դաւիթի հարցմունք ընդ երկարնակ չարափառն, յայտնի գրաւածքում: Ծագած լինելով երկարնակ հայերի միջավայրում, շատ բնական

է, որ նրանք չեին կարող ընդունելի ու հանգութելի լինել հակաքաղկեդնական հայերի շրջաններում։ Հարկաւոր էր անհաճոյ այդ փաստը մասացութեան առջ, եւ յետագայում, զիստակցաբար կամ թերեւս անգիտակցաբար, հետրւում է հերիամանման մի նոր աւանդութիւն, որը բոլոր այդ երկերը վերագրում է Ասհակ-Մաշտոցի աշակերտ՝ Պատիմ Անյաղմ հայ փիլիսոփային։ Արօնական տեսակէտից այդ թարգմանութիւնները չեին կարող այլեւս անհանդուրժելի համարուել, որովհետեւ վերսիշեալ Հարցմանկըներում Պատիմ Անյաղմը եւ նրա ընկերակից Մովսէս Քերթօղահայրը, լինելով պաշտպան ու ջատագով հակաքաղկեդնական գաւանութեան, բանակոի իւն մզում հեղինակաւոր երկարնակ եկեղեցականների հետ եւ նրանց բոլոր ասածները յախողութեամբ հերքում։ Ըեշաելով առանձին Պատիմ Անյաղմի ուղղափառ ու հակաքաղկեդնական լինելը, Հարցմունքները կարծես թէ յատուկ նպատակ ունեն ժխտելու իսպատթարգմանութիւնների ծագման իրական փաստը։

Առասպելական պատմութիւնը Պատիմ Անյաղմի մասին, ինչպէս տեսնում ենք, ստանում է ուշագրաւ մի նոր բացատրութիւն եւ լուծում հայոց մատենագրութեան բազմագարեան գաղանիքներից մէկը, որի հետ սերտ կապուած է եւ Մովսէս Քերթօղահայր ինդիրը։ Յոյս ունեմ, որ այս ուղղութեամբ կը լինեն նոր ուսումնասիրութիւններ, որոնք, թւում է ինձ, վերջնականապէս պիտի հաստատենկարեւոր այս եղբակացութիւնը։

§ 51. Παραγγελία της απόφασης της δικαστικής αρχής
επί της απόφασης της δικαστικής αρχής. Η απόφαση της δικαστικής αρχής είναι η πιο σημαντική απόφαση στην δικαιοδοσία, καθώς αποτελεί την απόφαση της δικαστικής αρχής. Η απόφαση της δικαστικής αρχής είναι η πιο σημαντική απόφαση στην δικαιοδοσία, καθώς αποτελεί την απόφαση της δικαστικής αρχής.

Տեսական գիտելիքներ, Եջ CLXXXIII.

(թ.թ. էջ 31, 22): Աբով՝ այս սխալները տեղ են գտնել դաւթիքի քերականութեան մէջ եւ առիթ գտնել նաև հետեւեալ սխալ մէկնութիւնների. դաւ. փիլ. մէկն. քերականին, էջ 81, 3—5՝ “իսկ ի թաղմանէ նախակըթեալն՝ որպիսի ինչ. զի զոր նիշ եզիս ոք կրթելով, եւ յայլմէն եւս մնացելովք, զկնի իւր եթող ապազայիցն”, դաւ. մէկն. քերակ., էջ 119, 21—120, 3՝ “Եւ քերդութեանն, որպիսի մռացածի, ծղացի, ոքացիդ՝ յայտնի է. իսկ ոզկուզաւրենդ եւ տարմաքար՝ զոր քերդեալ ի խորութենէ սկատերազմիկ զաւրուն երթալոյ, իրր թէ տարմաքարերթայինն եւ ազկուզաւրենդ։ Խթէ դաւթի փիլտոփայի քերականութեան մէկնութիւնը թարգմանուած լինէր յունարէնից, ոքարդ է, որ թքակացու բնագրի թարգմանութեան սխալները չէին կարող կրկնուած լինել այդ մէկնութեան մէջ։

Ընդունելով այս գրուածքը հայ հեղինակի աշխատութիւն, կարող ենք եզրակացնել, որ դաւթիթ փիլիսոփան, որը գրել է քերականի այդ մէկնութիւնը, ամենայն հաւանականութեամբ, հայ հեղինակ է։ Ուրեմն որոշում է յունարան գպրոցի հայ մատենագիրներից գոնեա մէկը, որը, ըստ երեւոյթին, այդ գպրոցի յայտնի զէմքերիցն է, ձեռագրերում էլ անուանում է յաճախ և աւամեծն դաւթիթ փիլիսոփայն (անս Աբու եստ Դիոնիսեայն, էջ 79, ծանօթ.):

Անանուն հեղինակի մէկնութիւնը եւս, ինչպէս երեւում է նրա բովանդակութիւնից, հայերէն գրուած աշխատութիւն է եւ ոչ թարգմա-

նութիւն յունարէնից: Կմկ. Աղօնցը արտամադիր
է կարծելու, որ այս մեկնութիւնը կարելի է վերա-
գրել Մամրէի վերծանողին, որին մատենադրա-
կան աւանդութիւնը յիշում է, որպէս ընկերակից
դաւթիւն Մովսէսի (տե՛ս Աբրուեստ Դիտնիսեայն,
էջ CXIII—CXIV): Աակայն առասպելեալ աւան-
դութեան մէջ դաւթիւն Մովսէսի ընկերակից են
Համարուել բացի Մամրէից նաեւ Հաւեւ Աբրուեստ
Աբրուհամ եւ սոցին նմանակիցն զօղոս¹ ու, ուրեմն
Անանանի մեկնութիւնը Հնարաւոր է վերագրել
նաեւ սրանց: Այս խնդիրը, ինչպէս տեսմում ենք,
մնում է անորոշ եւ չէ կարող, ի հարկէ, լուծուել
առանց որեւէ դրական վկայութեան:

Այդպիսի մի վկայութիւն, աւելի ճիշտ մի
ակնարկ, կարծես թէ կայ Համամ Աբրուեստ
քերականի մեկնութեան հետեւեալ Հատուա-
ծում. Համագիրս ծննդագործէ բան եւ զծնելոցն
շափան ներառնու եւ ինքնագիր առածութեամբ
զարգարեալ ունի զիամաւըն խոկաց: Այսքիկ
եղիցի ի մեղ առոգմանց գործի եւ քննութեանց
զէն եւ քերգողութեանց զգեստը եւնախակրթու-
թեանցն սեղան եւ խոկացն բաժակ եւ կարողացն
ճոխութիւն եւ ճեմականացն իմացական սանձք
եւ սիովնականացն հետեւումն ազնիւ եւ եկեղեւ-
ցականաց վանդ լիարողոր սեղանականացն եւ
աստուածաբանականացն մեկնոց փոքր եւ համ-
բակացն վայելու զարդ եւ մեղ ստորապայ-
ծառ պատմունանը անզին ի Դաւթէ եւ ի

1. ՏԵ՛Ս Պ. Աբրուեստ Դիտնիսեայն, Հնաց հ. Դիտնիս, էջ 45:

Պաւղոսէ հրաշացան եւ որ ի տերունական ի պատկ ի Քրիստոսէ ունիմք զվեցսն յանձառիցը («Արուեստ Պիտոնիսեայց», էջ 270): Համամբ Արեւելցին իւրայատուկ ձեւով բացատրում է այս հատուածում նախադրութիւնների կարեւուրութիւնը: Հատուածի վերջում նախադրութիւնները նա անուանում է «ստորապայծառ պատմումանք անգին», որ «ի դաւթէ եւ ի Պաւղոսէ հրաշացան»: Արդ՝ ում է վերաբերում Համամբ Արեւեցու այս ակնարկը, դաւիթը մարդարէին ու Պօղոս առաքեալին, թէ քերականութեան Շնագոյն մեկնիւններին: Երկրորդ ենթադրութիւնը կարծես թէ աւելի մօտ է հատուածի իմաստին, որովհետեւ դժուար է հասկանալ, թէ ինչ կապ կարող են ունենալ նախադրութիւնների հետ դաւիթը մարդարէն եւ Պօղոս առաքեալը: «Նոր այս լուսաբանութեամբ՝ վերեւ յիշատակուած Դաւիթը, լսու երեւոյթին, քերականի մեկնութեան հեղինակ և եռամեծն դաւիթը փիլիսոփան» է, իսկ Պօղոսը, ամենայն հաւանականութեամբ, հեղինակն է միւս Շնագոյն մեկնութեան: Եթէ այս ենթադրութիւնն ուղիղ համարուի, Ընանունի մեկնութիւնը հաւանական կը լինի վերադրել ոչ թէ Մամրբէ վերծանողին, այլ Պօղոս մեկնիչին, որը Մովսէսի ու դաւիթի Հարցմունքներում յիշում է, իրեւ անմանակիցը դաւիթը փիլիսոփային, Մովսէս քերթողահօր, Արրահամ հոետորի եւ Մամրբէ իմաստասիրի:

«Իկ. Աղոնցն իր ուսումնասիրութեան մէջ աշխատել է որոշել այս մեկնութիւնների ծագ-

ման ժամանակը եւ իր եղբակացութիւնների ընդհանուր ամփոփման մէջ կարծում է, որ դաւթի ու Անանունի մեկնութիւնները, լինելով աւելի հին քան Ստեփանոս Ախոնցու եւ Մովսէս Քերթօղի Համապատասխան մեկնութիւնները, գրուած պիտի լինեն, բայ երեւոյթին, եօթերորդ գարում (անս Արտեևա Պիտոնիսայ էջ CXCIII): Յունաբան դպրոցի զարդացման ընթացքը եւ յունաբան երկերի երեք տարրեր շերտերը պարզելուց յետոյ, թւում է ինձ, որ Դաւիթ Փիլիսոփայի ու Անանունի ժամանակը հնարաւոր է այժմ որոշել աւելի հիմնաւոր ու հաստատուն կերպով, քան այդ արուած էր բանասիրական՝ նախորդ ուսումնասիրութիւններում:

Դաւիթ Փիլ., էջ 102, 8—10. Արքատ. Պէրիաթմ., էջ 461.

“Իսկ Արքատանելու զառարառութիւն եւ գրացասութիւն եւ գրացերեւութիւն ընդ անուան եւ ընդ բայի առաջ հինգ զուլու”

“Կամ արժան է զնել, զի՞նչ է անուն, եւ զի՞նչ է բայ. ապա զի՞նչ է բացառութիւն, եւ սուրառութիւն, եւ բացերեւութիւն, եւ բան”.

Դաւիթ Փիլ., 109, 11—15. Յամնլ. Ստոր. 1.

“Եւ Համանուն լինի բայ պատահման եւ բայ մօսաւ”

“Համանունութիւն լինի բայ երկուս յեղանակու բայ”

¹ Տիւ Զեռ. Էջմ. մասեն. թ. 1894 — Մայր Յառակ. թ. + 1852:

ծու թեան . պատուհմամբ՝
յորժամ երկուց իրաց նոյն
պիունացի անուն ախրական
է . առաստական , արծուի՝
թշաշուն եւ արծուի՝ շի-
նուած փայտախ . ինչ մաս-
ճալթ եամբ՝ ըստ պատույ .
ըստ յուսոյ . ըստ ովառմից
և . այլացն եւսոյ :

Դամիթ Փիլ . , 80 , 10—12

պատուհման կամ՝ մատածու-
թեան ըստ պատույ , ըստ
յիշառակի , ըստ ազաւիլից ,
ըստ կերպարանի ըստ նմա-
նալիթեան :

“Բայց ի հարցման առաւք
զառհման առաւեասի , զոր
աւ բնակի եթէ ասիցէ որ .
զինչ է մարդ , յիով պա-
տասխանեալ ասէ . “կեն-
դանի բանառը մահկա-
նացու .”

ՅՍտոր . , Ձև . Թ . 1894 .

“Երբ թէ ասիցէ ոք զմարդ
կենդանի բանառը մահկա-
նացու . (Պ . Պ .) Նաև յազ-
գուց . Ժ . “մարդ զոյցու-
թին իմն նշանակի ոչ զոյ-
ցուորք : այլ զոյցութիւն
կենդանի բանառը մահկա-
նացու .”¹

Համարելով այս հատուածներից առաջնը
բաղաած Արիստոտէլի Յաղագս մեկնութեան
թարգմանութիւնից , Կիկ . Աղոնցը կարծում է ,
որ Դաւիթ Միլլիառիայի մեկնութեան մեջ այդ
հատուածը կարող է լինել ընդմիշարկութիւն² :
Ասկայն , ինչպէս տեսնում ենք , կան եւ ուրիշ
հատուածներ , որոնք կապ ունեն Յամբորիասի
Ասորդութեանց մեկնութեան հետ : Ուստի՝ ան-
հաւանական է ինձ թւում , որ վերոյիշեալ հա-

¹ Դաւիթ - Ալիմորիադ պատուի յուրի երկերում՝ մարդու
առհմանութեան մասնաւում է՝ “կենդանի բանառը մահ-
կանացու . մարդ եւ հանճարոյ ընդունակն (Ասհմ . իմ .
Էլ . 136) . Առաելյ հինգ . Էլ . 217 եւն) :

² Տե՛ս “Արևուտակ Դիմիտրովյայ . Էլ . CLXIII .

տուածը դաւթի մեկնութեան մէջ լինի ընդմիջարկութիւն, այլ պէտք է ենթադրել, որ դաւթիթ փիլխոփան, ծանօթ լինելով յամբողբեան խմբի թարգմանութիւններին, ոգտուել է նրանցից իր մեկնութեան այն մասերում, որոնք որոշ առընչութիւն են ունեցել արիստոտէլեան իմաստասմբութեան հետ:

Այս ենթադրութիւնը խիստ կարեւոր է դաւթիթ փիլխոփայի ժամանակի որոշման համար: Յամբողբեան խմբի երկերը, ինչպէս զիտենք, յունաբան երկրորդ շերտի թարգմանութիւններ են եւ թարգմանուած են 576 թուին: Եթէ ընդունենք, որ քերականի մեկնիւ դաւթիթ փիլխոփան օգտուել է այդ թարգմանութիւններից, կարող ենք վստահօքէն եզրակացնել, որ նրա մեկնութեան ժամանակը պէտք է գնել յունաբան երկրորդ շերտի թարգմանութիւններից եւ այդ թուից յետոյ: Թրակացու քերականութիւնը, ինչպէս աեսանք, պատկանում է յունաբան թարգմանութիւնների առաջինին եւ թարգմանուած պիտի լինի պիտոյից գրքից ու Փիլոնի երկերից առաջ, ուրեմն՝ ամենաուշը վեցերորդ դարի առաջին կիսում: Դաւթիթ փիլխոփայի մեկնութիւնը եւ թրակացու քերականութեան թարգմանութիւնը, ինչպէս աեսանում ենք, ծադել են յունաբան դպրոցի զարգացման տարրեր շրջաններում: Խակ այս փաստից բղխում է ինքնին, որ քերականի մեկնիւ դաւթիթ փիլխոփան չի կարող լինել թրակացու քերականութեան թարգմանը: “Աիկ. Ադռնցի ուսումնասիրութիւնից եւս երեւում է,

որ այս եզրակացութիւնը հաստատում է նաև դաւթի մեկնութեան բովանդակութեան քննութեամբ (տե՛ս “Արուեստ Դիռնիսեայ”, CLVIII, CLXVIII, CLXXVI): Այսպէս՝ թրակացու քերականութեան մեջ վանդեւ փաղառութիւնը բար, որ միեւնոյն սալլաբիշի բառի թարգմանութիւնն են, դաւթիթը հասկացել է, որպէս քերականական տարրեր եղբներ. գերանուն բառը, որ յունարէն, ձնաւսումից բառի թարգմանութիւնն է, դաւթիթը հնարաւոր է համարել մեկնել, որպէս թերանուն: Այս օրինակներից խել երեւում է, որ նա թրակացու թարգմանը չէ: Ըսդունելով թրակացու քերականութիւնը յունարան գպրոցի հնագոյն թարգմանութիւններից մեկը, հաւանական կը լինի նաև ենթագրել, որ այդ թարգմանութեան հետ միասին կարող էին լինել եւ քերականի հնագոյն մեկնութիւններ: Անհնարին չէ, որ դաւթիթ փիլիսոփան եւ Անանուն կամ ոլորս մեկնիչը օգտուել են ոչ այնքան քերականութեան յունական մեկնութիւններից, որքան այդ հայերէն մեկնութիւններից, որոնք գոյութիւն են ունեցել նրանց ժամանակ, սակայն մեր ձեռքը չեն հասել:

Նիկ. Աղոնցն իր ուսումնասիրութեան մեջ կանգ է առնում նաև մի ուրիշ կարեւոր հարցի վրայ, թէ արդէօք կարող է քերականի մեկնիչ դաւթիթ փիլիսոփան լինել Ասհմանք իմաստասիրութեան երկի հեղինակը կամ թարգմանը: Դաւթի մեկնութեանու Ասհմանքի առընդութիւնը պարզելու համար նա մատնացոյց է անում այդ

Երկերում՝ Տարտասանութեան բաժանմանը վերաբերեալ հետեւեալ հասուածը.

Դաւ. քեր. միջն., Տե., 11-17. Սահմ., 207, 1-3.

“Վանդի առևակը Տարտասանականին երիւց այսուցիւց կառապին և վարդին՝ առևանականուն և բազիս հայրանաւն և ի կացրակաւնուն, զուգականը կամ զայտականը, ի բազիս հականն, ի կացրականն, առաջը ի սեռէ”:

Աահմանքի մէջ Տարտասանութեան այս բաժանումը համարում է “ոչ բարուոքո, մինչդեռ դաւիթի քերականը կողմանկից է այդ բաժանման։ Աարծիքների սկզբունքային այս տարբերութիւնը դաւիթի մեկնութեան ու Աահմանքի մէջ “Նիկ-Ռունցը համարում է պարզ մի նշան, որ դաւիթը չի կարող լինել Աահմանքի հեղինակը (անս “Արուեստ Դիմենիսեայո, Էջ CXXXII, CLXXXIII): “Նիկ-Ռունցի այս դիտողութեանը պէտք է աւելացնել նաեւ այն, որ դաւիթ քերականի թէ ամբողջ մեկնութիւնն ըստ իր բովանդակութեան եւ թէ իմաստասիրական առանձին դատաղութիւնները չունեն այն հմտութեան ու դիտութեան որականիշները, որոնք առանձնայատուկ են Աահմանքի հեղինակ Դաւիթի մեկնիւնքն”:

¹ “Նիկ-Ռունցը Արուեստ Հեղինակը այս չի ընդունում “Նիկ-Ռունցի այս դիտողութիւնը եւ անթաղքում” է, որ դաւիթը մամանակի ընթացքում կարող էր իր կարծիքը փոխել. անս “Դիտողութիւններ Դաւիթը Ա. Ադամցի նար դրբեն վրայու. Արարատ 1919, յունի գեկտ., Էջ 68.”

Եթէ դաւիթք քերականը լինէր Ալիմզիոդորսի
գողոցի նորպղատօնական դաւիթք փիլիսոփան,
պարզ է, որ նրա իմաստասիրական դատողու-
թիւնները պէտք է համապատասխանէին այս
գողոցում մշակուած տեսութիւններին, մինչդեռ
նրա մեկնութեան մէջ արխտութելեան իմաստա-
սիրութեան մուրացածոյ եւ ազքատիկ գաղա-
փարները քաղուած են, ինչպէս տեսանք, յամբողի-
կեան խմբի հայերէն թարգմանութիւններից:

Եթէ դաւիթք քերականը Աահմանըի հե-
ղինակը չէ, հարց է ծագում, թէ արդեօք չի-
կարելի նրան վերագրել Աահմանըի թարգմա-
նութիւնը: Այս խնդրի նկատմամբ “Նիկ. Ագոնցը
մատնացոյց է անում, որ արտեսատի սահմանման
մէջ (անս վերեւ § 41, 2) Աահմանըի թարգ-
մանը չառալդիչ բառը թարգմանել է “Հասո-
զութիւն”, մինչդեռ դաւիթք քերականն իր մեկ-
նութեան մէջ չառալդիչ: բառի այդ ուղիղ
իմաստը չգիտէ եւ ենթադրում է նրա իմաստը
“Թողումն” չառալչուած բայից: “Նիկ. Ագոնցն ան-
հարին է համարում, որ միեւնոյն անձը կարե-
ւորագոյն այդ եղբը Աահմանըի մէջ թարգ-
մանած լինի ուղիղ, իսկ քերականի մեկնութեան
մէջ մեկնած լինի բոլորովին սխալ, ուստի եւ եղ-
բակացնում է, որ Աահմանըի թարգմանը եւ
դաւիթք քերականը պէտք է լինեն տարբեր անձ-
նաւորութիւններ (անս “Ազուեստ Դիոնիսեայ”,
էջ CLXXXVIII): Կան եւ ուրիշ զեզգեր, երբ
ամենասամարական եղբներն իսկ չեն համա-
պատասխանում իրար դաւիթք քերականի ու

Դաւիթ - Ալիմազիուդորսով խմբի երկերում։ Այդ
տեսակէւսից ուշագրութեան արժանի է դաւթի
մէկնութեան մէջ հետեւեալ հասուածը. Էջ 81,
8-11⁴ «Արդ հարկաւորաբար բանական արտեսահա
առաջարկութիւն հնդիւքս այսոքիւք կատարի-
դիասաւորութեամը, հարազատոթեամը, վերա-
գրաւն, վարդապետականաւն եւ ըստ մասին
բաժանմամբ, յորում եւ աւգատակարն»։ Այս
հատուածում՝ «վերագիրն» եւ «աւգատակարն»
համապատասխանում են յունարէն չ չուցրացի
եւ չո շրջապատ եղբներին, իսկ դաւիթ - Ալիմ-
ազիուդորսի խմբի երկերում նոյն եղբները
թարգմանուած են «մակագրութիւն», եւ «պի-
տանացուն» (դոկտրի. Էջ 250, Մեկն. ի Ա. Երլ-
էջ 560, 562, ևլ. Առ. Էջ 36, 40)։ Աահմանդի
թարգմանութիւնը, ինչպէս երեւում է լեզուական
այս դիտողութիւններից, դժուար է վերագրել
դաւիթ քերականին։ Հակառակն ապացուցանելու
համար անհրաժեշտ են դրական ու որոշ փաստեր։
Պէտք է ասել, որ ժամանակագրական տեսակէւսից
միանգամայն հնարաւոր է Աահմանդի թարգմա-
նութիւնը վերագրել քերականի մէկնիչ ։ Եռա-
մէծն դաւիթ փիլիսոփայինն, որովհետեւ նրանց
երկուսի ժամանակն էլ զրուելու է, ինչպէս տե-
սանք, յունարան երկրորդ շերտի թարգմանու-
թիւններից յետոյ։

Ընանունի մէկնութիւնը, որ վերեւ մէնք
վերագրեցինք Պօղոս մէկնիչն, գրուած պիտի
լինի, ինչպէս երեւում է նրա բովանդակութիւնից,
դաւթի մէկնութիւնից յետոյ եօթերորդ դարում։

Այդ մեկնութեան մէջ յիշում է դաւիթ անունով մի հայ մատենագիր հետեւեալ հասուածներում¹ ։ “Խակ քաջորդակի տաղ ասի դաւիթեան քերթութիւն (եւ) որ յաղագս Տիգրանայ,² ան ու Աբուեստ դիօնիսեայ,³ էջ 128, 21—129, 1,

2. “Խակ բան շարադրութիւն է բառի, յարժամ շարադրէ որ դաւիթիմն զշարադրեացն եւ զպատերազմն եւ զմարացն եւ զհայցն եւ ասիցէ յարապէս եթէ դաւիթ շարադրեաց զպատերազմն մարաց եւ հայոց, որ է բան,⁴ անո նոյնը, էջ 138,

1—8⁵: Արդ՝ հարց է ծագում, թէ ով է հռչակաւոր այս դաւիթը, որը շարունակ յիշում է Անանունի մեկնութեան մէջ։ Որովհետեւ Անանունի ժամանակը դրուելու է, հաւանաբար, անմիջապէս դաւիթից յետոյ եւ նա կարող է լինել այս վերջինի աշակերտը, ոչ միայն հնարաւոր, այլ եւ հաւանական է թւում, որ Անանունի յիշատակած դաւիթ քերթուզը լինի քերականի մեկնութեան հեղինակ դաւիթ վիլիխափան։ Այս հարցի լուծումն առանձին կարեւորութիւն ունի, որովհետեւ խորենացին Տիգրան Մեծի պատմութեան համար ունեցել է, որպէս ազրիւր, բանաստեղծական մի գրուածք, որը նու պարզ յիշատակումէ եւ անուանում⁶ ։ Չորս հագներից ութիւնը, դարդատառորին ի բանս եւ զիմաստացն խակ եւ ի մէջ իմաստաց իմաստնագունին⁷։ Անանունի յիշած արաւիթեան

¹ Դաւիթ անունը յիշատակումէ և նույն յանձնի որինակների մէջ, էջ 127, 137, 145։

² Տե՛ս Մագսես Խորենաց, ու. Պատմութիւններ Հայոց, Տիգրան 1913, էջ 455. Խուեւ. ԱՌ. Արքունիքան։ Հայ մազարդական առաջապեսները, Աշողարշապատ 1901, էջ 413 եւն։

Քերթութիւնը որ յաղագս Ցիկրանայ և դաւթի
շարադրութիւնը հայոց ու մարաց պատերազմի
մասին թերեւս կազ ունենան “Չորս հագներ-
գութեանց հետ, որի արգատաւոր եւ “ի մ.ջ
իմաստնոց իմաստնագոյն հեղինակը եւս գոցէ-
առընչութիւն ունենայ վերոյիշեալ դաւթիմների
հետ ինչպէս տեսնում ենք, եօթերորդ գարի հայոց
մատենագրութեան պատմութիւնը պէտք է աւա-
ջին հերթին լուծէ մի շարք դաւթիթ անունով
հեղինակների խնդիրը, որոնցից յայտնի են ար-
գեն՝ դաւթիթ Հարբացին, դաւթիթ Տարօնացին,
դաւթիթ Բագրեւանցացին, քերականի մեկնիւ-
դաւթիթ սիլիսափան եւ, ըստ երեւոյթին, նաև
Անանունի յիշած հաշակաւոր դաւթիթ քերթագը:
Արանցից մի քանիսը կարող են միւսնոյն հեղին-
ակը լինել, բայց այդ խնդիրը մնաւմ է զեւ
անորոշ ու կարու յատուկ յունաբանութեան:

Ա երայիշեալ մեր դիտողութիւնները թրտ-
կացու քերականութեան ու նրա հնագոյն մեկ-
նիշների մասին, ինչպէս եւ նրանց ծագման ժա-
մանակաշրջանների որոշումը, կարծում եմ, որ
բառականնայաստեղու են այս խնդիրների ոլարզա-
բանման, եւ բանասէրների հաւաքական ջանքե-
րով յունաբան շրջանի մեր մաստենագրութեան
համար ստեղծուելու են հետզհետէ ամուր ու
հաստատուն հիմքեր:

§ 52. Յանդառ ողբերգի շեքայիւնը յա-
րակի ընթացը հաստիք է հայոց ժամա-
նակնեան կ ըստ իշխանութիւնի նիւթեալը: —
Յանդառան զպրացի իմաստասիրական, ճարտա-

սանական ու քերականական երկերը բաժանւ-
ւում են, ինչպէս անսանք, երեք տարրեր խմբերի,
որոնք դանազան ժամանակաշրջանների աշխատու-
թիններ են եւ ծագել են յաջորդաբար, մօս
երկու հարիւր տարրուայ ընթացքում, ակսած
վեցերորդ դարի սկիզբներից կամ հինգերորդ
դարի վերջերից, ուրեմն, զինաւորապէս, վեցե-
րորդ եւ եօմներորդ դարերում։ Եթէ անտես
առնենք Դաւիթ Անյաղթի ու Նրա ընկերակից-
ների մասին յետին դարերում յերիւրուած
առասպելանման աւանդութիւնը, որը դարերի
ընթացքում խճճել ու մեծապէս դժուարացրել
էր այս խնդիրների լուծումը, Հայոց մատենա-
գրութեան մէջ կան նաև ուրիշ կողմանակի
վկայութիւններ ու ակնարկներ, որոնք կատարե-
լապէս հաստատում են յունաբան դպրոցի այն
երկարատակ դարգացման ընթացքը, որ սոյն
ուսումնասիրութեան մէջ մանրազննին կերպով
քննուած ու լուսաբանուած է։

Հայոց մատենագրութեան մէջ, ինչպէս
յայտնի է, յունաբան դպրոցի ականաւոր ներ-
կայացուցիչները, մէծ մասամբ, անուանուամ են
փիլիսոփայ կամ իմաստաւէր, ճարտասան եւ
քերթող։ Աբով՝ հինգերորդ դարի վերջերից
սկսած Հայոց մատենագրութեան մէջ յիշատա-
կուած կան մի շարք հայ մատենագիրներ, որոնք
կրուամ են վերոյիշեալ այս մականունները։ Հետ-
զոյնը սրանից Պաղար Փարապեցու թղթի մէջ
յիշուած “Մովսէս փիլիսոփան” է, որն ապրած
պիտի լինի հինգերորդ դարի վերջերում։ Որ այս

Մովսէսը յունարան գպրոցի հեղինակ է, այդ
կարելի է ենթադրել նրա գրուածքների մտաբն
Փարավեցու ծանօթ վկայութիւնից, նաև նրա
“փիլիսոփոս” մականուան յունական վերջաւու-
րութիւնից: Ասողիկի վկայութեամբ, վեցերորդ
դարի առաջին կիսում յաջորդել է Սահակ կա-
մուղիկոսին “Տէր Քրիստոփոր փիլիսոփան ի
գաւառէն Բագրեւանգայ եւ գեղէն Տիրառձայ”
(Թետերրութ, 1885, էջ 81): “Նոյն պատմիչի
առելով, դարձեալ վեցերորդ դարի առաջին
կիսում “Եղաս Անգեղացի, աշակերտ ճարտա-
սանին Մովսէսի եպիսկոպոսի Բագրեւանդ գա-
ւառի զգասս ճարտասանիցն բազմացացանէր”
(էջ 82): “Քերթող” եւ “իմաստասէր” է
անուանում 554 թուին դարնին Բ. Ժողովին
մասնակցող պետրոս Անւենեաց եպիսկոպոսը¹:
Մովսէս Կաղանկատուացին եւս վեցերորդ դարի
երկրորդ կիսում յիշում է Կարնոյ եպիսկոպոս
թէոգորոսին, որին կոչում էին “փիլիսոփայա-
պետ”: “ընդ երկուանալն հայրապետութեան
հայոց, — ասում է Կաղանկատուացին, — Եր
մեծ մարտ ընդ Մովսէս եւ ընդ թէոգորոս Կար-
նոյ եպիսկոպոս, զոր փիլիսոփայապետն կոչէին.
Եւ ուղղափառքն ազարտէին զառումնց զամնայն
կրօնան” (տե՛ս Բ. Գլուխ ԽԶ): Վեցերորդ դարի
վերջերում եւ եօթերորդ դարի սկզբում եկե-
ղեցական նշանաւոր գործիւ էր եւ հռչակաւոր

¹ Տէր Առաջիկ, Պատմութիւն այեղերական, Պիտիր-
րութ, 1885, էջ 83: Համեմ Գայլուս առ Տէր - Միրաւեան, Պիտիր-
րութ եպիսկոպոս, Վաղարշապտուացաւ 1902:

մատենագիր Ալբթանէս վարդապետը, որի մաւ-
կանունն էր դարձեալ “քերդող”։ “Նոյն այս
շրջանում յանաբան դպրոցի մատենագիրներից
էր Դրիգոր քերդողը, որի Արքահամ կաթո-
ղիկոսին գրուած թուղթը տպուած է և գիրք
թղթացում” (Էջ 99—107, անս նաեւ վեր-
եւ առյն ուսումնասիրութեան § 37-ը)։ Ան-
բէոսի վկայութեամբ, Կոստանդ կայսրը Հայերի
հետ կրօնական միութիւն հաստատելու համար
Հայաստան էր ուղարկել այր մի ի Բագրատան
գեղջէ՝ որ էր ուսեալ զարուեստ վիլխառփայու-
թեան, եւ անուն նորա դաւիթը (Գլուխ 191)։
Եյս դաւիթը 648—649 թուին ներկայ է
եղել Կերսէս կաթուղիկոսի գումարած դվինի
ժողովում։ Ստեփանոս Խողիկիր Հաղորդում է
նոյնպէս, որ նա “ի Բագրեւանդ գաւառէ ի
Բագրւան գեղջէ” որ եւ “էր ուսեալ զարուեստ
վիլխառփայութեան” (Պետերբուրգ 1885, Էջ
91)։ Աերեւ մենք տեսանք, որ դաւիթ-Ոլիմ-
պիոդ որոսի խմբի մեկնութիւնները վերագրուելու
են երկարնակ Հայերի միջավայրին։ Միանգա-
մայն հնարաւոր է, ուրեմն, նոյն խոկ հաւանական,
որ հենց այս դաւիթը, իրքեւ ականաւոր պարա-
գլուխ երկարնակ Հայերի, կարող էր որոշ կապ
ունենալ դաւիթ-Ոլիմպիոդորոսեան իմաստա-
սիրական դպրոցի հետ։

Մի այլ դաւիթ, որ թարգմանել է Բար-
սեղ Անսարացու “ի ծնունդն մրկչին” ձառը,
անուանւում է նոյն ձառի յիշատակարանում
“Դաւիթ թարգման Ցարաւնացի”։ Դարեգին

եպիսկ. Յովսէփեանն այս դաւթին նոյնացնում
է դաւիթ Հարքացի հռչակաւոր փիլիսոփայի
հետ, որը ժամանակակից էր Անաստաս կաթու-
ղիկոսին (661—665թ.) եւ Աշոտ պատրիկին
(685—690թ.)¹: Երդ դարում կան եւ ուրիշ
յայտնի մատենագիրներ, որ անուանում են
“փիլիսոփայ” կամ “քերթող”:

Ինչպէս տեսնում ենք, Զ—Է: դարում
յայտնի են մի շարք հեղինակներ հայոց մատե-
նագրութեան մէջ, որոնք անուանում են “փի-
լիսոփայ”, “իմաստատէր”, “քերթող”, “ճար-
տասան”, “թարգման”, եւ բոլորն էլ, ամենայն
հաւանականութեամբ, պատկանում են յունա-
բան դպրոցի մատենագիրների խումբին:

Մատենագրական վերսիշեալ վկայութիւն-
ները բոլորովին նման չեն առանցելական աւան-
դութեան յետնագրեան յերիւրանքներին,
առոյզ ու վաւերական են, եւ պարզ բոց են
տալիս, որ յաւնաբան դպրոցն ունեցել է յաջոր-
դական ու յարատեւ զարգացում, սկսած հին-
գերորդ դարի վերջերից: Արեմ՝ իմ եղբակա-
ցութիւնները, որ մանրագննին քննութեամբ լու-
սարանուած են այս աշխատութեան մէջ, ոչ
միայն չեն հակասում, այլ կատարելապէս հա-
մապատասխանում են մատենագրական այդ
սառյզ ու հաւասարի ցուցումներին:

Աւշադրութեան արժանի է, որ բացի Պետ-
րոս Ախոնեցուց բոլոր վերսիշեալ “փիլիսոփայ”:

¹ ՏԱՀ. “Առարկան” 1907, յունուար էւ մարտ:

“քերթող” և “ճարտասան” հեղինակները, որոնց ծննդավայրը կամ գործունեութեան աեւզը լիշտատկուած են, ծնուել են բագրեւանդում կամ Տարաւում, իսկ երկուոր բագրեւանդի ու Կարնոյ եպիսկոպոսներ են:

Նիկ. Աղբալեանը “Գիտողութիւններ” Աղոնցի նոր գլուխ վրայը յօդուածում¹ փորձ էր արել որոշելու Թրակացու քերականութեան թարգմանութեան աեզր: Կարա կարծիքով, քերականութեան թարգմանիչը յոյն բնագրի օրինակների փոխարէն բերում է համարժէք օրինակներ, առնուած իր անմիջական միջավայրից: Ի նկատի առնելով այդ օրինակները՝ Նիկ. Աղբալեանը գուշակում է, որ Թրակացու թարգմանիչն ապրել է մի երկրում, ուր կոյ ձեան հիւս, որիմ, ընկուղենիներ, այդիներ: Օրինակների մէջ յիշւում են նաև Տարօնն ու Յրոնքը, Մամիկոնեան տան անունները: Այս ամենը հիմք է ծառայում երան ենթագրելու, որ Թրակացու քերականութիւնը թարգմանուած պիտի լինի Տարօնում: Այս սրամիտ ենթագրութիւնը, որ թւում է ինձ բաւականաշատի հիմնաւորուած, կարեւոյ ու հետաքրքիր է այն տեսակէտից, որ թարգմանութեան աեզրի որոշմամբ որոշուում է նաև թարգմանութեան բարբառախօսական բնոյթ կրող լեզուական առանձնայատկութիւնների միջավայրը: Ի նկատի ունենալով, որ վերոյիշեալ վկայութիւնները եւս յունաբան հնագոյն հե-

¹ «Արքաբառ» 1919: յուն. գելը., էջ 70—71:

զինակների ծննդավայրը կամ գործունեութեան
միջավայրը որոշում են բազրեւանդում, Տարօ-
նում եւ կարինում, կարելի է թերեւս ենթա-
դրել, որ յունաքան դպրոցի դիմաւոր կենզրու-
ները եղել են, Հաւանաքար, Հայատանի ա-
րեւմտեան կաղմերում, որոնք գտնուել են յու-
նական մշակոյթի անմիջական ազգեցութեան
տակ: Ըստ երեւոյթին, արեւմտահայեր ովեար է
լինեն նաև այն քաղկեդուականները, որոնց
շրջանում թարգմանուած պիտի լինեն, ինչպէս
ենթադրեցինք, Պատիթ - Ոլիմպիոդորոսի խմբի
երկերը:

¹ *8^{te} Irenäus, Gegen die Häretiker, Leipzig 1910-
L^t IV-V. "Lehr. Des heiligen Irenäus Schrift zum Er-
weisen der Apostolischen Verkündigung, Leipzig 1907.
L^t IV-V₂*

առաջին կիսում¹: Համեմատելով կրենէսի և Փիլոնի թարգմանութիւնների լեզուն, պլոֆ. Կոնհրիբը մասնացոյց է անում՝ լեզուական բազմաթիւ նմանութիւններ եւ եղբակացնում, որ այդ թարգմանութիւնները պէտք է համարուեն միեւնոյն թարգմանչի աշխատութիւնն: Թարգմանութեան ժամանակի վերոյիշեալ որոշումը նա հիմնում է հենց թարգմանիչների այդ նոյնութեան վրայ: Ըստուններով որ Փիլոնի երկերը թարգմանուած են հինգերորդ դարի առաջին կիսում, նա նոյն եղբակացութիւնն է անում նաև կրենէսի թարգմանութիւնների նկատմամբ:

Պլոֆ. Կոնհրիբի այս վերջին ենթադրութիւնը, որի միակ հիմքը նրա յայտնի եղբակացութիւններն են խորմնացու ժամանակի վերաբերմամբ, աւելի քան անհաւանական է ու կատկածելի: Սակայն նրա դիտողութիւնը Փիլոնի ու կրենէսի թարգմանիչների նոյնութեան մասին, որ նա ժամանակակից մանրագնին ու կարեւոր համեմատութիւններով, միանգամայն հիմնաւոր է ու համոզիչ:

Նոյն այս խնդրի առթիւ վերջերս լոյս անուաւ: «Հանգես Ամաօրեայ» ուսումնաթերթում՝ Հ. Արիստակէս Ալարդանեանի ուշագրաւ մի յօդուածը՝ «Լեզուական նմանութիւններ Փիլոնի եւ կրենէսի հայ թարգմանութիւններու մէջ» (1921 թ., սեպտ.—հոկտ., էջ 450—458):

¹ The age of the old Armenian Version of Irenaeus, "Յաշաբան, պատկան ժաղավածոց, Այենաւ 1911, էջ 193—202:

Հ. Վարդանեանը, քննութեան առնելով այդ
թարգմանութիւնների լեզուական առանձնայատ-
կութիւնները, հաստատում է նոր օրինակներով
նրանց բառամբների նոյնութիւնը, ցոյց է առջիս
այդ թարգմանութիւնների մ.ջ սովորական բառ-
ոերի այլիմասսա կիրարկման նմանութիւններ,
մատնանշումը է Ա. Գրոց թարգմանութեան հա-
մանացան մի շարք հատուածներ եւ, հիմնակազմ
լեզուական այս դիտողութիւնների վրայ, Ֆր. Կո-
նիրիբի ևնթագրութիւնը գտնում է հիմնառոր
եւ գիրոնի ու Խրենէսի թարգմանիչների նոյ-
նութիւնը համարում է վերջնականապէս ապա-
ցուցուած:

Պրոֆ. Կոնիրիբից ու Հ. Ա. Վարդանեանից
առաջ Խրենէսի թարգմանութեան խնդիրը փոր-
ձել էր լուսաբանել Հ. Ա. Ակինեանը (անս
Ա. Խրենէս հայ մատենագրութեան մ.ջ ո.,
ՀԱ. 1910, Յուլիս, էջ 200—208):

Հ. Ակինեանը ցոյց էր առել իր յօդուա-
ծում, որ Խրենէսի հայերէն թարգմանութիւն-
ները կատարուած են ոչ թէ ասորերէն կամ
լատիներէն, այլ յունարէն բնագրից: Պալով
թարգմանութեան ժամանակին, նա ենթագրել
էր, որ Խրենէսի գրուածքները թարգմանուած
են հայերէնի 604 թուից առաջ, որովհետեւ
թարգմանութեան հետքերը պարզ նկատելի են
Ա. Իմանէս քերթողի թղթերից մեջում, որ վեր-
ջինս գրել էր Սուրբէն ստրատելատին: Կոյն յօ-
դուածում՝ Հ. Ակինեանը մատնացոյց էր արել,
որ բացի Աքթանէս քերթողից և Ընդդէմ հեր-

ձուածոց յ հայերէն թարգմանութիւնից օգտուել
է նաև վեցերորդ դարի հեղինակ՝ “Յոհան Կար-
նոյ քաղաքացին”։ Հ. Ակինեանի վերոյիշեալ
եղբակացութիւնները հիմնարուած են փառ-
տական ապացուցներով եւ խիստ կարեւոր էին
այն տեսակէտից, որ Կրենէսի թարգմանութեան
ժամանակն իջեցնում էին վեցերորդ դար։ Առ-
կայն անհաւանական էր Հ. Ակինեանի մի ուրիշ
ենթադրութիւնը, իրը թէ Կրենէսի թարգմա-
նիչն է Վրթանէս քերթողը եւ որ թարգմանու-
թիւնը կատարուած է վեցերորդ դարի վերջին
տասնամեակին։ Այս ենթադրութիւնը, աւելի
ճիշտ գուշակութիւնը, որ հիմնարուած չէ բա-
ւարար ու գոհացուցիչ ապացուցներով, կարելի
է այժմ անտես առնել, որովհետեւ Կրենէսի
թարգմանութեան ժամանակը, ինչպէս կը տես-
նենք, զրուելու է վեցերորդ դարի երկրորդ կի-
սից առաջ։

Վերոյիշեալ յագուածներում Կրենէսի
թարգմանութեան խնդիրը թւում է ինձ մեծ
շափով պարզուած։ Ֆր. Կռնիբիրիի ու Հ. Ար-
դանեանի լեզուական լուրջ ու հիմնարո դիտո-
ղութիւններից յետոյ պէտք է վերջնականապէս
ապացուցուած համարէլ, որ Կրենէսի հայերէն
թարգմանութիւնները ժամանակակից են Փիլոնի
թարգմանութիւններին։ Կրենէսի “Ընդդէմ
հերձուածոց” թարգմանութիւնից օգտուել են,
ինչպէս ցոյց է տուել Հ. Ակինեանը, Վրթա-
նէս քերթողը եւ Յոհան Կարնոյ քաղաքացին։
Կարեւոր այս վկայութիւնը դարձեալ աներկ-

բայելի մի նոր ապացոյց է, որ Կրենէստի թարգմանութիւնները շատ աւելի հին են, քան կարծել էին հրատարակիչներն իրանց առաջարածում:

Աչքի առաջ ունենալով այս ակներեւ եղակացութիւնները, նաև յունաբան դպրոցի յաջորդական զարգացման այն ընթացքը, որ յուսաբանուած է սոյն իմ ուսումնասիրութեան մէջ, կարծում եմ, որ Կրենէստի թարգմանութիւնների ժամանակը հնարաւոր է որոշել աւելի ճշգրիտ կերպով, քան այդ արուած է վերայիշեալ յօդուածներում:

Փիլոնի երկերը, ինչպէս պարզել էինք վերեւ, կազմում են թրակացու քերականութեան ու պիտոյից գրքի հետ միասին յունաբան թարգմանութիւնների հնագոյն շերտը եւ թարգմանուած պիտի լինեն Տիմոթէոս Կուղի Հականառութիւնից առաջ, ուրեմն՝ ոչ ուշ քան վեցերորդ դարի առաջին կէսը: Կրենէստի երկերի հայերէն թարգմանութիւնները, ժամանակից լինելով Փիլոնի թարգմանութիւններին, պարզ է որ յետ են տարուելու նոյն ժամանակաշրջանը, ուստի նրանց թարգմանման terminus post quem ոչ կամ վերջին եզրը պէտք է ընդունել ոչ թէ 604 թիւը, ինչպէս կարծել եր Հ. Ակիննեանը, այլ 552—564 տարեթուերը, երբ թարգմանուած եր Տիմոթէոս Կուղի Հականառութիւնը: Կրենէստի եւ Փիլոնի թարգմանիշների նոյնացումը կամ ժամանակակցութիւնը մատենագրական այնքան կարեւոր մի

մաստ է, որ աւելորդ չեմ համարում զիր. Առանիբիրի եւ Հ. Վարդանեանի լեզուական վերըյիշեալ համեմատութիւններին աւելացնել նուեւ լեզուական իմ դիտողութիւնները, որ ունեն բոլորովին տարրեր բնոյի՛ եւ լուսաբանում են յաւնաբան լեզուի զարգացման յաջորդական ընթացքը:

Խառելով վերեւ Փիլօնի, Պիտոյից գրքի եւ Թիրակացու քերականութեան լեզուական առանձնայատկութիւնների մասին (ան § 40 Բ), ես մատնացոյց էի արել, որ այս հետզդ յն թարգմանութիւնները գրեթէ չեն գործածել հակ-, տար- եւ փոխ- նախադրութիւնները, որպէս թարգմանութիւն յաւնական ձւու-, ծու- եւ լուսականութիւնների։ Արդ՝ իմ այդ դիտողութիւնը կատարելապէս հաստատում են այժմ եւ իրեննեոսի թարգմանութիւնները։ Այդ թարգմանութիւնները եւս շունեն ամեննեւին փոխ- նախադրութիւնը, տար- նախադրութիւնը նրանց մէջ եւ ոչ մի անգամ չի համապատասխանում յաւնարէն ծու- նախադրութեան, այլ գործ է ածուած լուկեղարեան գրաբարի հետեւութեամբ, ինչպէս տարալսեմ, տարակարծ, տարաժամ եւն, իսկ հակ- նախդրի փոխարէն գործ է ածուած հակառակ¹, ինչպէս այդ առանձնայատուկ էր

¹ Հակառակազմեմ իր. Հերձ. 37. Հակառակազմութիւն իր. Հերձ. 137. Հակառակառանութիւն իր. Հերձ. 151. Հակառակառանութիւն իր. Հերձ. 234. Այս հակառակառանութիւն իր. Հերձ. 151 եւ անհակառան իր. Հերձ. 23. “Հակառական ձեռագիրը, թառմած է ինձ, որ անեցել և հակառակառանութիւնը եւ անհակառակառանը”:

նաեւ Փիլոնի ու Պիտոյից գլորի թարգմանութիւններին:

Ակրեւ մենք սեսանք (<§ 42, դ 2), որ մի շաբք յունարան բառեր, ինչպէս "տարրեր, տարրերեմ, տարրերութիւն, ներհակ, ներհակութիւն, մակացու, մակացութիւն", տասջին անգամ գործ են ածուել յունարան թարգմանութիւնների երկրորդ խմբում: Ենզուական կարեւոր այդ դիտողութիւնը հաստատում է այժմ եւ Կրենէոսի բառապաշարի քննութեամբ: Ինչպէս Փիլոնի, Պիտոյից գլորի եւ Թրակացու քերականութեան մէջ, նոյնպէս եւ Կրենէոսի թարգմանութիւններում, յունարան այդ բառերից ոչ մէկը գործածուած չէ:

Ինչպէս յայտնի է, յունարան թարգմանութիւններից մի քանիսում վորձ է արտած ստեղծելու իդական սեռի գերանունական յատուկ ձեւեր՝ Աւ. եւ. Կե., որոնք գործ են ածուած հետեւեալ թարգմանութիւններում՝ Փիլ. Այլար. 156, Փիլ. Հեսս. 6, Պիտ. 375, 377, 380, 381, 383, 384, Կերա Պիտ. 377, Աւ. Տիմ. Հակ. 33, 42, զեկ Տիմ. 26, 236, զեկ Տիմ. 35, 219, Կերա, Կերայ Տիմ. 222, 226, 283, 292, Աւ. 194, Կեմա, Կեմա, Կեմայ, Կեմայ Տիմ. 15, 31, 95, 195, 196, 222, 292, Կերում 105 եւն: Թրակացու քերականութիւնը չունի իդական սեռի այդ յատուկ ձեւերը, որովհի հետեւ իդական սեռի այդ գերանունները չկան նաեւ յունարեն բնագրում: Ասկայն Կրենէոսի երկերում այդ գերանունները հանդիպում են

միքանի անգամ և ընդդեմ հերձուածոց թարգա-
մանութեան մէջ՝ աւ Կր. Հերձ. 91 և Աւ Կր.
Հերձ. 140, 85:

Կիկ. Աղօնցն իր “Արուեստ Դիոնիսեայ”
աշխատութեան մէջ ենթազբում է, որ յիշեալ
երկերը, որոնք գործ են ածում Աւ Կիկա-
կան դերանունները, գործէ աւելի ուշ ժամա-
նակի թարգմանութիւն լինեն, քան այն թարգ-
մանութիւնները, որոնց մէջ այդ դերանունները
գործածուած չեն (Էջ CLXXVI—CLXXVII): Այս
խնդիրը սատանում է այժմ բոլորովին հակառակ
լուծում: Աւ Կիկական դերանունները գործ
են ածուած, ինչպէս աւելում ենք, յունաբան
առաջին շերտի թարգմանութիւններում, նաեւ
Տիմոթէոս Կուղի Հակաճառութեան մէջ, որ
յունաբան երկրորդ շերտի Հնագոյն թարգմա-
նութիւնն է: Խսկ յետագոյ թարգմանիշները
խորի ու անսովոր այդ ձեւերը, ըստ երեւոյթին,
անընդունելի են համարել եւ այլեւս չեն գոր-
ծածել: Այս Հնագամանները, որ այդ դերանուն-
ները, բացի Հնագոյն շրջանի որոշ թարգմանու-
թիւններից, խիստ յաճախ ու բազմազան ձեւե-
րով գործ են ածուած նաեւ Տիմոթէոս Կուղի
Հակաճառութեան մէջ, կարող է թերեւս մի
նչան համարուել, որ այս վերջին թարգմանու-
թեան ժամանակը բաւական մօտ եղած պիտի
լինէր Հնագոյն թարգմանութիւնների ժամանա-
կաշրջանին: Եթէ յետագոյում Հնաբաւոր լինի
իմ այս զիտողութեանն աւելացնել եւ ուրիշ
նման փաստեր, այդ գէպքում՝ Փիլոնի խորի

թարգմանութիւնները դժուար պիտի լինի յետ
տանել հինգերորդ դար, ոյլ նրանց ժամանակը
որոշուելու է վեցերորդ դարի առաջին կիսի սահ-
մաններում:

Ինչ վերաբերում է Կրենեսի թարգմա-
նութիւններին, նրանց հնութիւնը կարծում եմ
որ կարելի է համարել վերջնականապէս ազա-
ցուցուած: Եթէ անգամ Փիլոնի ու Կրենեսի
թարգմանիչների նոյնացման գէմ լինեն որեւէ
առարկութիւններ, յամենայն դէպս՝ այդ թարգ-
մանութիւնների խմբակցութիւնն ու ժամանա-
կակցութիւնն այնքան պարզ է ու անփիճելի, որ
այլեւս ոչ մի կասկած չի կարող լինել, որ Կրե-
նեսի թարգմանութիւնների ժամանակը պէտք է
գնել Տիմօթէոս Առղի Հակածառութիւնից ա-
ռաջ, հաւանաբար, վեցերորդ դարի առաջին
կիսում:

§ 54. Կանոնի վեհապետութիւններէ հայելին նույն-
անունու իւրանու իւրանու և առաջական: — Կանոնունին վերա-
գրուած մեկնութիւնների նկատմամբ նախ կա-
րեւոր եմ համարում այստեղ յիշատակել, որ
1904 թուին, Կանոնունի հայերէն բնագիրը հրա-
տարակելուց յետոյ¹, յաջողուել էր ինձ գտնել
լույսիածնի մատենագարանում մեկնութիւնների
մի նոր ընտիր օրինակ, որ մինչեւ այժմ մնացած
է անյայտ: Այդ նոր ձեռագրի այժման համարն
է թ. 579 (= Մայր Յուցակ թ. 565): Յ. Կարեն-

¹ Nonnos, Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz. Marburg 1903.

Նեանցի ցուցակում՝ այդ ձեռագիրը մանրամասն նկարագրուած չէ, այլ նշանակուած է միայն, որ ձեռագիրը ժողովածու է՝ ուժածալ բոլորագիր ի Առեման վարդապետէ ի թուին Հայոց Ռ.Օ.Բ., ունի յիշատակարան։ Սակայն այս համառատ տեղեկութիւնն անգամ սիսալ է՝ Ռ.Օ.Բ. թուականի փոխարէն պէտք է լինի 2Ռ.Բ. (1303թ.)։ Խնապէս տեսնում ենք, նոր ձեռագիրը բաւական պատկառելիէ իր հնութեամբ եւ, որքան յիշում եմ, ունի մեծ թուով ընտիր ու նոր ընթերցուածներ։

Վոննոսի մեկնութիւնների հայերէն թարգ-մանութեան ժամանակը մինչեւ այժմ մնում է դեռ անորոշ։ Հայկացեան խռագրքի աշխատա-կիցները համարում են նրա լեզուն «Հին եւ ընտիր»։ Այսուհետեւ, թէ այս եւ թէ յունարան դպրոցի միւս երկերը վերագրուել են, սովորա-բար, հինգերորդ դարի Կրտսեր թարգ մանշաց խմբին¹։ Խորենացու խնդրի հետ միասին աւան-դական այս տեսակեար ենթարկուեց. բնակա-նարար, խիստ քննադատութեան։ 1904 թուին «Հանդէս Ամօրեայ», ուսումնաթերթում լոյս տեսաւ Հ. Ա. Ակիննեանի ընդարձակ մի յօդուածը, որի մէջ հեղինակը, նորից քննելով այս խնդիրը, Ենթագրում է, որ մեկնութիւնները թարգմա-նուած պիտի լինեն 490 թուից յետոյ եւ եօթե-

¹ P. Sukias Somal, Quadro delle opere di vari autori, Venezia 1825, էջ 18. Հ. Գորբ. Զարբհանութեան, Մասնաւորուն հայկական թարգմանութեանց հայնեաց, Անդեսիկ 1889, էջ 13, եւ ն.

բարդ գարից առաջ¹: «Մեկնութեանցալեզուն, — ասում է Հ. Ակինեանը, — շատ կը նմանի Փիլնի, Ալյխամբենեայ գրոց թարգմանութեանց լեզուին եւ ոճին. եւ այս կը դրդէ զմեզ ընդունելու թէ կամ Նոյն անձը, որ զանոնք յեղած է ի հայ — եւ որ գժուարին է — եւ կամ անոր ընկերակիցներէն մին թարգմանած է միեւնոյն ատեն²: » Ն. Ակինեանի գիտողութիւնն ուղիղ է միայն այն շափով, որ Կոննոսի թարգմանութեան մէջ հանդիպում են յաճախ Փիլնեան խմբի յատուկ բառեր, սակայն այս ընդհանուր նմանութիւնները չեն կարող հիմք ծառայել Փիլնի ու Կոննոսի թարգմանիչների նոյնացման կամ ընկերակցման: Կոյն կարգի լեզուական նմանութիւններ նկատելի են, ինչպէս տեսանք, յունարան նաեւ միւս թարգմանութիւններում (տես վերևու § 42 եւ § 44) եւ բացատրում են նրանով, որ յունարան թարգմանութիւնների երկրորդ ու երրորդ շերտերը ենթարկուել են մեծ կամ փոքր շափով հնագոյն թարգմանութիւնների ազդեցութեանը: Յունարան թարգմանութիւնների խմբաւորումները որոշելու համար կարեւոր են ոչ այնքան նրանց յատուկ բառապաշարի մասնակի նմանութիւնները, այլ նրանց լեզուական ու քերականական առանձնայատկութիւնների այն բնորոշ ու ուշագրաւ-

¹ Կոննոսի մի կառութիւնը՝ Պարիզու Աստուածառանի հիմք Առաջ. Հ. Ա. 1904. Առյօն էլ 139—146 և. Յունիս էլ 165—173:

² Տես նոյնը. էլ 166:

տարրերութիւնները, որ մատնացոյց են արուած սոյն ուսումնասիրութեան մէջ¹:

Առանձնալով խնդրին այս անսակէտից, կարծում եմ, որ գժուար չէ ապացուցանել, որ Կանանախ մէկնութիւնները թարգմանուած պիտի լինեն կամ յունարանն երկրորդ շերտի թարգմանութիւնների ժամանակ կամ նրանցից յետոյ, ուրեմն՝ նրա թարգմանման terminus ante quem ուո՛ կը լինի ոչ թէ 490 թիւը, ինչպէս կարծել է Հ. Ակիննեանը, այլ վեցերորդ դարի երկրորդ կէսը:

Այս եղբակացութիւնը հիմնաւորելու համար կարեւոր են նևալ մւռամ լեզուական հետեւեալ դիսոլութիւնները: 1. Կանանախ թարգմանութեան մէջ գործ են ածուած յանարան բոլոր այն բառերը եւ նախազրութիւնները, որոնք հանդիպում են միայն յանարան երկրորդ ու երրորդ շերտի թարգմանութիւններում, ինչպէս օրինակ՝ մակացու Կանն. 11, 7, Ներհակ 64, 4, ուարրերութիւն 24, 18, արտունանկեալք 49, 7, փոխակերպիմ 43, 23, փոխարկեմ 74, 10, 80, 6, փոխարերութիւն 12, 21, 35, 18, Հակատոփող

¹ Երենէսի ու Փիլոնի թարգմանութիւններում ոչ պայցն աւելի բազմութիւն էին ու պայծառ նրանց բառապաշտուի նմանութիւնները, ոյլը եւ նմանութիւնները նկատելի էին նաև նրանց անի, գարնաւելքների, բառերի ոյլինմասու գործածութեան. Ու Գրքից առևառած Հաստուածների եւ յերականական ձևերի մէջ, բայցի այն նրանց մէջ եւ շնչմ նկատել լիզուական ու յերականական այն յառաւետարքերութիւնները, որ խելքն աշքի են ընկում, երբ Համեմատութեան են առնաւում յանարան թարգմանութիւնների առարքեր խմբերը:

26, 23, 78, 15. Հակադարձիմ 46, 15, Հակակայիմ 69, 5 եւն:

Վերեւ մենք մատնացոյց էինք արել, որ այս բառ երը կազմուած պիտի լինեն յունաբան թարգմանութիւնների երկրորդ շրջանում (անս § 42 դ., 2): Թթակացու քերականութեան, Փիլոնի ու Պիտոյից զրբի թարգմանութիւնների ժամանակ, ըստ երեւոյթին, զրանք գեռեւս գոյութիւն չեն ունեցել (անս վերեւ § 40 բ եւ դ): Եկղուական այս դիտողութիւնը կատարելապէս ճշտուեց նաև Իրենէսոսի թարգմանութիւնների քննութեամբ, որտեղ, ինչպէս տեսանք, ժամանակակից են Փիլոնի թարգմանութիւններին (անս վերեւ § 53): Եթէ Կոննոսոսի թարգմանութիւնը եւս լիներ խմբակից հնագոյն թարգմանութիւններին, պարզ է որ նրան մէջ չէին կարող գործ ածուած լինել վերոյիշեալ նոր բառերն ու նախադրութիւնները: Խակ քանի որ այդ բառերը հանդիպում են Կոննոսոսի թարգմանութեան մէջ, կարծում եմ, որ կարող ենք եղբակացնել, որ այս մէկնութիւնները ժամանակակից չեն հնագոյն թարգմանութիւններին եւ թարգմանուած են, ամենայն հաւանականութեամբ, աւելի ուշ:

2. Այս ենթադրութիւնն անելուց յետոյ այնուհետեւ հաւանական է դառնում, որ Կոննոսոսի թարգմանիչը եւս, ինչպէս եւ յունաբան դպրոցի երկրորդ ու երրորդ շրջանի թարգմանիչները, ըստ երեւոյթին, ծանօթ է եղել Թթակացու քերականութեան ու Պիտոյից զրբին, եւ քերականական ու ճարտասանական յատուկ բառերը

մեկնութիւնների մէջ ծագում են, հաւանաբար,
հնագոյն այս թարգմանութիւններից:

Այս տեսակէտից հետաք ըքիր է Կոննոսի
թարգմանութիւնն մէջ արձանականի վերաբեր-
բեալ մեկնութիւնը, որը զրեթէ համապատաս-
խանում է Պիտոյից զրբի “Յաղակ” պարստին
անսութեան:

Նըննուս, էջ 24, 14—17.

Պիտ., էջ 445, 10—14¹.

“Արձանականներան պար-
ստ, և Յաշիանոսի զրբ-
ծոցն. ուլ դանշանի ի
պարստ, է արձանականն.
քանզի է պարստան ի ձեռն
ներբոշական զբացն. որ-
պան՝ ազգէ, ի վաշժից, ի
զործոց, ի բազգառութ ձեռն:
Ուլ արձանականն ի ձեռն
զործոց, միացն է, և, թէ
պատուան. է՝ ի բազգառու-
թ ձեռն:

“Պարստ էւ արձան է ի
պարստանին նախայա ից
առնել, որպէս ի ներբո-
շանաւ: Ի վերայ առնել էւ
զազդի: Կոմանապէս էւ
զանանդի՝ զովս թենց
հաւանաբ: Եւ ապա զըոր-
ծան զնել: Եւ զրազգա-
ռութիւնն: Եւ զի վերայ
բանին՝ պատճառին ձայ-
նակցեալ.”

Թթակացու քերականութեան ու Պիտոյից
զրբի ազգեցութեան հետքեր կարող են հա-
մարուել նաև քերականական ու ճարտասանա-
կան հետեւեալ բառերը.

— ՀՆԵՇՏՈՎԱՆ ՆԵՐԻԿԱՅ Կոն. 10, 16, թթ. 23,
24, 45 եւն, բ. ՊԱՐԵԼԴՀՈՒԹՈՎ: անցեալ Կոն. 10, 16,
թթ. 25 եւն, բ. ԱՇԽԱՌ ապանի Կոն. 10, 16,
թթ. 23, 24, 46 եւն, բ. ՀՅՈՒՄԱԼՈՂԻՆ առաջ-

¹ Տե՛ս Մ-վոկովի Խորենացւոյ մասհենակը թի. Կը.
Անձնագիր 1841:

բանութիւն թր. 1, ստուգաբանեմ՝ Կան. 51¹, է. էպանոցու մականուն թր. 17, 19, էպանոցի մականունութիւն Կան. 32, 18, 41, 3, և ուստի ուստի անցեալ է, ովքոր է լինի՝ ածանցեալ է, է. գովասանութիւն Կան. 16, 9, գովասանական ոլիս. 580, 17, և չչշառնեալ արտասեմ Կան. 23, 6, ոլիս. 529, 15 եւն, բ. լամբօչ մեծավերջ Կան. 36, 20, թր. 43, 17, մեծավերջական ոլիս. 369, 11, ըստ Հ. Ըկինեանի Կոննոսի սղավերջը բառը (Էջ 4, 3) թարգմանութիւն է յունարէն ոսքիրշուս բառի (անս ՀԱ. 1904, Էջ 171): Աւշադրութեան արժանի է, որ յունարէն նոյն բառը թրակացու քերականութեան մեջ թարգմանուած է և անգայտ, եւ ոչ սղավերջ:

3. Կիկ. Ազոնցնիր և ըրուեստ Դիոնիսիս այս աշխատութեան մէջ նկատել էր, որ թրակացու քերականութեան թարգմանը յունարէն օգագուշ բառը հասկացել է իրրեւ սարգենի (Էջ 4, 8), իսկ Կոննոսի մէկնութիւնների մէջ նոյն ձգչուր բառը թարգմանուած է և մուրա (Էջ 71, 10): Կ. Ազոնցի կարծիքով, այս բառի տարբեր թարգմանութիւնը ուշադրաւ մի ապացույց է, որ թրակացու ու Կոննոսի թարգմանիչները շեն կարող լինել միեւնոյն անձը: Այս նկատազութիւնը, որ միանգամայն ճիշտ է, հաստատում է նաև իմ վերօյթեալ լեզուական դիտողութիւններով: Կոննոսը եւ թրակացու քերականութիւնը, ինչպէս տեսանք, թարգմանուած են յիրաւի տար-

բեր ժամանակացընաներում եւ, բնականաբար,
չեն կարող համարուել միեւնոյն թարգմանչի
աշխատութիւն:

4. Կոննոսի թարգմանութիւնը լեզուական
իր առանձնայտկութիւններով թւում է ինձ
ամենից մօտ ոչ թէ Փիլոնի, այլ Արիստոտելի
“Յաղագս աշխարհի” թարգմանութեան: Այս
երկու թարգմանութիւնն էլ գրուած են յու-
նարան մատչելի ու հասկանալի լեզուավ: Արակը
երկուոն էլ գործ են ածում յաճախ օտար բա-
ռեր, մինչդեռ յունարան միւս թարգմանութիւն-
ները յունարէն բառերը, սովորաբար, աշխատել
են փոխազրել հայերէնի: Օրինակ՝ ա. անդիք
եթեր Կոն. 39, 23, Ար. Աշխ. 606, 15, 625, 19,
Եթերային Ար. Աշխ. 606, 22, բայց արդի Փիլ-
նախ. 11, պիտ., արփային Փիլ. լին., ելից եւն,
բ. պատէս ամպով “Կոն. 46, 5. 8. 12, 69, 4. 9,
Ար. Աշխ. 616, 5, 7. ծետրօն թէտրան “Կոն.
74, 1, բայց տեսլարան Փիլ. լիւս. 136, 8իմ.
Հակ. 315, 10, Դ. թէտար հանառ Կոն. 14, 4,
19, 22, բայց ձարտասան Փիլ. տես., պիտ. 356,
25, ՅՍտ. 422, 13, ՊՍՀմ. 177, 27, Պ.Պորֆ. 254,
26, Վերլ. 581, 25, Եւն, Ե. սօբւստէյշ սովորեսակս
Կոն. 14, 4, բայց իմաստակ Փիլ. նախ. Էջ 9,
լին. 205, պիտ. 347, 25, Երեն. Ընդդ. Հերձ.
11, 201, սօբւստէյշ իմաստական Վերլ. 561,
21, ԵլԱտ. 32, 10, Հ. էպոքէնտասրօս Խպատկեն-
գովոս Կոնն. 18, 8, բայց ձիացու Փիլ. ժրան
եւն, Ե. ձնօրուած անզրի, անզրիանդ Կոն. 24, 9,
70, 15. 18. 71, 5. 6, բայց անապատկեր Փիլ.

նախ. էջ 34, այլրաձեւ Կեր. պարփ. 238, 3, և
Տիմարումք իմարտինէ Ար. Աշխ. 628, 10, եւ ուրիշ
Նման բառեր:

Աշազդրութեան արժանի են այս թարգ-
մանութիւնների մէջ նաև մի շարք համանման
բառեր, որոնք յունաբան միւս թարգմանութիւն-
ներում կամ բոլորովին չեն գործածուած կամ
խիստ հազուագիւտ են. օրինակ՝ անտարչեւոց
գերհիւսային Կան. 19, 18, գերհիւսիսական
Ար. Աշխ. 605, 17, բ. անձնուուս վերատրութիւն
Ար. Աշխ. 612, 29, անածնայւ վերատրեամ Կան.
44, 7, բ. յառաջախօս Կան. 72, 11-15, Ար. Աշխ.
603, 26, բ. ոսրօւութիւն հրատեսակ Կան. 44, 7,
Ար. Աշխ. 606, 24, ե. դիւթանալ Կան. 70, 11,
Ար. Աշխ. 614, 23, ւ. շրջարագուած հրամանա-
տրութիւն Կան. 64, 2, 3 եւն, Ար. Աշխ. 614,
25, ե. չունայւ փորտե Կան. 69, 8, Ար. Աշխ. 615,
5, ւ. գովասանութիւն Կան. 16, 9, Ար. Աշխ. 617,
30, բ. չըրացնոց ամպահարութիւն Կան. 56, 15
եւն, Ար. Աշխ. 618, 10, բ. էնոյշի արտօնութիւն
Ար. Աշխ. 621, 10, արտունանկեալք Կան. 49,
5, 7, արտունութիւն նույնույշի դիլհմ. 154, 6,
արտունող Ալտ. 373, 20 եւն, բ. յաւզաւու-
թիւն Կան. 48, 23, Ար. Աշխ. 616, 27, 617,
9, 622, 23, եբ. զիւրափոփոխ Կան. 69, 12, Ար.
Աշխ. 625, 24, ետ. գետօրէն Կան. 44, 6-10, Ար.
Աշխ. 614, 25, տե՛ս նաև զիւրէն Ար. Աշխ.
610, 11, գծորէն Ար. Աշխ. 613, 21,

Գերեւ մենք տեսակը, որ թէ Կաննասի մեկ-
նաւթիւնները եւ թէ Արխառուելի ԱՅԱՀԱԳՄ

աշխարհի գրուածքը չեն կարող թարգմանուած լինել յունարան երկրորդ շերտի թարգմանութիւններից առաջ եւ նրանց թարգմանման terminus ante quem ոռ պէտք է ընդունել վեցերորդ գարի երկրորդ կէսը։ Ժամանակագրական կարեւոր այս եզրակացութիւնը, ինչպէս եւ նոյն թարգմանութիւնների վերեւ մատնանշուած լեզուական նմանութիւնները, կարծում եմ որ ուշագրաւ ու հաւանական նշաններ են, որ Կոնսունաթի մեկնութիւնները խմբակից ու ժամանակականից են ոչ թէ Փիլոնի, այլ ՝ Յաղագս աշխարհի թարգմանութիւնը։

Կոնսունի թարգմանութիւնն terminus post quem ոռ առհմանը որոշելու համար Հ. Կ. Ակիննեանը դաւաիթիթ փիլիսոփայի քերականի մեկնութիւնն մէջ մատնացոյց էր արել¹ հետեւեալ հատուածը։ Իսկ ողբերգութիւննոխազերգութիւն ասի ըստ յունականին առ ի պաշտամ առեալ դիտնիւսեայ ու մէմն տուողի որթոյ, որ է պատմութիւն յայտնի²։ Հ. Ակիննեանի կարծիքով, որ է պատմութիւն յայտնի³ խօսքերով դաւաիթ փիլիսոփան, ըստ երեւոյթին, ակնարկում է Կոնսունի մեկնութիւնների Պ. ճառի կա գլուխը (Եջ 50)։

Խնձ թւում է, որ անկատ նոյն իսկ դաւաիթ փիլիսոփայի վերոյիշեալ վկայութիւնից, որ կարող է վիճելի համարուել, Կոնսունի մեկնութիւնն

¹ ՀԲ. - 1904. Ել. 167։

² ՏԵՇ. Արտելուս Դիտնիսեայ, Ել. 89։

ները եւ Արիստոտելի աշխագու աշխագուհին պրուածքը թարգմանուած պիտի լինեն, հաւանաբար, վեցերորդ դարի երկրորդ կիսում կամ ամենուշը՝ եօթերորդ դարի սկիզբներում:

§ 55. Մատեն Երրորդ հաջ Բառակը Ե-
Յակնանու Եպիսոպուստի Արքայաց Քրիստու-
յան Երրորդ շերտի Բարքանունիւնիւն յետոյ
— “Գիրք թղթոցում” ապուած են կրօնա-
գաւանաբանական երկու թուղթ՝ և բանելի մեծի
քերգողահաւաքն Առվտէսի Խորենացի եպիսկո-
պոսի¹ (էջ 22—28) եւ “Խրանելոյն Յով-
հաննու Հայոց եպիսկոպոսապետի, Ապացոյց յեր-
կուց բնութեանց ասել զփրկիչն եւ կամ մի բնու-
թիւն” (էջ 29—40): Այս թղթերի հեղինակ-
ների ու ժամանակի խնդիրը, թէ եւ յաճախքնու-
թեան նիւթ է եղել բանասիրական նորագոյն
աշխատառութիւններում, բայց մինչեւ այժմ գեռ
որոշուած ու պարզուած չէ:

Հ. Ն. Ակիննեանը՝ “Տիմոֆէոս կուղ Հայ
մատենագրութեան մէջ” իր յօդուածում այս
երկու թուղթը համարում է տարրեր դարա-
շրջանների եւ իրարից անկախ գրութիւններ (տե՛ս
Հ. 1908, սեպտեմբեր, էջ 261 եւ Հոկտեմբեր,
էջ 302): Յովհաննու եպիսկոպոսապետի Ապա-
ցոյցը նա ենթագրում է յանարէնից թարգմա-
նուած վեցերորդ դարի առաջին քառորդին, իսկ

¹ Տե՛ս նույն Ա. Տէր-Միքայէլինուն, Առանձ էլ քահա-
նոյի Անեցու ու Հառարձունք, Առաջարշանութ 1893, էջ 255—
261: Կայն գրաւթեան վերհաջիրն է այսակող՝ “Խրանելոյն
մինի քերթ ու զահորն Առվտէսի եպիսկոպոսին” (էջ 255).

Պավսէս քերդողահօր գրութիւնը, որը Ցիմոնթէս կուզի թարգմանութիւնից ունի Երեքթէսի հատուածը, նա համարում է ինքնուրոյն հայերէն աշխատառութիւն, գրուած Ցիմոնթէս կուզի թարգմանութիւնից յետոյ, ուստի եւ այս գրութեան տեմինս անտեսած պատման մէջ գերարդ դարի երկրորդ կէսը:

Ենթադրելով Ցավչաննու եպիսկոպոսապետի Ապացոյցը յաւնարէնից թարգմանուած, Հ. Ակինեանը, ըստ երեւոյթին, այդ գրութիւնը չէ համարում հայոց եպիսկոպոսապետի աշխատառութիւն: «Պատմառը Դ. Ժողովոյն երկարնակացն ու գրուածքում, որ նու վերագրում է Արքանէն քերդողին, կայ նոյնպէս Ցավչաննու եպիսկոպոսապետի ինչ որ մի թղթի յիշատակութիւն և Ապացոյցը, նրա կարծիքով, նոյնացուելու է հենց այս թղթի հետո: Կարեւոր այդ յիշատակութիւնը գտնուում է Պատմառի հետեւեալ հատուածում»: «Եւ որ յանդիմաննեն և նզովին զժողովին եւ զտումարն՝ թուղթն Զենոնի ուղղափառ թագաւորի, որ կօչի Հենատիկոն և թուղթն երաներոյ Անատատայ թագաւորի, եւ զիրք Տիմոնթէսի Աղեքսանդրացւոյ, եւ թուղթն Ցոլիսննու եպիսկոպոսապետի, եւ թուղթն Պետրոսի Անատոքացւոյ, եւ Պատմառն իսկ, եւ այլ բարում թուղթք ուղղափառաց» (ան «Պիլք թղթոց», էջ 126):

Հ. Ակինեանը կարող էր իր կարծիքն աւելի եւս հիմնաւորել, եթէ մատնացոյց աներ Անատոս կայսեր թղթում հետեւեալ հատուածը:

¹¹ Զայս սահմանը ընկալանեւ սուրբ Հարրին ՃՌ-քն որդի ի Կոստանդնուպատիա ժամանեցան վասն սրբոց Հոգուցն։ Ըստ Նմին եւ Երանելի ժաղավան որ յէվեսաս ժաղավեցան եւ Նզովեցին զահատորիոս Հերձուածող եւ զամենայն որ ըստ Նմա խորհին եւ Հաւատան, որպէս եւ թուղթն որ կոչի Հենատիկոն Զենոնի ու Շենոնի ու Պղղափառ թագաւորի, Նոյնպէս եւ թուղթն Երանելոյն Յովիաննու և պիտիկոպոսապետին Աղերսանորի¹ որ ցուցանեն այսպէս, յարում նզովէ զառւմարն Լեւոնի եւ զժողովն Քաղկեդովինի, որ անցին ընդ նոյն սահմանն, եւ Երկուս ընութիւնն զինի միաւորութեանն սահմանեցին վասն Քրիստոնի² ։ (ան ա Գիրք թղթոց ոց ո էջ 277)։ Անաստասի այս թղթում Յովհաննես և պիտիկոպոսապետը, թւում է ինձ, որ նոյն անձն է, որ յիշուած է վերեւ Արթանես քերգովի Պատմաւրում։ Իսայց այս վերջին վկայութիւնը խիստ կարեւոր է այն անսակեաից, որ Յօվհաննեսն անուանեած է այստեղ՝ ³ Եպիտիկոպոսապետ Քղերանողին։ Եթէ Ապացոյցը վերագրուի՝ ⁴ Յովհան-

1. «Եղիշը հաւատոյն ժաղավածուի ու առաջարանում էլուրոց հեղինակուուր ենթաւորում է»։ որ այս վեցոյն թիւնը մասն մէ՞ անհարկուած է երեւ ի Յօվհաննես թ. - ի Ան. Երանին դրան թուղթը (513-515 թ.), էջ LXVII։

2. «Եղիշը հաւատոյն ժաղավածուի մէց նոյն այս հաստամն առաջ է բերուած առարիկը խմբագրութեամբ» Արտիկութեան զինն։ որ կոչի Հենատիկոն Զենոնի ու Պղղափառ ու գուաորի, Նոյնպէս եւ թուղթն Յովիաննու և պիտիկոպոսապետին Աղերսանորի՝ այն։ որ ցուցանէ ոյսպէս, յարում Նզովէ զառւմարն Լեւոնի եւ ոյց անցին ըստ նոյն սահմանն եւ Երկուս ընութիւնն զինի միաւորութեանն առաջն անցին ի վերոյ միոյն Քրիստոնի։ Խշմանեին 1914, էջ 128։

նու. Եպիսկոպոսապետին Աղքաքանդրին, պարզ է որ այդ գրութիւնը չի կարող լինել Յովհաննու հայոց եպիսկոպոսապետի աշխատութիւն, ալ պէտք է համարուի թարգմանութիւն, ինչպէս ենթադրել Հ. Դ. Աղինեանը։ Առկայն Յովհաննու եպիսկոպոսապետի ինդիրը շատ աւելի բարդ է, քան կարելի էր ենթադրել։ Հ. Աղինեանի վերոյիշեալ եղբակացութիւնների գէմեղան մի շաբթ առարկութիւններ։

1913 թւին “Ըողակաթ” հայագիտական ժողովածուի մէջ լոյս անսաւ գ. Տէր-Մկրտչեանի յօդուածը՝ “Հայ մատենագրութեան հնագոյն թուականները” (տե՛ս “Ըողակաթ”, Աւազարշապատ 1913, էջ 154—163): Այս յօդուածում գ. Տէր-Մկրտչեանը մատենացոյց է անում, որ “Կնիք հատառոյ ժողովածուի մէջ մի մեծ հատուած է բերուած Յովհաննու եպիսկոպոսապետի Ապացոյցից այսպիսի վերնագրով՝ “Երանելոյն Յովհաննու Մանդակունուոյ Հայոց կաթուղիկոսի” ի հականառութենէն Քաղկեդոնի ժողովոյն, որ ասի Ապացոյց (“Կնիք Հաւ. էջ 130, հմմաւ գիրք թղթոց”, էջ 33): Յենուելով այս վերջին վիճակութեան վրայ եւ ընդունելով Տիւամիւս Կողի Հականառութիւնը թարգմանուած 480—484 քառամետրին, գ. Տէր-Մկրտչեանը եղբակացնում է, որ Մովսէս քերդողահայրը պիտի լինի Փարագեցուց յայտնի Բագվէս փիլիսոփոսը, իսկ Ապացոյցի հեղինակ Յովհաննէս հայոց եպիսկոպոսապետը պիտի համարուի բարդ կաթուղիկոսի նախորդը՝ Յովհան-

Պանդակունին։ “Ենիք հաւատոյ և հրատարակութեան իր առաջարանում՝ Կարապետ եպիսկոպոսը յամառութեամբ պաշտպանում է զ.. Տէր-Մկրտչեանի այս տեսակէտը եւ աւելյացնում նաև իր կողմից, “որ Յովհաննու եպիսկոպոսապետի գրութիւնը գործ է ածում Տիմոֆէոսի Հականութեան միայն յատուկ բառեր ու գարձուածներ (այլ ոմն զօհսուսն գոլով արտակընկի, եւ այլ գթիստոսն անախոտ եւ անշարժարելի, զուգանանապարհութիւն, ախտուկի, ասուուածվայիշչարար, անքաժ, տնտեսութիւնն եւ այլն.) եւ գաղափարներով էլ պատուում է նորա դաւանաբանական բարունունց շրջանակի մէջ” (էջ LIX):

Հ. Գ.. Տէր-Մկրտչեանի եւ Կարապետ եպիսկոպոսի վերայիշեալ եղբակացութիւնը, ինչպէս աեսնուում ենք, հիմնուած է, գլխաւորապէս, Տիմոֆէոս Կուղի թարգմանութեան թուականի վրայ: Նրանց ապացոյցները երկայլիք են այն աեսակէաից, որ, Կուղի թուականի մովուսմամբ, այդ ապացոյցներն իսկոյն պիտի գառնան իրանց դէմ, որովհետեւ երկուոն էլ ընդունում են ու պետում, որ Մովսէս քերդողահայրը սգտուել է Հականութեան հայերէն թարգմանութիւնից, իսկ Կարապետ եպիսկոպոսը մասնացոյց է արել Տիմոֆէոսի թարգմանութեան յատուկ բառերը նաև Ապացոյցի մէջ։ Այդ՝ աշքի ռուած ունենալով վերայիշեալ մէր լեզուական եւ այլ գիտութիւնները, կարծում եմ, որ Տիմոֆէոսի թարգմանութեան ժամանակը կարելի է համա-

բել վերջնականապէս պարզուած (անս վերեւ § 38, § 42 եւն): Տիմոֆէտի Հականառութիւնը թարգմանուած է ոչ թէ 480—484 քառամեկակին, այլ 552—564 թուականների ժամանակամիջոցում: Պարզ է ուրեմն որ Հ. Պ. Տէր-Մէրտչեանի ու Կարապետ եպիսկոպոսի վերոյիշեալ պնդումները պէտք է համարուեն սխալ: Մօվսէս քերգողահօր եւ Յովհաննու եպիսկոպոսապետի թղթերը, և թէ նրանք օգտուել են Հականառութիւններից, չեն կարող յետ տարուել ոչ հինգերորդ դար, ոչ ել անգամ վեցերորդ դարի առաջն կեսը: Անալ է նշյալքէս Հ. Պ. Ակիննեանի կարծիքը. իբր թէ կրօնա - զաւանական այս թղթերը զանազան ժամանակաշրջանների գրուածքներ են: Հ. Պալուատ Տէր-Մէրտչեանը վերոյիշեալ իր յօդուածում դոց է առել, որ այդ գրութիւնները դժուար է բաժանել միմեանցից: Մօվսէս քերգողահօր թաղթը ուղղուած է, նրա կարծիքով, Յովհաննէս եպիսկոպոսապետին եւ այս վերջինս իւր Ապացուցը գրելիս աչքի առաջ է ունեցել Քէրդաղահօր գրութիւնը: Պալուատ Տէր-Մէրտչեանի այս եղբակացութիւնը, որ հիմնուած է փաստական մի շարք դիտողութիւնների վրայ (անս “Ծովակաթ”, էջ 159), հաստատուում է ըստ իս այդ գրութիւնների զաւանապանական ընդհանուր բովանդակութեան, յատուկ մաքերի, նաեւ լեզուի ու ռճի ակներեւ մերձակցութեամբ: Ըստ Տիգան է ուրեմն Գ. Տէր-Մէրտչեանի առարկութիւնը, որ չէ կարելի Յովհաննու եպիս-

կոպուապետի գրութիւնը թարգմանուած համարել վեցերորդ դարի սկզբներին իսկ քերդողահօր թղթի ժամանակը յևտ տանել վեցերորդ դարի երկրորդ կէսը կամ եօթերորդ դար Այս թղթերը, ինչպէս աեսնում ենք, ժամանակակից երկեր են, բայց ոչ Պափակու փիլիսոփոսի եւ Յովհան Մանդակունու գրուածքներ, ինչպէս ենթագրել է Գ. Տէր-Մկրտչեանը:

Ո՞ր այդ երկերը չեն կարող լինել հինգերորդ դարի գրուածքներ, այդ երեւում է ըստ իս Նոեն նրանց բովանդակութիւնից ու նրանց յունաբան լեզուի առանձնայատկութիւններից: Ուշադրութեան արժանի է ամենից առաջ, որ Պափակու քերդողահօր վերագրուած թղթերը դաւանաբանական իր մեկնաւթիւնները հիմնաւորում է յաճախ արիստուելեան իմաստութեան գաղափարներով: “Աոյն թղթի մեջ յիշւում է նոյն իսկ սկզբանական Ասորոգութիւնը” ինչ որ երկ հետեւեալ հատուածում: “Ա ան օրոյ ի գեալ եւ յոյժ ճահողագոյն թուի խուտավանողաց մի բնութիւն ասելով. զի եւ յաջմնատեալ համեմատութեամբ մի Տէր քարոզի: Ա պետք է հակառակ ինչ վարկանիցին ումանը զպատասխանեալող անկարելի համարելով, որպէս թէ երկուս բնութիւնս պատշաճիցէ ասել՝ գիտացեն զի զերոյն զանհնարութիւնն եւ ի մարդումն զոյ նկատելով ճանաչի¹ ոչ միայն իւլի:

¹ Ասմանէլ Վանեցի, էջ 257, անի՛ հե. իւ մարդուն շատ Շատ նկատելով ճանաչել:

Հիսուֆայական ստորոգութիւնսն, այլեւ սուրբ գիրք աստուածաշունչը ու ([“]Գիրք թղթոցը, էջ 23—24): “Փիլիսոփայական Ատորոգութիւնը երկը եւ Ատորոգութիւնը յունաբան յատակ բառը, որ յիշատակուած է այս հաստածում, մի նշան է, որ քերդող հօրը վերագրուած թղթի ծագումը պէտք է դնել Արիստոտելի Ատորոգութեանց թարգմանութիւնից յետոյ, ուրեմն վեցերորդ դարի վերջին քառորդին կամ աւելի ուշ՝ Կմանապէս եւ Ապացոյցին հեղինակը, թուում է ինձ, որ ծանօթ է Արիստոտէլի իմաստասիրութեան եւ եակաց քննութեան մասին ունի հետեւեալ ուշագրաւ ակնարկութիւնը. “Բայց կամիմ փոքր ի շատէ անցանել բանիւ յազագս ճառի բնութեանցն, զոր ամանք չարաչար ի կիր առեալ վարեցան, զամպատանութիւնսն ի վայելչապէս ճառաւզն կամելով թափել: Բայց նախ ճանաչել պարսէ, զի ոչ յիշատակեցաւ բնութեանցդ անուն՝ ի գէմօ Քրիստոսասէր ուղղափառաց, այլ չարաշարն պատառմաք ի խոստվանողաց. զորս անվընէպ գոյ ասել, քան զբնաւու անաւրինագոյնս եւ տարագրեալս յուխաէ աւետեացն, որը ըստ զոյացութեանց իմն բնախաւսելով, զէակս ըննել առին ի կիր, զերկիս խորհելով ընդ նոյն շաղեալք, ի Խլոդ ենի կուրութեան հազրսն ([“]Գիրք թղթոցը, էջ 3):

Այս հաստածում [“]որը ըստ զոյացութեանց իմն բնախաւսելով, զէակս ըննել առին ի կիր, ի խորհելով ակնարկում են ըստ

իս Արիստոտելի իմաստասիրական - արամաբանաւելան եղան երկերը, որովհետեւ այդ երկերն էին քննում՝ էակաց ինդիրը “ըստ գոյացութեանց բնաւուսելավ”⁷ Հատուածի բովանդակութիւնից երեւում է, որ կրօնա-դաւանական վէճերը Քրիստոսի բնութեանց մասին սերտ կապուած են եղել արիստոտելեան իմաստասիրութեան հետ եւ այդ վէճերը յարուցուած են եղել էակաց քննութեան ազգեցութեամբ։ Ինչպէս վերեւ տեսանք, “էակաց” եւ “գոյացութեանց ինդիրը քննուած է, զիսաւորապէս, Արիստոտելի Ասորոցութեանց երկում”։

Արդ՝ եթէ “Ապացոյցը” համարուի հայ հեղինակի աշխատութիւն, թւում է ինձ, անհաւանական շի լինի ենթադրել, որ նրա ժամանակը, զրուելու է արիստոտելեան հնագոյն թարգմանութիւններից յետոյ եւ նրա երկը եւս ինչպէս եւ քերգողահօր վերագրուած թուղթը. յօրինուած պիտի լինի Արիստոտելի Ասորոցութեանց թարգմանութիւնից յետոյ։

Եթէ վերոյիշեալ թղթերը թարգմանուած համարուեն յունարէնից, նրանց թարգմանման ժամանակը դարձեալ զրուելու է յունարան երկրորդ շերտի թարգմանութիւններից յետոյ. ուրեմն վեցերորդ դարի վերջերին կամ աւելի ուշ՝ ⁸ Ասորոցութիւնը, յունարան բառը, որ հանդիպում է քերգողահօր թղթում, շեմ կարծում, որ գոյութիւն ունենար Արիստոտելի Ասորոցութեանց թարգմանութիւնից՝ 576 թուից առաջ։ Բացի այդ՝ նոյն թղթերում գործ են

ածուած վերեւ յիշուած այն բառերն նախա-
զրութիւնները, որոնք, ինչպէս տեսանք (§ 40 դ
եւ գ., § 42 դ., ², § 53 եւն), կազմուած պիտի-
լինեն յաւաբան թարգմանութիւնների երկրորդ
շրջանում։ ինչպէս օրինակ՝ աններհական, էջ 23,
3, տարբերութիւն 24, 6, 30, 22, 35, 21, գո-
խարկի 38, « Նմէ լեզուական այս դիտողա-
թիւններին աւելացնենք նաև այն, որ այս
թղթերում, ինչպէս վերեւ ասուց, Հանդի-
պում են յաճախ Տիմոֆէոսի Հակաճառու-
թիւն յատուկ բառեր եւ գարձուածներ, կար-
ծում եմ, դժուար չի լինի Համազուել, որ
այս թղթերի յօրինման կամ թարգմանման
terminus ante quem ոռոշիւնու է վեցե-
րորդ դարի վերջին բառորդը։ Թէեւ չունենք
որոշ վկայութիւններ կամ առեւալներ նաև
սրանց terminus post quem ոռոշուելու
համար, բայց նրանց բովանդակութիւնը եւ յու-
նաբան յեզուի հնութեան մի քանի նշանները
հիմք են տալիս ինձ ենթազրելու, որ այս
թղթերի ժամանակը դժուար թէ կարելի լինի
առնել մինչեւ ութերորդ դարը, այլ նրանց
մօտաւոր ժամանակը հաւանական է ընդունել
կամ վեցերորդ կամ ամենաուշը՝ եօթերորդ
դարի սկիզբներում։

S U B S C R I P T I O N

ԷՇՄԻԾԺՆԻ ՄԵՑԵՆԵԳԵՐԵՆԻ ԻՄՌՈՑԱ-
ՍԻՐԵԿԵՆ ՀՆԵԳՈՑՆ ԶԵՌԵԳԻԲՆԵՐԸ

Թ. 1890, և կմ. Մաս. = Մայր Յուցակ,
թ. 1848:

Խռովթք՝ 123: — Մեծութիւն՝ 12,5 ×
8,5 սմ.: — Տողք՝ 19—20: — Նիւթ՝ ողորկ
հաստ թուղթ: — Գիր՝ բոլորդիր: — Կազմ՝
կաշեպատ տախտակ, կազմի վրայ կապիչ-
ների հետքեր: — Հանգամանք՝ թուղթը խո-
հաւութիւնից մնասուած. սկիզբէն մի քանի
թերթ պակաս է եղել, թերի մասը յետոյ
լրացրած բարակ թերթերի վրայ բոլոր գրով
(թ. 2 և 3): — Թուական՝ ԱՊԲ = 1243: —
Դրիչ՝ Յովհաննէս քահանայ: — Ստացող՝
Պետրոս՝ սոլասաւոր սուրբ Նշանի Հաղբա-
տայ: — Տեղ՝ «ընդ հովանեաւ սուրբ Նշա-
նիս Հաղբատայ»:

Բովանդաւթիւն.

1. Դաւթի Փիլիսոփայի Ներդինացոյ
սուաջարանուի անմեց խմաստանիրուեն (էջ
2 ար—119 թ., պրակք Ա—ԻՊ):

էջ 119 թ վերջք. Արդ այսոցիկ այսովէս
ելոց շնորհեաց ԱՃ զիմաստանիրութի վե-

զարդարելու դմարդկաբնս հողի : Այդ զգիստ-
կան զաւրութիս զարդարէ ի ձեռն տևականին
իսկ զկենդանականն ի ձեռն զործականին
որովէս զի մի զաւա զբառութի ի կարծեաց
ընկալցուք և մի չար ինչ զործեացուք :

Ընդ այսոսիկ և առաջիկա բանք իմաս-
տասիրութեւ :

Դաւթի մեծի և անյաղի փիլիսոփայի
ընդդէմ առարկութեցն չօրից Պիհուանի իմաս-
տակի և առհմանք և արամատութիք իմաս-
տասիրութեւ :

Հնագոյն այս ձեռագրում՝ թէ զլուխ-
ների բաժանումը և թէ ընտղիրը տեղ տեղ
տարրեր ևն 1833 թուին Վենետիկում Հրա-
տարակածից :

2. էջ 119 ր—121 ա . Ամենայն շար տան-
չելիք . ոչ ոք առնջեալ անազական . . .

Վերջ . Եւ ընդ բամբասանաւք է ստու-
նա սպաս ուրեմն ոչ է անեղ :

Այս զծածք Հանդիսադիր իմրի յառաջա-
զոյն տառից արամախուհ իմաստատէր մա-
կացու արանց ի Դաւթէ ևսամեծէ ևնթա-
ղրեցաւ :

Յիշառակազրութիւնն .

1. էջ 48 ր ներքեւի լուսանցքի վրայ նոյն
զբէլ .

Զածաշնորհ և զպատուական վարդա-
պեան Պետրոս յիշեցէք յաղաւթո ընդ . . . :

2. էջ 121 ո—122 ր ձեռադրի դլինաւոր յիշատակարան նոյն դրչէ.

Փառք ամենասր երբորդութիւն Հաւը և Որդոյ և Հոգւոյն որրոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

ԶԱԿԱՅԱՆԱԳ զգիրս զոր արարեալ է մեծ փիլիսոփայն Դաւիթ ընդդէմ հակառակաղացն որք կամեցան բանալ զիմաստասիրութիւն Ակադիմեանցն Պիհուռնի և Ճեմականացն խաղաղացոյց դնուա ի խովվալիննէն և առաց եթէ զոյ իմաստասիրութիւն է և ճշմարիտ է և պաւրինակո առ մեղ հաւատեաց Հայաստանեայո:

Որոյ ևս ձեր ոմն Պետրոս սպասաւոր սր Նշանիւ Հաղբատայ բաղմանաւք սիրոյ ևսու զրել Յոհաննիսի կրաւնաւոր քահանաի իմով արգեամբք առ ի յուսումն մակացողաց :

Արդ որք աւզաիք ի սմանէ յիշեցէք ի սրբամասոյց յաղաւթս ձեր զիս զմեղաւորս Պետրոս ևս Ած զձեզ յիշեսցէ ի բարի ևս ի կառարման սորա ասացէք զերանի ում թողութիւ եղեւ մեղաց ևս զՔս որդի Այ:

Գրեցաւ զիրքս ընդ հովանեաւ սր Նշանիւ Հաղբատայ, ի թուիս ՈՂԲ ևս աւանդեցաւ ամա, մի ոք իշխեսցէ հանել զատ աստի:

Կաղմեցաւ ևս ձեռամբ իմով Պետրոսի:

Թ. 1943, և Եղմ. Մաս. — Մայր Յուցակ,
թ. 1901:

Թուղթք՝ 251: — Գրաւթիւն՝ 13×8
սմ.: — Տողք՝ 21: — Նիւբ՝ ողորկ Հաստ
թուղթ: — Գիր՝ բուրրգիր. վերնազրերն ու
սկզբնաւառերը կարմիր թանաքով: — Լու-
սանցազարդք՝ էջ 1 ա' խորան ու զարդա-
նկար, էջ 141 ա' զարդանկար: — Կազմ՝ կա-
շելուս տախտակ. կապիչներից մնացել են
միայն հետքեր կազմի վրայ: — Մազազա-
թեայ ոլոհուանակ՝ սկիզբէն եւ վերջէն երկ-
երկու թերթ. մազազաթեայ երկաթազիր
Աւետարանի մնացորդ: — Հանդամանք՝ լու: —
Թուական՝ ԶԴ — 1255:

Բովանդակութիւն.

1. Էջ 1 ա—139 թ. Ստորոգութիւն Արխո-
տառէլի որ կոչի յունարէն կատիզորիս:

Արխոտառէլի Ստորոգութեանց բնագրի
ամէն մի Հատուածին կամ պրակին Հետե-
ւում է նոյն Հատուածի կամ պրակի մեկնու-
թիւնը «մեկնիչ» վերնազրի տակ:

1833 թուի վենետիկեան հրատարակու-
թեան մէջ Ստորոգութեանց մեկնութեան
սկիզբը պակաս է: Տես էջ 409 ձանօթու-
թիւն՝ «Ձկիսամանեայ մնացուած մեկնու-
թեան Ստորոգութեան Արխոտառէլի ի միոյ եւելլ
թերակատար օրինակէ, որ առձեւն զտու:

յարեմք աստանօր կարօտք անթերի օրինակաց»։ Առյն հնագոյն անթերի օրինակում վենետիկի տպագիր հրատարակութեան բաց թողած մասը կազմում է էջ 1 ա—89 ա։

Մկիզր էջ 1 ա. Հոմանունք ասին՝ «բաց անուանք միայն հասարակ, իսկ բատ անուանն բան դոյցութեանն այլ. որդան՝ կենդանի՝ մարդն եւ դրեալն։ Քանդի սոցա անուն միայն հասարակ, իսկ բատ անուանն բան դոյցութեանն այլ։ Քանդի Եթէ բացառեացէ ոք՝ զինչ է նոցա իւրաքանչիւր ուրուք կենդանին դոլ, յատուկ իւրաքանչիւր ումեց բան բացառեացէ։ — Մեկնիչ։

Հոմանունութիւն լինի բատ երկուս յեղանակն՝ բատ պատահման կամ մտածութեան. մտածութիւնն բատ պատառ, բատ յեղինակի, բատ յուսոյ, բատ աղութից, բատ կերպարանի, բատ նմանութեան. իսկ միայն իրրեւ զարեղակն միանձն. կամ բատ լծորդին պակասութեան որպէս միաձործ կամ որպէս նահատակ։

Վերջ՝ էջ 139 ր. Եւ այսուիկ եղիցի զյուլովից եւ զարբերեցելոց ի միմեանց տեսակաց ստորագեալ սէնելս. որպէս զի եղիցի սև՝ ընդունելով զահման սեռի. քանդի էր սահման սեռին որպէս ասացաւ. զյուլովիցն եւ զարբերեցելոց տեսակաւ ի ներում զինչին ստորովեալ։

Կատարեցաւ դիրք Ստորովութեանցն սացեալ եռամեծին Արխտուտէլի հաւատա-

րիմ վարդապետի և ուղղափառ իժոստաս-
սիրի, զոր ժցուն մատամբ զրեցի:

2. էջ 141 ա—251 ա. «Յաղակս մեկնու-
թեան», որ էուցի Պերիարմէնիաս, ասացեալ
Արիստոտէլի:

Այս վերնադրի վրայ նօսք զրով և ու-
րիշ թանաքով դրուած կայ մի այլ վերնա-
դիր, որը սավորական է նորադոյն ժամա-
նակների օրինակներում.

Ակիզրն և նախադասութի (°) զրոցն որ
ասի բատ յունաց Պերիարմէնիաս և Հայե-
րէն՝ յզդու մեկնուեն: Արտադրեալ ի մեծ ի-
մաստնոյն Արիստոտէլէ, թարգմանեալ և
մեկնեալ ի Դաւթայ ներդինացւոյ:

Ակիզր էջ 1հւա. Նախ արժան է զնել,
զի՞նչ է անուն և զի՞նչ բայ, ապա զի՞նչ է
բացասութիւն, և ստորասութիւն, և բացե-
րեւութիւն, և բան:

Ճառեցաւ մեղ երբեմն, եթէ է ամենայն
բանական իրողութեան այսորիկ ակնեկտու-
թիւն առ ապացուցական շարարանութիւնն
հասանել. այլ վս զի բազում պատրանք ըն
շարարանութիւնն լինի, Հարկաւոր է զիւ-
րաքանչիւր ոք նոցա զիսել:

«Յաղակս մեկնութեան» բնադրի ամէն
մի պրակին Հետեւում է նոյն պրակի մեկ-
նութիւնը:

«Անեսելի տոլազիր Հրատարակութեան
մէջ պակաս է 15 դլուխ: Տես էջ 512 ծանօ-
թութիւն. «Յօրինակին պակասն թուղթք

քսան և երեք: Անթերի այս ձեռագրում
վեճետկեան տպագրի բաց թուղած մասը
բանում է էջ 165 ա—205 թ:

Յիշատակագրութիւն:

1. Էջ 251 ա ձեռագրին վերջում յիշա-
տակարան նոյն դրչէ.

Փառք որ Երրորդութեան կտուարե-
լոյ և միոյ. ԶԴ դրեցաւ ի թուականիս:

2. Հետեւեալ դատարկ երեսի վրայ նոտր
զրով այլ դրչէ.

Ի վայելումն Մելքիսէդ վղողին ի դառն և
ի նեղ ժմի Բելին:

Կնիք՝ Քի Նո Գրիգոր վրդուա ՈՒՄԼԳ:

Ի վայելումն Ղազար վրդողին և ի յիշա-
տակ խմոյ անձին ի ՅՄԿԶ թուին և
յնովիք ԺԵ-ին ի Կարին:

Թ. 1889, 15 հջմ. Մատեն. — Պայր Ցուցակ,
թ. 1847:

Թուղթք՝ 345: — Գրութիւն՝ 14×10
մմ.: — Տողք՝ 25: — Նիւթ՝ ողորկ Հաստ
թուղթ: — Գիր՝ բալորդիր. լուսանցքների
վրայ մեկնաւթիւններ նոտր զրով. նորո-
գուած թերթերը 73 և 74 նոյնութէս նոտր
զրով: Վերնագրերը, սկզբնատողերն ու սկզ-
բնատառերը կարմիր թանաքով: — Լուսան-
ցագարդք՝ խորաններն էջ 1 ա, 75 ա, 181 ա
խունացած: — Կաղմ՝ կաշենատ տախտակ

առանց կասպիշների : — Մազաղաթեայ պահպանակ՝ սկիզբէն եւ վերջէն մէկ մէկ թերթ . Մամբրէ վերծանողի ճառից ի մէծի առուր գալստեան տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի յերուսաղէմ : — Հանգամանք՝ աեղ տեղ դրերն աւրուած . 73 և 74 թերթերը կցուած են ձեռադրին 1410 թուականին . նորոգուած թերթերի վրայ Յակոբ Դրիմեցու ձեռքով գրուած են Ներսէս Շնորհալու «Ամենայն չար տանջելի» հատուածի մեկնութեան թերի մտսերը : — Թուական՝ Զիե = 1276 : — Դրիչ՝ Ստեփաննոս քահանայ :

Բոլյանդակուրիւն .

1. Դաւթի Փիլիպոսիա Ներդինացոյ , Յուսուջարտնք Մահմանաց իմաստասիրութեան (Էջ 1 ա—65 ա , պրակք Ա-ԻԱ) :

Սկիզբն է (Էջ 1 ա) . Արք միանդամ իմաստասիրութեան տենչան բանից և առ ի նմանէն [հեշտ]ութեանց ծայրիւ միայն մատին հանգիստին ճաշակեալք , ամենայն կենցաղական հող [ոց] բարեւու մնալ ասացեալք , ողջախոնչ իմն [մոլու]թեամբ առ այսոսիկ վարեալք բերին :

Վերջ (Էջ 65 ա) . Արդ զգիտական զաւրութիսն զարդարէ ի ձեռն տևսականին , իսկ զկենդանականն ի ձեռն զործականին , որպէս զի զուտ զիտութիւն ի կարեաց ընկայցուք , զի մի չար ինչ զործեացուք :

Բնդ այսոսիկ եւ առաջարանք խմաստասիրութեան : Դաւթի մեծի եւ անյաղթ փիլմատիայի ընդդէմ առարկութեանցն չորից Պիւռհօնի խմաստակի եւ սահմանք եւ արամաստիւնք խմաստասիրութեան :

2. Էջ 65 ա—65 բ . Ամենայն չար տանջելի , ոչ ոք տանջեալ անսպական , ոչ ոք սպականացու անեղ . է չար սպականացու . չար ուրեմն ոչ է անեղ եւն : Վերջ (65 բ) . Եւ ընդ բամբասանաւք է սատանայ , ապա ուրեմն՝ ոչ է անեղ :

Այս զծածք հանդիսադիր խմբոց առաջնոցն տառից արամախոհ խմաստասկը մակացու արանց ներբողեալ ի Դաւթէ Եռամեծէ ևնթաղրեցաւ :

3. Էջ 65 բ—74 բ . Մեկնութիւն բանից Դաւթի փիլիսոփայի , որ է ի կատարումն նորին տառի որ վերին սահմանացն խմաստիւն , սսացեալ ներսէսի Եղբայր կաթ . Հայոց Գրիգորիսի ուրումն՝ սիրողի խմաստիւն :

Սկիզբ (Էջ 65 բ) . Զինդիր հոգեւորական հաւասարվ եւ սիրով հայցողաց պարա է տալ յաւժարութեամբ բայտ հրամանին Տն՝ թէ որ խնդրէ ի քէն տուր : Վերջ (Էջ 74 բ) . Այլ մեք զի ունիմք զայսորիկ շնորհեալ յԱյ զերադոյն քան զանմարմնոցն յանել ի մեռելուհնէ Հոգոց խոստովանուր և սպաշխարուր եւ Քի Այ յուսոյն մերոյ և երկրպագւի յաւիտեանս ամէն :

4. 75 ա—89 ա. — Ներածութիւն Պոր-
փիւրի իմաստամիրի:

Լուսանցքների վրայ. ծանօթութիւններ
բոլոր զրով բայց այլ զրչէ: Ակիզրն է (էջ
75 ա). Ելոյր Հարկաւորի, Քրիստորիէ, և
յառա Արխոտոտէլի Ստորոգութեցն վարդա-
պետեւթի, դիտել՝ զի՞նչ ուռ ևւ զի՞նչ տար-
քերութի, զի՞նչ տեսակ, զի՞նչ յատուկ ևւ
զի՞նչ պատահումն ևւ ի սահմանացն բացա-
արութի....

Վերջ (էջ 89 ա). բայց են ևւ այլք հս-
տարակութիք ևւ յատկութիք ասացելոցն.
այլ չատ են ևւ սոքայ ի մեկնութի նոցայ ևւ
ի հստարակութե յանդիմակացութի:

5. Էջ 98 ա—157 ր. Դաւթի վիլիստափակ Ներ-
գինեցոյ, Վերլուծթի ի Ներածութի Պորփիւ-
րի (պրակք ա—իթ + Յաղաղո Հանրականաց
սեսից ևւ տարրերութց):

Լուսանցքների վրայ նօար զրով մեկ-
նութիւններ ևւ նկատողութիւններ:

Ակիզրն է (էջ 89 ա). Հանդերձեալք
հանդերձ Ավ սկիզբն առնել առաջիկայ շա-
րադրութես, զսովորականն պատմողաց
ինդրել զզլուխո ը զոլ թուով խնդրեսցուք:

Վերջ (էջ 157 ր). Եթէ յատուկն հակա-
դարձի տեսակի, իսկ պատահումն ոչ երբեք:

6. Էջ 158 ր—175 ր. Արխոտոտէլի իմաս-
տամիրի թուղթ առ Աղէքսանդրոս թղթ,
Պատմութիւն յաղաղո աշխարհի:

Ակիզրն է (էջ 158 ր). Իսկ բաղաւմ ան-

դամ ինձ ածային ինչ եւ բարերախտեալ
ճշմարտապէս իր, ո՞վ Աղէքսանդրէ, զու
թուեցաւ իմաստասիրութիւն։ Վերջ (էջ
175 թ)։ Սակա իրաւացն պակասելոյ՝ յԱյ
ոգաստուհասին, նոյնապէս եւ որ Հանդերձեալն
է բարերաստիկ լինել եւ երանելի՝ ի նմանէ
ընդունի զշնորհ։

7. Էջ 175 թ. Սասպիրացի էր Արիս ի
թիւրակայ ի Քաղկիթ զաւառէ մերձ ի
Յաւշինթոս, որդի Հաւր Նիկոմաքոսի եւ
մաւրն Պերիսպիադայ¹։ Եւ ամբառնա ուզգ
նորա ի Հաւրէ եւ ի մաւրէ յԱսկղեպիայ։
Քսան ամս աշակերտեալ Պղասոնի բառ
սրում թէ դէպ ուրեք լինէր չդալ նմա ի
լսարանն՝ զայսպիսիս ազագակ[էր] բանս
Պղասոն։ Միան շնկն այսոր, ի բացեայ է սի-
րոդն ճմարտութեն, խուլ է լսարանս։ Վաղ-
ձանի ի Քաղկիթ ամաց կ եւ եից առաս-
պելարանի եթէ յուսկերս նորայ զառա պարս
մեղուաց։ Հանեալ զոսկերս նորա Սասպի-
րացւացն ի Քաղկիթայ՝ տարան թաղեցին ի
տեղւոջն Արիսաստէլիկասի։

Շարունակութիւնը էջ 18^o թ. Սայ սկիզբն
աշխարհէ՝ տեսակ, նիւթ, պակասութի,
տարերք դ եւ ե երրորդ արփի։ Պղասոն ասէ՝
աշխարհս է յերկնէ եւ յերկրէ եւ որ ի նոստ
ընութիք բաղկացեալ, ի Հրոյ եւ յերկրէ,
յաւզոյ եւ ի ջրոյ եւ յասծոց եւ ի պիւաց եւ

¹ Առաջնային մաս Փեռիսդիակայ։

ի մարդկանէ եւ ի կենդանեաց եւ ի տնկոց
եւ ի նիւթոյ։ Մավաէս մարդարէ՝ դանդունդու
եւ զխաւար եւ զջուր դու սկիզբն աշխարհի։
Պիթաղորաս Մնեարքայ որդին՝ զթիւս եւ
զչափարերութիս եւ զյարժարութիս։ Յազա-
դրո մարդասիրութե ասաց Հոմերոս։ Ածքն
աւտարաց նմանեալ այլաքաղաքացեաց չըր-
ջին ի մէջ մրդկն տեսանել զմդկան զրարի եւ
զչար եւ յանկանել զաշխարհիս զործն։

Պիթազոր ասաց։ իցէ՞ արդեսուք սիրե-
լոյ այլ ոք ես (՞), քան թէ ինքն։

Տ. էջ 176 ա.—180 ր. Արիստոտէլի Յա-
զագու առաքինութեց առ Ազեկս թզ։

Ակիզրն է (էջ 176 ա). Գովելիի են գեղե-
ցիկքն եւ պարսաւելիի զարշելիքն . քանոյի
բարեացն յառաջնեալ յինին առաքինութիքն
եւ զարշելեացն շարութիքն։

Վերջ (էջ 180 ր)։ իսկ ընթհանուր չա-
րութեան զործ եւ յառուկ եւ հետեւութի՝
ա ասացելոցդ ներհակքն՝ որք են ի պարսու-
ելեացն։

Էջ 180 ր եւ 181 ա — ներքեւի լուսանցք-
ների վրայ. Ստորովութիք-կատալորիսուն։
Յազագու մնկնութեան — ի պեսի էռմէնիաս։
Վերլուծական — անալաւտիկի։ Ապացուցու-
կան — ապաւդիկափիկի։ Շարարանութի —
ոխալեկափիկի։ Ստորասութի — կասաֆուտ-
սիս։ Բացասութի — ապաթասիս։ Բացերե-
ւական — ապաթանուկ։

9. էջ 181 ար—275 թ. Ստորթիւնք Արխայ, որ կոչի յաւնաբէն կատիլօխա:

Անթերի օրինակ Արխատոտէլի Ստորոշութեանցն մեկնութեան: Լուսանցքների վրայ բացատրութիւններ նուր զրով:

Ակիզրն է (էջ 181 ա). Համանունութիւնի ըստ յերկուս յեղանակս՝ ըստ պատուոյ, ըստ յեղանակի, ըստ յուսոյ, ըստ աղաւթից, ըստ կերպարանի, ըստ նմանութե եւն:

Վերջ (էջ 275 թ). Քանդի էր սահման սեռին, որպէս ասացաւ զյոլովից և զարբերեցելոց տեսակաւ ի ներում զինչէն ստորոգեալ:

10. էջ 276 ա—344 թ. Ակիզրն և նախազրութիւն զրցն որ տի ըստ Յունաց՝ Պերիարմէնիսս և Հայերէն՝ Յաղաղս մեկնութե: Արտադրեալ ի մեծ Հելենացոց իմաստասիրէն Արխատոտէլէ, թարթանեալ և մեկնեալ ի Դաւթէ Փիլիսոփայէ Ներզինաց:

Զեռազիրս պարունակում է նաև 1833 թուի Վենետիկի տպագիր Հրատարակութեան մէջ բաց թողած մտութը: Լուսանցքների վրայ բացատրութիւններ նուր զրով և այլ զրէն:

Ակիզրն է մեկնութեան (էջ 276 ա). Ճառուեցաւ մեզ երբեմն, եթէ է առ բանական իրաւութես այսորիկ ակնկալութիւն առ պացուցական շարարանութիւնն հասանել: Վերջ (էջ 344 թ). Քնզի առքեք սովորեաց

իմաստասէրու յաղաղու պիտանացուին զի-
տութիւ սերմանել իւրոց լսողացն :

11. կջ 345 ա—ր. Աղիւսուկ անկիւնաւոր
թուերի :

Յիշատակազրուրիւմ .

1. կջ 88 ա., 175 ր., 188 ր., 190 ա., 260 ա.,
332 ա նոյն դրչէ .

88 ա. զատ զծ յիշ [= զՄտեփանոս զծոց
յիշեցէք] :

175 ր., 260 ա. զզծ ստ յիշ [= զզծող
Մտեփանոս յիշեցէք] :

188 ր. զատ դր յիշ [= զՄտեփանոս դրի;
յիշեցէք] :

190 ա. զծտու ստ յիշ [= զծտոայ Մտե-
փանոս յիշեցէք] :

332. զզծ ստ յիշ ի ար [= զզծող Մտե-
փանոս յիշեցէք ի Տէր] :

2. Ներսէս Շնորհալու «Ամենայն շար
տանջելի» հաստածի մեկնութեան վերջում,
նորոգուած 74 ր թրթի վրայ, նոտր դրով
տարրեր դրչէ .

Զմեղուցլ Յակոբ վղոպսս Ղրիմեցի աղա-
շեմ յիշել ի Տէր, ի թվիս ՊՄԲ [= 1410] :

3. կջ 157 ր., Պորտիւրի Ներածութեան
մեկնութեան վերջում, Մտեփանոս դրչէ .

Փառք ամենաօպաւը էին Այ որ ևտ զօրու-
թի յանդ հանել զատ :

4. Ներքեւում նոյն էջի վրայ Մտեփանոս
դրչէ . Բնակուն կարգն արտաքին դրենացն

այս է . նախ Քերականն եւ ապա՝ Ասհմանքն եւ Ամ չար տանջելին , ապա՝ Պորփիւրն եւ զինի՝ Ստորոգութիքն եւ ապա՝ Պերփարմէնիան եւ ապա՝ Աշխարհացն եւ զինի՝ Առաքինութեցն : Իսկ աստ որ զհետ Պորփիւրիս Աշխարհացս է եւ Առաքինութեցս կամ ի տղիառութենէ է կամ յաւրինակէն եւ կամ յերկուցն :

5. Էջ 175 թ , «Ստորփիրացէ էր եւնը համառածից յետոյ , նոյն դրչէ .

Զմոլորեալս յամենայնի եւ զանպիտանորնաւից յերեսս անկեալ աղաշեմ յիշել ի մաքուր յաղաւթս ձեր եւ . . .

6. Էջ 275 թ — 276 ա , ներքեւի լուսանցքների վրայ , նոյն դրչէ .

Յայտմաւուր զփախուստ առեալ Դազակրկիրս Կիլիկեցոց յանաւրէն բանակալէն Բամաէլաց , թւ ի Զիւ :

7. Էջ 275 թ , Ստորոգութեանց մեկնութեան վերջում , նոյն դրչէ՝ ԶԱՄԵՎ . . . զ. ին որ կորսուի դհայրենին ո . . . քի նոյն վասու . . . ին հայցեմ ժոել թաղծեալս անծին . . . մաքրել զմեղաց (ա)սին դառնալ յեղեմ մեզ վերստին . . . բնող ձեզ իր . . . ակ անձին զփառս յանվախճան յաւխտեան . թւ Զիւ :

Գրերը անդ անդ աւրուած . խռչորացոյցի օգնութեամբ անզամ շյաջողուեց ինձ վերականգնել բնադիրը :

8. Էջ 322 ա , ներքեւի լուսանցքի վրայ , նոտր դրով օսար դրչէ . Ո՞վ եղբայր , աստից

ի Հետ բանքս նուրբ են և տեսութիւն
զժուարք եւ խրթինք. ի լուսանց դրացս ոչ
կարացի զրել լուծումն. դու յաւ հաւկացո-
զութիւն կարդա :

Լուսանցքների վրայ ծանօթութիւններն
ու մեկնութիւնները գրաւած են նոյն դրչէ :

9. իջ 344 ր, Ազու չըրդում, Առեփանսս պրչէ .

Աւրհնեալ է Քս լոյսն հայրական եւ վա-
ռաւորեալ է որ վարուաս նորայ որ իւրով
զալսաւեամբ երաց մեզ դուռն կենաց եւ ա-
ռաջնորդեաց մեզ քաղցրուացյ վդթր իւրով
զնանապարհն փրկութե ոգոց մերոց որ թէ-
պէտ քրտամբք եւ վաստակաւք հրամակաց
Տըն մեր մեզ ջանալ յայսմ աշխարհի, այլ
վս առաւել վառացն է այն եւ ի պսակացն
է զի ի մարմնեղէն եւ ի ծովածութ հոգոց
վերացուացէ զմիտս մեր. մի՛ ևս ըեւենել ի
սայ եւ մի՛ ի սէր սորայ եւ մի՛ յուսումն սո-
րայ մա... կենս ինքն լինելով մեզ աւրինակ
բարի յամենայնի զի (°) :

11. իջ 345 ր, ձեռագրի վերջում, նոյն
դրչէ զիխուոր յիշատակարան. Յիշատակա-
րան գրաց. Մշտապայծառ եւաջահեան հա-
մարնութե եւ եղական լոյսոյն անսկիզբն եւ
անկատարած զերաբնարար բարոյն, այնմ
որ ի բնաւից եղելութե առ յինքենէ յանմար-
մին իմանալեաց հոգեղինացն եւ նիւթական
մահկանացու հողեղինաց միշտ եւ յարաժամ
նորա աւրհնութիւն վերառաքի վառք եւ ուս-

արև. և դոհութիւն և երկրագաղութիւն այժմ
էւ...:

Արդ ևս սուսանուն քն ըստ մանեկա-
կան անհաստատ յածման խորհրդոց ըմբռ-
նեցա ի սէր այսմ անպէտ ևս պիտանի զրոց։
Ազա թէ ըստ անսութեց իւրոց անաւզուս
թիւ այլ յածայիննս աւզաւակար։ Այլ աղա-
ցիմ զձեզ որ Հարք ևս եղբարք, որք աւզուէք
ինչ ի սմանէ կարդալով կ յաւրինակ՝ մի՛
ի զերեւ Համարել բազում աշխատութս իմ
ի սմայ։ Այլ ըստ ընդարոյս բարի բարուց
ձերոց յիշասակի առնել արժանի զրիւր պար-
տուց պարտականս տէրունի։

Դրքի վերջում¹⁾

- Եջ ա. 1. [մի] ւսովին կանգնեսցին։ Եւ որք
ի հար։
2. [աս]ոց ցրացեալք՝ զայս եր-
կուս աւան։
3. [զ]ութիւնս մտաւք վերաբեկո-
ցին, եթէ

1) Հմայ. Առաջընկի վերեանոցի նասք, Անձեռիկ
1894. ի մեջի առաք զարդարան Ցեսար մերոց Շինուան
Քրիստոնի յերուացքմ. Եֆ 61. "Եւ զարձեալ Եթէ միավո
զայլ անքանացի ոք, մի առջն կանցնեացի։ Եւ ի համարաց
ցրացեալքն զայս երկուս ու անցութիւն մուգ վերաբեկոցն, եւ առաւ անցոյն ցիսնան սիրով։ Եսկ յաշա-
կեաւանն երկուս, մասն զի բազում ու ներօք Շինուան զա-
շակերտան, զմերին ու թաշակեանց երկնաքան մար զպար-
ուն։ զոր մեծն պատզոս յառագուէ։ Հոեցանիք. Հոեցանա-
կապեար, ամի ուք, անբանիքինք, պետանթինք, իշխա-
նանթինք, սերավրեք, քերառվեք։

4. [ա] ծեղէն սիրովն ջեռնուն :
 5. [ի] ոկ աշակերտացն երկուս ,
զամեն զի
 6. [բ] ազում ունելով Յի պաշակերտ-
որն , զվերին
 7. [ա] չտիճանեան երկնադռնուպար
պարսն :
 8. զոր մէծն Պատղաս չարսպատէ .
հրեշտակը
 9. Եւ հրեշտակապետք , աթոռք և
արութիւնք
 10. պիտութիւնք և իշխանութիւնք ,
ուն
 11. բայրուէք և քերովրէք :

ԷՀ Բ.՝ 1. Եից ի սրովքեական ի կառու։
 2. Զորձն իմանուլի է զմաքուր վար-
 դասլ [ևտ]
 3. աթիւնու առաքելոցն. զի անդ ի
 սրու [պը]
 4. եական սրբարանութիւնն նատի
 ե [ւ.]

5. Հանգչի, իսկ աստ յառաքելական
քար[ոզ]
6. ութեան նստի և բազում հրաշ
կաստ[րէ],
7. և զերասանակ վարդապետու-
թեան ու[զզէ]
8. յերկին երկնից տիրապէս:
9. Արդ հասարակարար նստի միա-
ծին
10. յերկին ի վերայ քերովքեից, և
ի յերկ:

Թ. 1884, Տ Եջմ. մատեն. — Մայլը Ցուցակ,
թ. 184.:

Թուղթ՝ 116: — Գրութիւն՝ 13 × 8,5
մմ.: — Տողք՝ 19—24: — Նիւթ՝ ողորկ
հաստ թուղթ: — Գիր՝ հին բոլորդիր վեր-
նապրերն ու սկզբնատողերը կարմիր թանօ-
քով: — Լուսանցազարդք՝ լուսանցազատ-
կերներ սկզբնատուերին կից: — Կազմ՝ կա-
շեպատ տախտակ: — Հանգամանք՝ ձե-
ռապիրս խիստ մնասուած է եղիլ. ԺՌ դա-
րում նորոգած թերթեր 1—6 և 13—19,
որոնց վրայ Մեսրոպ սարկաւազը լրացրել
է ձեռագրիս թերակատար մասերը: Ակիզրէն
և վերջէն զատարկ թերթեր: — Նորոգման
թուականը՝ թվ 27—1733: — Նորոգման
ուղղ՝ կջմիածին: — Գրիչ՝ Յովհաննէս: —

Սասպաւլ՝ Ստեփաննոս քահանայ : — Թում-
կան՝ չունի , ըստ երեսոյթին՝ ԺԴ—ԺԵ դար :

Բովանդակութիւն .

1. Հին Զուղայեցի Ստեփաննոս վրդպահ
յաշակերաչն առ Դաւիթ անյազթ Փիլիսո-
փայն Հայոց (տաղ) : Զեռագրի սկզբում -
էջերը չեն դրուած :

Սկիզբն է . Ի յարժատոց բոխեալ ու չէղ
զեղազարդ .

Հարանց մեծաց և երջանկաց մարրա-
զարդ :

ՎԵՐՅ.

Մուրր երջանիկ Հայրդ աղաչեմք բարձրա-
ձայն :

Բարեխաւուևա՛ս մարմնացեալ մեծ որքայն ,
Յորժոմ հրնչէ փողն ահապին մեծածայն ,
Դասել բամեղ ուղղափառացն ամենայն :

2. Էջ 1 ա—109 ր . Դաւիթի Փիլիսոփայի
Ներքինացւոյ , Յաղագո սահմանց [պրակք
Ո—ՌԱ] :

Լուսանցքների վրայ մեկնութիւններ
յետնազոյն ժամանակի : Սկիզբն է (Էջ 1ա) .
Որք միանգամ իմաստրւթեան տենչան բա-
նից՝ առ ի նմանէն Հեշտութեանց եւն :

ՎԵՐՅ. Արդ՝ զգիտական դաւրութիւնն
զարդարէ ի ձեւն տեսականին , իսկ զկենդա-
նականնն ի ձեւն զործականին , որպէս զի
մի՛ զառւտ զիտութիւն ի կարծեաց բնկալ-
ցուք եւ մի՛ չար ինչ զործեացուք :

Մի տող քերուած եւ ապա՝

Դաւթի մեծի եւ անյաղթ վիրիխոսվայի
ընդդէմ առարկութեանցն չորից Պիհունի
իմաստակի եւ սահմանք եւ արամատութիւ
իմաստասիբութեան :

3. Էջ 109 ր—110 ր. Ամենայն չար տան-
ջելի . ոչ ոք տանջեալ անապակոն . ոչ ոք
ապականացու անեղ . է չարն ապականացու ,
չար ուրեմն ոչ է անեղ եւն :

Վերջ (110ր) . Եւ ընդ բամբասանաւք է
սատանայ . ապա ուրեմն՝ ոչ է անեղ :

Յիշատակազրութիւնն .

1. Էջ 110 ր. Սահմանք իմաստասիբու-
թեան երկի վերջում , Հին բոլորդիր նոյն
գրչէ .

Փառք ամենաար երրորդութեանն որոց
մի և ածութիւնն եւ ընութին յաւիտեանս :

Զաէք Ստվոս զատացաւդ պրոցս մի մո-
ռանայք որք վայելէք եւ արդիւնիք ի սմանէ .
զի զն այլք յօւսոյ էր սատցեալ զսա : Ընդ
նմին եւ զանպիտանս Յոհէս , զի բզում աշ-
խատեցայ ի յուղզութի որ :

2. Էջ 111 ար , ձեռապրի վերջում , նօտր
պրով Մեսրոպ սարկաւագի յիշատակազրու-
թիւնը .

Ես նուտաս եւ անպիտանս ամենայնի ,
Մեսրոպ սուստ անուտամք սարկաւագ , ոք ոչ
առնեն արժանի զիս մեզօք մածեալս աշա-

կերտութիւն այսպիսի խմասաից, այլ ակնկաւութիւնն իմ ոչ եթէ երկաւորիս էր, բայց միայն բանն աէքունեան թէ «Մի կոչէք երկրի ձեզ ուսուցիչ», այլ ուսուցիչն ձեր Քո է» : Քանդի իմ նայելով զայս գիրքս սահմանացն Դաւթի՝ ցըուեալ կայր իրը անպիտան, եւ եռ բազում աշխատանօք իրար ձգեցի եւ պակառն զրեցի սակա վայելման անձին իմոյ:

Արդ՝ ազաշեմ զձեզ, ո՞վ սիրազուն եղբարք իմ, որք Հանդիսիք ամա թէ ընթեռնլով, թէ օրինակելով՝ միոյ Հայր մերոյի վերոյ զրեցեալ զանտոհմս եւ հեզս յիշեցէք. եւ զուք յիշեալ լիջիք ի Քէ կրկնակի զալաւեանն եւ աշխարհական ատեանն, ամէն: Դրեցաւ ԱՇԶԲ թւին Հայոց, ապրիլի ամսոյ ր ի Դրան մէծի վեհարանիս որ էջմիածնի:

Յ. Զեռազրի սկզբում, դատարկ Երեսներից մէկի վրայ ներքեւում, հօտը զրով օտար զրչէ.

Յամի Տն 1761, Հայոց ԱՄՁ, զգիրս զայս ըստացյ ի վայելումն յարեւելցի Դադար անիմաստ վրդպաիս, ամէն: Արքան Հանդիսպիր Եւ ընդեռնուր՝ ասասջիք Տր ոզորմի: Նայելմբերի ժ զրեցաւ, որատրաստական ծառաց եմ ամենից:

թ. 1825, և իշմ. մատեն. — Մայր Յուցակ,
թ. 1782:

Թուղթք՝ 292: — Գրութիւն՝ 14×10
սմ.: — Տողք՝ 26: — Նիւթ՝ Հաստ ողորկ
թուղթ: — Գիր՝ բոլորդիր. վերնազրերն ու
սկզբնասառերը կարմիր թանաքով: —
Լուսանցազարդք՝ էջ 2 ա., 55 ա., 67 ա., 129 ա.,
212 ա., 247 ր., 289 ր խորաններ, լուսանցք-
ների վրայ զարգանկարներ: — Ետղմ՝ կա-
շեպատ տախտակ. կազմի վրայ կառդիչների
հետքեր: — Մազաղաթեայ որոհպանակ՝
սկզբէն ու վերջէն երկ-երկու թերթ: Զե-
ռազրի վերջում մազաղաթեայ թերթերը
պարունակում են երկաթաղիք մի հասուած՝
«Երանելոյն Յովհաննու Ասկերերանի Կոս-
տանդնուազաւսի Եղիսկոպոսի ի Մատթեոսի
ու Հաստրանէն»: — Հանգամանք՝ լու: —
Թուական՝ շանի, ըստ երեւոյթին՝ ԺԴ—
ԺԵ դար: — Տեղ՝ «ընդ Հովհաննեաւ մօրս
լուսոյ Ածածնիս որ կոչի Աւագ անապատ և
որանչելադործ որ Նշանիչ»: — Գրիչ՝ Ստե-
փանոս:

Բոլյանդակուրին:

1. Էջ 1 ա. Դատիթ ազդաւ հայ էր և
Հույսց աշխարհէն և ուսաւ զգիրս Յունաց
և վարժեցաւ. ապա անդ սիրեցաւ ի թա-
զաւորէն իւր ընկերաւոն և առաքեցան
յԱթէնս ի մայրն խմաստութեան և ուսան

զամենայն իմաստասիրութիւնս : Եւ եկին յաշ-
խարհն իւր նա դէտ ի ժամանակս մարդու-
րէիցն յարեան սուս մարդարէքն նմանապէս
ի ժամանակս առաքելոցն սուս առաքեալքն
նուե ի ժամանակս իմաստասիրացն սուս
իմաստունքն յարեան և Հակոբոսկէին ընդ
աշմարիտ իմաստասիրութիւնն : Յորոց և
մի էր Պիհուն որ իւրաեւքն Հակոբոսկէր
և ասէր թէ ոչ է իմաստութիւն : Յաղապս
այսորիկ հանդիսանաւ մեծ իմաստակէքն Դա-
ւիթ և ցուցանէ իմաստասիրական յեղանա-
կաւ թէ է իմաստասիրութիւն և որպէս ա-
մենայն էքս որ էացեալ նն յԱստունոյ թէ
կենդանի թէ անկենդան թէ բանական թէ
անբան ամենեքեան սահման ունեն և առանց
սահմանի ոչ գտանի էութիւն նա ցուցանէ և
իմաստութեանն սահման սովոր յատաջապոյն
զայն կամի ուսուցանել :

2. Էջ 2 ու—54 ո . Առհմանք իմաստա-
սիրութեան (որբակք Ա.—ԻԱ.) :

Վերջ (էջ 54 ո) . Դաւթի ևսամեծի և
անյաղթ միլիստափայի ընդդէմ չորից առար-
կութեցն Պիհունի իմաստակի և սահմանք
և արամատութի իմաստասիրութի մինչեւ
ցայս վայր :

3. Էջ 54 ու—ը . Բնդ այսոսիկ և առա-
ջիկա բան իմաստնոյս : Ամենայն չար առն-
ջելի ոչ ոք տանջեալ անսապտկան . . . :

Վերջ (54 ը) . Եւ ընդ բարբառանաւք է
ստանայ սովոր ուրեմն ոչ է անեղ :

Այս դժանծք հանգիստովիր խմբից առաջ-
նացն տառից արամախուհ խմասատէր մա-
կացու արանց ներբազեալ ի Դոմէ եռամեծէ
ենթաղթեցաւ .

Ապա հետեւեալ ծանօթութիւնը .

ԶՊորիփիւրի նախերդանն ի մեկընչին ի
դ ճառն անս :

4. Էջ 55 ա—66 ր . Ներածութիւնը Պոր-
փիւրի :

5. Էջ 67 ա—128 ա . Դաւթի վիլիսովայի
Ներդինացւոյ, Վերլուծութիւնը Ներածութեանն
Պորփիւրի (ոյրակը Ա—Եթ + Յաղապս Հան-
րականաց սեռից և տարրերութեց . . .) :

6. Էջ 128 ա . — ա . Կատաղօրիստ,
թ . Իովելիամենիաս, զ . Անալօտիկի , դ .
Ազօղիկղիկի , ե . Դիալիֆտիկի . ա . Ստորա-
սութիւն (՝), թ . Յզզու մեկնութե , զ . Վերլու-
ծուկան , դ . Արացուցական , ե . Շարարա-
նութիւն , զ . Կատաֆասիս , է . Ազաւֆտանուէն ,
թ . Ազօֆտախիս , թ . Պրոֆասիս , զ . Ստորա-
սութիւն , է . Բացասութիւն , թ . Բացերեւական ,
թ . Նախաղատութիւն :

7. Էջ 129 ա—211 ր . — Ստորագութիւնը
Արիստոտէլի ժ բան¹ :

Լուսանցքների վրայ ծանօթութիւններ
ու բացատրութիւններ , մեծ մասամբ , տար-
բեր զրչէ :

¹ «Ճ բան» այլ դրակ:

ՎԵՐԾ (էջ 211 ր). — Կատարեցաւ սկսեալո ի մէջնջ գրել ժ ստորովութեան աստցեալ յԵռամենծէն յԱրիստոտելէ որ ասի ըստ յունաբէն ձայնի կատիղօրիաս, թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւթէ Ներպինացւոյ:

8. Էջ 212 ս—274 ս. — Սկիզբն եւ նախադրութիւնըն որ ասի ըստ յունաց Պերիստենիաս եւ Հայերէն Յզդս մեկնութեարտագրեալ ի մեծ իմաստնոյն Արիստոտէլէ եւ թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւթէ:

9. Էջ 274 ր—289 ս. — Արիստոտելի իմաստասիրի թուխթ առ Աղեկանորութագուոր, Պատմութիւն յաղագս աշխարհնի:

10. Էջ 289 ր—292 ս. — Արիստոտէլի, Յաղագս առաքինութեց առ Աղեկանորութագուոր:

Ցիշառակազրութիւնն.

1. Էջ 128 ս. Պորտիւրի Ներածութեան մեկնութեան վերջում, նոյն զրչէ.

Փառք երրեսկ անձին եւ միակ բնութեան յընդհանուր սեռից եւ տեսակաց, ստարնայնց եւ դերակայից, անտեսակին տեսակաց եւ բարձրակատար տեսակին, որ ետ կարողութիւն հասանել յաւարա իմաստափրանեան տառիս այժմ եւ յանհուն յաւիտեան ամէն:

2. Էջ 173 ր, նոյն զրչէ.

Զգծողս յիշեալ:

Յ. կջ 211 թ. Սասրովութեանց մեկնութեան վերջում, նոյն գրչէ .

Որ ոք հանդիպիք սմա ուզ զիարդ եւ իցէ թողութիւն մեզաց եւ ոզորմութիւն ի Քէ Հայցեցէք աւրինակիւ տւողին եւ զրողին եւ ակար գրչի մեղապարտի Ստեփի եւ բուն թարգմանողի սորաւ եւ մեկնողի եւ առաստանուրն ովարդեւաց Քո լի սրախ յիշողացդ եւ յիշելոցս ոզորմեացի եւ որ ամէն ասէ եւ Քի Այժերոյ վասք ընդ Հօր եւ որ Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից ամէն :

4. կջ 274 ա—ր. Պերօն քրմանութեան վերջում, նոյն գրչէ .

Խիստ նեղացա՞ աղաչեմ շմեղագրել լուն ու ճահճն լափէ :

5. կջ 292 ա—ր, ձեռագրի վերջում, զիստառը յիշատակարան նոյն գրչէ .

Փառք ամենասր Երրորդութեն Հաւը եւ Արդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ : Փառք Հաւըն անեղի, անհասի, անբաւի եւ էացուցչի ամիւ : Փառք սրդւոյ ծնելոյ եւ երեւոյ (°) եւ ընդիւր յարուցանելոյ զիւրայինսն ա : Փառք եւ պատիւ ելողի եւ աղատաբար, աննիազ, անուշարուրիչ որ Հոգւոյն : Փառք երեքերեւան երրորդական Ածութեն եւ անբաժանելի միւթեն այժմ եւ միշտ զի յորմէ եւ նովաւ եւ ի նոյն ու նմա վասք յաւիտ . ամէն :

Արդ ես մեղաւոր հոգս վծուն զրիչ Ստեփիւ . սու սոս ձեր անկեսալ աղաչեմ որք

Հանդիսպիք սմա թողութիւ արտարէք ինձ զի սպալանացո որ ի սմա զի այսշափէ էր կար մեր : Բայց զրեցի զստ յիշատակ ինձ եւ ծնուց իմոց եւ ա զարմից ի լաւ եւ յընտիր աւրինակէ :

Արդ որք աւզուեալ ի սմանէ շահեսցին յիշատակեսցն առաջի գենլոյն Քի... Եւ զրաբունապեան Դրիգոր որ զաւրինակն շնորհեաց Եւ զամբարեալ խմասութիւ մտաց իւրոց քաղցրութիւ Եւ հեղաւրէն արրուցանէ սպասաւրացն բանի զոր տացէ նմա Աստուած զարիստուր ժախարինին նա եւ բգնէսրդ վանական քննայ որ զօրինակն վզնիւր հոյն^(*) երեա . յիշեսջիք եւ զկուսուերան քնն Հայրապետ որ աւզնական եղեւ մեզ ի թղթիս կոկելն : Այլ Եւ զհամուրէն համշիրակ եղրաբրս , որք կան յընթերցումն Ածեղէն տառից Եւ խմասութեւ սու սպասուական հանճարայեղց բարունապետիս Դրիգորի Եւ աւզնական եղեւ մեզ ի յուղուելն զստ : Եւ զամբապեալ անձն իմ զմեղսաներկ զնախառնեալ զրոզս Եւ ծնօղսն իմ ազաչեմ յիշել Եւ զամբենենեան որ աւզնական եղեւ մեզ ի զրելն սարս նաև զառաջին խմասուուէր վարդապետ որ բազում աշխատեցան ի սու :

Արդ զրեցաւ սա բնդ հովանեսու մօրս յւսույ Ածաւծնիս որ կոչի Աւագ անսովոս եւ սքանչելակործ որ Նշանիս :

պ. 1894, 19 հցմ. մատեն. — Առյութ Յուզով
պ. 1852:

Թուղթք՝ 326: — Գրութիւն՝ 12×8 և
13×9 սմ.: — Տողք՝ 24—29: — Նիւթ՝
Հաստ սղորդ թուղթ: — Գիր՝ բոլորդիր.
Վերնադրերն ու սկզբնատառերը կարմիր
թանաքորութեան: — Կաղմ՝ կաշեպատ տախտակ:
— Հանգամանք՝ բաւարար: — Թուական՝
չունի, բայ երեւոյթին ժե—ժԶ դար: —
Գրիչ՝ Գրիգոր և Տրիտուր:

Բովանդակութիւն.

1. Էջ 2 ր. — Ճանկն է վասն այս ար-
տաքին դրդիս այսմիկ:

Նօսր զրոյ օսար դրչէ:

2. Էջ 3 ա—51 ր. — Սահմանք խմա-
ստիրութե: Սոյն վերնադիրը յետոյ ուղ-
զուած է օսար դրչէ այսպէս. Դաւթի փի-
լիսովայի ներդինացւոյ յզգս Սահմանց
խմաստիրութե (պրակք Ա—ԻԱ):

Սկզբը է (Էջ 3 ա). — Որք միանդամ
խմաստիրութե տենչան բանից և առ ի
նմանէ Հեշտութեց ծայրիւ միայն մատին
Հանդիպին ճաշակեալք...: Վերջ (Էջ 51 ր).
— Որոյ զի մի՛ զուտ զիտութի ի կարծեաց
ընկալցուք զի մի չար ինչ զործեսցուք:
Դաւթի եռամեծի և անյաղթ փիլիսովայի
ընդդէմ չարից առարկութեցն Պիհոնի

իմաստակի և սահմանք և տրամատութի
իմաստախրութե մինչեւ ցայս վայր:

3. էջ 51 ր—52 ա. Բնդ այսոսիկ և ա-
ռաջիկա բան իմաստնոյ: Ամ չար տանջելի-
ոչ ոք տանջեալ անապական: ոչ ոք ապա-
կանացու անեղ . . . :

Վերջ (էջ 52 ա) . — Եւ ը բամբասա-
հաւք է սանյ, առ որ ո՛չ է անեղ:

4. էջ 53 ա—63 ր . — Ներածութի Պոր-
փիւրի:

5. էջ 63 ր—120 ր . — Դաւթի փիլիսո-
փայի Ներգինացւոյ, Վերլուծութի Ներա-
ծութեն Պորփիւրի: (Պրակք Ա—ԻԹ + Յզոս
Հասարակաց սեսից և տարրերութեց առջկ
տեսութի):

6. էջ 121 ա—130 ր . — Մեկնութի
բանից Դաւթի փիլիսոփայի, որ ի կատա-
րումն նորին տասի որ վա սհմնաց իմաստ-
ութե, ասացեալ Տն Ներախսի Կթեկի Հայոց
ի խնդրոյ ումեմն Ստեփաննոսի սիրադի
իմաստութե:

Սկիզբն է (էջ 63 ր) . — Զինդիր Հո-
գեւորական Հուասով և սիրով Հայցողաց
պարտիմք տալ յօժարութիր ըստ Հրամանի
Տն . . . :

Վերջ (էջ 130 ր) . — Այլ մեք զի սւնիմք
զայսոսիկ շնորհեալ յԱյ յառնել ի մեռ-
լութենէ Հովոյ խոստովանութիր և արտա-
սուօք՝ զոհութի շնորհողին մասուցուք և

մատք այժմ եւ յաւիտեանս յաւիտենից
ամէն :

7. կջ 131 ր. — Յունարէն իմաստասի-
րական չւշդրութ և այլ բառերի թարգմա-
նութիւնը օտար պրչէ և մի հասուած՝
«Զի՞նչ է պատճո ուղղամձեւ զորյ մզոյս

III. Կատալորիսս. Խովեսիամէնիսս.
Անալոտիկի. Ապօդիկատիկի. Դիալիֆատիկի:
Կատալորիսս. Խովեսիամէնիսս. Անալո-
տիկի. Ապօդիկատիկի. Ստորովութիք. Յողզ
մեկնութեւ. Վերլուծական. Ապացուցական.
Դիալիֆատիկի. Կատավասսիս. Ապովասէս.
Ապովանէս. Պրատա[սիս]. Շարարանու-
թի. Ստորասութի. Բացասութի. Բացե-
րեւական. Նխզութի. :

թ. Զի՞նչ է պատճո ուղղամձեւ զորյ
մզոյս. Իսլ տարակոյն երիւք լուծանի՝ կմ
զրոց վկաւթը կմ բնական քննութը կ մասց
անսութը։ Դիրք ասէ թէ ուղիղ է Տր Աձ մեր
ևս ևւ թէ արար Աձ զմզն ի պատկեր իւր՝
այսինքն ուղիղ։ Եւ ըստ բնականին դի բաշ
կենդանիքը անհատասար ունին զտարերք-
որով թուչունք զօդոյ մասն առաւել ևւ
ձկունք՝ զջուր ևւ այլք զերկիր, իսկ մզ հս-
տուար ըստ նիւսացոյն ևւ դհրոյ մասն Հո-
լով քան զայլոցդ զի նոքա պակաս ունին ևւ
հուրն վերաշարժ է որ միշտ ի վեր կու ձզը-
տեցնէ ևւ ուղիղ կազմէ ընդ իւր զայլ տա-
րերով։ Խոկ ըստ անսութի զի որով կազմար

որ զինչեւէ նիւթ ի վր իւր ձեւոյն կու կերպացնէ որով եւ ինքն է նմանասպ հոգին բանակառն որով կաղպար է եւ զնիւթ մրինն ի յարդանդ մօրն ի վր իւր կու անձնաւորէ տապացնէ որով տեսանեսդ ուղղակի եւ ի վրհայեաց . եւ օրինակ քեզ որ զինչ ախտ որ կրէ հոգին որ է կաղպար նա կու ցուցանէ ի մրմինն որով տրամութի , րկութի , հպարթի , ցանկութի :

8. Էջ 132 ա—217 ա . — Ստորոգութիք Արիստոտէլէ (մեկնուրիմ) :

Սկիզբն մեկնութեան (էջ 132 ա) . — Համանունութի լինի ըստ երկուս յեղանակս ըստ ուստահման կամ մտածութի . մտածութի ըստ ուստուոյ , ըստ յիշատակի , ըստ յուսոյ , ըստ աղօթից , ըստ կերպարանի , ըստ նմանութեն :

Վերջ (էջ 217 ա) . — Քզի էր սահման սեռին որով տասցու զյուլովից եւ զտարքերեցելոց տեսակաւ ի ներումզինչէն ստորոդեալ : Կատարեցաւ սկսեալու ի մէնջ դրել տասն ստորոգութիսն ասացեալ յետամեծէն Արիստոտէլէ , որ ասի ըստ յունարէն ձայնի կատիլօրիաս , թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւթէ Ներգինացւոյ :

9. Էջ 217 ա—280 ա . — Սկիզբն եւ նախադրութի պրոցն որ ասի ըստ Յունաց Պերփարմէնիաս եւ Հայերէն Յզզու մեկնութի : Արտադրեալ ի մեծ իմաստոյն Արիստոտէլէ , թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւթէ :

- * Ակիդրն մեկնութեան (էջ 217 ա) . — Եստեցաւ մեզ երբեմն , եթէ է ամենայն բանական իրողութեան այսորիկ ակնկալութիւն տուապացուցական շարարանութիւնն հասանել : Վերջ (էջ 280 ա) . — Քղի ամենայն ուրեք սովորեց իմաստատէրս յղդս պիտանացին գիտութիւն սերմանել իւրոց լսողացն :

10. Էջ 281 ա—297 ր . — Արիստոտէլի իմաստատիրի թուխթ առ Աղէքսանդրոս թագաւոր , Պատմութիւն յղդս աշխարհաց .

11. Էջ 297 ր—301 ր . — Արիստոտէլի , Յղդս առաջինութեց առ Աղէքսանդրոս թագաւոր :

12. Էջ 302 ա . — Արիստոտէլէս արագդիրացի էր ի Քամշկիթ զաւառէ եւն (Հմմա . թ . 1889) :

13. Էջ 303 ր . — Որք յանդիմանեացէ ի ձէնջ վս մեղաց . դ մեղք են . ա . բնական . բ . մահուչափ . դ . եկական (°) . . . :

Վերջ . — Որով սա մզէն թէ կամիմ զի ամ մդ կեցցէ եւ ի գիտութիւն ճշմարտութեւ եկեացէ :

14. Էջ 305 ա—312 ր . — Գիրք ի զերբնութեւ հանրական եւ մասնական , քհի ուժեմն աշխատել Խշաւիս անուն Ցէ[սու] :

Ակիդրն է (էջ 305 ա) . — Խնդիր վս բնութեւ այսպիսի արասցուք : Յորժամ զոյացոյց Ած զէսս յոչէից՝ տեղի բնակութեւ կազմեաց զաշխարհ ձեղուամբ երկնից յօրինել :

Վերջ (էջ 312 ր) . — Եւ իսկո՞ն ի լ առ .
մէջն մինչեւ ի կ-ն , և անոնի յատաշ պակա-
սիլ սկսանի . և քի այ որ առնէ այս ի (")
կարգամք վասք և :

Էջ 312 ր . — Նոյնու և այլոց կենդանեաց
Հո բնութին զպէտա պատշաճաւորա՝ զպա-
նաց և թոշնոց , անսանոց և սողնոց :

Վերջ (էջ 313 ա) . — Եւ ինչ ոչ զտանի
յարարածո՝ զոր ոչ խնամէ բնութին , բայ
իւրչ իւր պիտոյից և զգուշութե :

15. էջ 313 ա . — Նորին ասացեալ զո
համոց :

Սկիզբն (էջ 313 ա) . — Յայտնի են է .
ա . փոթոսին , ը . թթուն , զ . քաղցրն , դ .
զառն , ե . աղին , զ . կծուն , է . անլին և ան-
համն և զէրն :

Վերջ (էջ 313 ա) . — Խարսկաչ մազնն
պարզմազն անսանէ և հեծեալո :

16. էջ 313 ր—322 ր . — Դաւթի փիլիսո-
փայի , Գիրք էակաց :

Սկիզբն է (էջ 313 ր) . — Ի քանիս բա-
ժանի էակն կամ յո՞րս : — Երկակի . ի դոյա-
ցութի . և ի պատահումն :

Վերջ (էջ 322 ր) . — Եւ այլք այսպիսիք
ողնելի է բան անսահմանի ևնթաղտանելով
հազարչեռ :

17. էջ 322 ր—324 ր . — Նկատումն Ա-
րիստանէլի :

Սկիզբ (էջ 322 ր) . — Ուսուցանէ մեզ ի

բանալսութեցն այնոցիկ, որ Հասարակաց
ընականոց գոյանան եւն :

Վերջ (էջ 324 ր) . — Եւ այսք լուր որք
ոչ ումեք այլոց արարածոց բնաւորեցու
պատշաճիլ, բց միայն միայնում Այ, եւ նմա
միայն տալ է պաշտօն Քի, եւ նմա վասոք
յախուեանս ամէն :

18. էջ 324 ր—326 ա . — Բնութի է զօ-
րութի Հրամանատուի յլնթանուր Հոգ-
ուոյն . . . :

Վերջ (էջ 326 ա) . — Զի պատ հանձ բնող
բանականութինն է, որ է յէութէնէ մզոյն :

19. էջ 326 ր . — Հարցեր ու պատու-
խաններ խմաստասիրական բովանդակու-
թիւնով : Գրեթե աւրուած ու զժուար բն-
թեոնիլ :

Յիշատակապրաւրիսի

1. էջ 58 ր . բնազրի զրչէ .

Յիշէ զԳրիզոր զբող սորայ :

2. էջ 120 ր . Պորփիրի Ներածութեան
մեկնութեան վերջում, նոյն զրչէ .

Յիշևսիք դմէղ յազօթս ձեր :

3. էջ 131 ր . Ներսէս Շնորհալու՝ «Աժե-
նոյն չար տանջելիք Հասուածի մեկնու-
թեան վերջում, նոյն զրչէ .

Յիշ յազօթս ձեր զմեղուցեալ անձ իւ
զՏրիսուրն . Տրն տա որ չափով որ չափէք
յոլովիւր առնուցուր զփոխարէնն ամէն :

4. կջ 131 ր. մի քանի տող ներքեւ, տար-
բեր գրչէ.

Զ... սարկաւաք յազօթս յիշէ:

5. կջ 326 ր. ձեռադրի վերջում օտար
գրչէ.

Քս Ած ողորմի որ գրողին եւ գնողին եւ
կրտացողին եւ ամենայն հւացելոց կենդա-
նեաց եւ մեռելոց ամէն:



Բ Ա Վ Ա Ր Ա Ն Ի Մ Ա Խ Ա Ր Ա Ծ Ա Խ Ա Ր Ա

Ա. Ներածություն :

	Եջ
§ 1. Յունարան գործոցի ու լեզուի խնդիրը մասի ու խրժին մի տակովուած է	1
§ 2. Յունարան ուղղութեան ընդհանուր բնու- րուսումը	3
§ 3. «Արտաքին» գրեանցը թարգմանութիւն- ները և նրանց ազգեցութիւնը Հայոց Հին- ժամանապրութեան լեզուի, ոճի և բովան- դակութեան վրայ	5
§ 4. Հելլենասէր ուղղութիւնը, որպէս իման ոչխարհանայեցութեան ընդլայնման և ոչխարհիկ գրականութեան դարդոցման . .	8
§ 5. «Արտաքին» գրեանցը բառապաշտը աշ- խարհարար Հայերէնի մէջ և նրա ուսում- հասիրութեան կարեւորութիւնը Հայոց լեզուի պատմական քերականութեան Հա- մար	10
§ 6. Յունարան լեզուի ուսումնասիրութիւնը, որպէս միջոց մատենապրական երկերի ժա- մանակագրական և խմբակցական պառա- ւորման	12
§ 7. «Արտաքին» գրեանցը վերաբերեալ առաջի- կայ ուսումնասիրութեան բովանդակու- թիւնը և նպատակը	15
Բ. Դասիր Անյապին ու Լիլասին վերագրուած մեկնուրիւմների ենդիմակները :	
§ 8. Արխատուէլի իմաստասիրական երկերի, Պորֆիրի Ներածութեան և նրանց վերա- բերեալ մեկնութիւնների Հայերէն թարգ- մանութիւնները	18

§ 9.	Դաւիթ Անդրադիլի ... Նըրա երկերի մասին իմ հասնելին եղբակացութիւնները	292
§ 10.	Էջմիածնի մատենագործունի թիւ 1939 ձեռագրում պահպան Աստրագութեանց Կարագիւռ մէկնաւթիւնները	293
§ 11.	Ա. Բառակի կարծիքով Աստրագութեանց մէկնաւթիւնները Հեղինակը Դաւիթ մէկնաւթիւնները չեղինիւր չէ	294
§ 12.	Ա. Բառակի կարծիքով Ներածութեան ու Աստրագութեանց վերայիշեալ մէկնաւթիւնների Հեղինակների լիցեանք մէկնաւթիւնների հարաբեկ համարել է Այսօպիսուրուն մէկնաւթիւններին	295
§ 13.	Հայոց մատենագրական Հեղինակների պարագաներում Աստրագութեանց մէկնաւթիւնների համարել է Այսօպիսուրուն մէկնաւթիւններին	296
§ 14.	Այսօպիսուրունի վերագրուած համարանակները Արտանեցու Աստրագութեանց լուծմանը մէկնաւթիւնների մէկնաւթիւնները Արտանեցու Աստրագութեանց լուծմանը մէկնաւթիւնների մէկնաւթիւնները	297
§ 15.	Գրիգոր Ասպինարոսի վերայիշեալ Այժմ- ութիւնուրունի ինչ որ աշխատաւթեան Հայե- րէն թարգմանութեան մասին	303
§ 16.	Դաւիթ մէկնաւթիւնների լիցեանքուն Ներածութիւններ յայսնի է եղի իրրե- Այսօպիսուրունի աշխատաւթիւնների աշխատաւթիւններին	312
§ 17.	Հայ մատենագրական աւելուութեան և Ա. Բառակի կարծիքացութեան Հակոբութիւնները կարելի է վերաբերել Անթազրիքով Հեղինակների աւելուութիւններին մէկնաւթիւնների աշխատաւթիւններին	47
§ 18.	Էլիսու-Այսօպիսուրունի միանալին անձնա- բնուանելուց Հարթուուն հետ մի շարք վե- հելի խնդիրներ	15
§ 19.	Աստրագութեանց մէկնաւթեան համարանակը, որ ապագրուած է Էլիսուի Հայերէն Հրա- մատրակութեան վերջուած անյայտ մէկ- նաւթիւն աշխատաւթիւնների Այսօպիսուրունի- ասի դպրոցից	52
§ 20.	Անանունի Աստրագութեանց մէկնաւթեան համարանակը Դաւիթի աշխատաւթիւնները չեն	53
§ 21.	Անանունի Հրիստոնեայ մէկնաւթիւն է աղէս ու թերուու իմաստափական Հարցերուուն	56
§ 22.	Նոր պիտուղութիւններ Արխատակի Վեր- լուծականքի մէկնաւթեան ու Նըրա Հեղի- նակի մասին	59

§ 23.	Վերլուծականքի մեջ կառավարելու համար համարական թիւները Պատմի, Ամսանկառափ և Այլիմ- պիտուղարառ-էլլիտարի մեկնութիւնների Համար	60
§ 24.	Վերլուծականքի մեկնութիւնների առելլի Հա- մարականներ և ընդունել Ոլլիմպիոդորոս-էլլի- պիտի աշխատանքիւն, քանի Պատմի	65
§ 25.	Դաւիթ Անյաղթին վերապրուազ Ասորո- գութեանց և Յազազս մեկնութիւններուց մեկնութիւնները և Նորմեց վերնազրից Հետպայն մեռազբիներում	68
§ 26.	Յազաննեկա Արտանեցու վերայութիւնները Նորմելախան մեկնիչի մասին	71
§ 27.	Դաւիթ Անյաղթին վերապրուազ Ասորո- գութեանց և Յազազս մեկնութիւններուց Հեղինակի Ալմելախանուց անուննե ազգա- անումն և յաւնական Դաւիթը անումն	73
§ 28.	Յամրդիքոսի յիշառաւեկութիւններ Պատմի ու Էլլիտարի մեկնութիւններում	75
§ 29.	Ար Ալմելախանուց և Էլլիտարի յիշառաւեկան Յամրդիքոսը միհետեղ անուն ևն, արդ երեւում է նույն Սուորոպութեանց և Յա- զազս մեկնութիւններուց պրոց մեկնութիւնների բազմութակութիւններ	77
§ 30.	Մի քանի դիսուցութիւններ Ալմելախանուց- Յամրդիքոսի մեկնութիւնների բազմութա- կութիւններ մասին	80
§ 31.	Վելնեայի թ. 112 մեռազրում յիշուած Ալմասնիս Էրմիուրը, կարելի է հեթա- զրել, որ Յամրդիքոսի ուսուցիչ Անատո- լիանն է	82
§ 32.	Նիւթի գառաւորութիւնը և մեկնութեան մեւն ու կարգն Ալմելախան-Յամրդիքոսի մեկնութիւններում	84
Դ.	Առնարանի հետպայն քարզմանութիւնների երեւ շրջանները:	
§ 33.	Խմառասարական Հետպայն մեկնութիւն- ները թարգմանուած են յաւնարէնից	86
§ 34.	Աւուտմեռասիրութեան ինչ հօգանակութ Հաս- տուոր ովուրի լինի Հետպայններ որուշէ յու- նարանն Հետպայն թարգմանութիւնների ժա- մանակը	87

§ 35.	Խմառաստիրական	Պարզմանութիւնների	
	Հետքերը	Առարտովիկի թարգմանչի կրօնա-	
	դաւանաբանական պրուած քենքում	89
§ 36.	Անախիս Եփակացին ոգառէլ և Արիստո-		
	ակէնուն իմաստուիրութիւնն հազարոցին Հայ		
	թարգմանութիւններից	91
§ 37.	«Դիրք թղթոցից» Հնագոյն ժաման Պե- րսի և Դիրդոր քերպողի թղթերը զբու- ած են յանարան լեզուավ	93
§ 38.	Տիմոթէոս Կուզի Հականառութիւնը թարգմանուած և Հայերէն 552—564 թու- կանների ժամանակամիջոցամ	95
§ 39.	«Արտարին զբոց» Հնագոյն երկերը թարգ- մանուած են Հայերէն զանազան թարգ- մանների աշխատութիւնմբ և տարրեր ժա- մանակաշրջաններում	102
§ 40.	Թրակացու քերականութիւնն Փիլոնի և Պիտորից զբոցի թարգմանութիւնների կազ- մում են յանարան թարգմանութիւնների հազարոց շերտը	105
§ 41.	Փիլոնը և Պիտորից զիրքը թարգմանուած և Թրակացու քերականութիւններից յետոյ..	115	
§ 42.	Տիմոթէոս Կուզի Հականառութիւնը, Արիստուկիլի Յազապս մեկնութեան և Սոսորովութեանց թարգմանութիւնները, Յամրդիքոսի մեկնութիւնների Հետ միա- սին, խմբակից են ու ժամանակակից և կողմուած են յանարան թարգմանութիւն- ների երկրորդ շերտը	124
§ 43.	Էսկաց զբոցի յայտնի յիշատակարանը պե- րսորերում և Յամրդիքուն խմբի Արիստո- ստէլի Սոսորովութեանց և Յազապս մեկ- նութեան զրոց թարգմանութեանը	136
§ 44.	Դասիթ-Ռիմպիտպորտի խմբի իմաստու- սիրական մեկնութիւնները թարգմանուած պիտի լինեն յանարան երկրորդ շերտի թարգմանութիւններից յետոյ	142	
§ 45.	Դասիթ-Ռիմպիտպորտի խմբի Հայերէն մեկնութիւնները չեն կարող բոլորն էլ միասին Համարուել միենանց թարգմանչի աշխատութիւն	161
§ 46.	Յունարէն Համանման Համառածների թարգմանութիւնը յանարան զանազան շրջանների թարգմանութիւններում	174	

§ 47. Պորֆիւրի Նեկրոնութեան բնուգրի թարգ-	
ժանութիւնը թուման է թէ առելի հին է,	
քան Դասիթ-Ռիդապիսուսի խմբի թարգ-	
ժանութիւնները	183
§ 48. Արիստոտելի ՀՊատմութիւն յազմակ աշ-	
խարհից զրուած քի Հայերէն թարգմանու-	
թեան Ժամանակաշրջաննը	191
§ 49. Դասիթ-Ռիդապիսուսի խմբի մեկնու-	
թիւնների թարգմանութեան մասնար ժա-	
մանակաշրջանը	196
§ 50. Դասիթ-Ռիդապիսուսի խմբի մեկնու-	
թիւնները թարգմանուած էն, ըստ Կրեսոյ-	
թիւն, Կրկուրնուկ Հայերի միջամայրում	
էւ, ամենայն Համանականութեամբ, ութի-	
բորդ զարից տասն ⁹	202
§ 51. Քրտկացու քերտկանութեան Դասիթի ու.	
Անանունի մեկնութիւնները, Նրանց Հեղի-	
նակները և Տաղման զարացրջանը	210
§ 52. Յունարան գողրոցի զարգացման յարատե-	
չնիթացք Համատառած է Հայոց մատենա-	
զրութեան մի շարք կողմեակի վկայու-	
թիւններով	222
§ 53. Իրենէսոի ԱԲԱՅՅ տառելական զարագու-	
թեանց և ԸՆԿԵՐԸ Հերմուածոց երկերը	
թարգմանուած էն յունարան թարգմա-	
նութիւնների ուսուցին շրջանում	228
§ 54. Նոնեսոսի մեկնութիւնների Հայերէն թարգ-	
ժանութեան Ժամանակաշրջանը	236
§ 55. Մովսէս քերդողանօր թուղթը և Յովհան-	
նու հպիկոպոսապեամ Ապացոյցը զրուած	
յունարան երկրորդ շերտի թարգմանու-	
թիւններից յիւսոյ	246
 Դ. Առելուած :	
ԷՇԻԽԱՆՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՊՐԱՎՈՒԹՅՈՒՆ	
Հեռացոյն մեռագիրների ցուցակը	250

